



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԷԼԻԶԱԲԵԹ ԹԱԶԻՐՅԱՆ

**ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ  
ՀԱՅ ԳԱՂԹՕԶՄԱՆԸ  
17-18-ԲԴ ԴԴ.  
ԵՎՐՈՊԱԿԱՆ  
ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ**

ՄԱՍ

ԵՐԵՎԱՆ 2012

9(47.925)  
P-12

ՀՀ ՍՓՅՈՒՌԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

# ԷԼԻԶԱԲԵԹ ԹԱԶԻՐՅԱՆ

ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՀԱՅ ԳԱՂԹՕԶԱԽԸ  
17-18-ՐԴ ԴԴ. ԵՎՐՈՊԱԿԱՆ  
ԱՐԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ

ՄԱՍ I

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇԿԵԱՆ  
ՄԱՏԵՆԱԿԱՐ  
87



ARCH. MESROB ASHJIAN  
BOOK SERIES  
87

*Mesrob Ashjian*

V

ԵՐԵՎԱՆ 2012



498D

**Տպագրվում է ՀՀ Սփյուռքի նախարարության դրամաշնորհով**

Աշխատությունը հրատարակության է երաշխավորել ՀՀ ԳԱԱ  
պատմության ինստիտուտի գիտական խորհուրդը

Խմբագիր՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վ. Բ. Բարխուդարյան

Թ 120 Նոր Ջուղայի հայ գաղթօջախը 17-18-րդ դդ. եվրոպական  
աղբյուրներում, մաս I / Է. Խ. Թաշիրյան.- Եր.: Պատմ. ինստ., 2012, -  
130 էջ:

17-18-րդ դարերում Արևելք են այցելել բազմաթիվ եվրոպացի  
ճանապարհորդներ, վաճառականներ, հոգևորականներ և միսիոներներ:  
Նրանք զանազան նպատակներ են հետապնդել՝ ճանաչողական,  
առևտրական, եվրոպայի և Արևելքի միջև տնտեսական կապերի ու  
ճանապարհների հաստատման, ինչպես նաև կաթոլիկ-միսիոներական  
ցանցի գործունեության միջոցով «հերձվածող» հանրությանը «դարձի»  
բերելու հեռանկարով:

Եվրոպացիների ուղեգրություններում, նկարագրություններում,  
նամակներում և զեկուցագրերում ծավալուն տեղ է գրավում Նոր Ջուղայի  
հայկական գաղթօջախին վերաբերվող նյութը, որի մասնակի  
ուսումնասիրմանն էլ նվիրված է սույն աշխատությունը: Աշխատության  
երկրորդ ծավալուն մասն իրենից ներկայացնելու է բնագրերի  
ծանոթագրված թարգմանությունները:

Գիրքը նախատեսվում է պատմաբանների և գիտական լայն  
շրջանակների ընթերցողների համար:

ՀՏԴ 941 (479.25)  
ԳՄԴ 63.3 (23)

ISBN 978-99941-73-72-3

© Պատմության ինստիտուտ  
© ՀՀ Սփյուռքի նախարարություն  
© Էլիզաբեթ Թաշիրյան

**ԱՌԱՋԱԲԱՆ**

16-րդ դարից սկսած Արևմուտքի կողմից Արևելքը ճանաչե-  
լու («նվաճելու») հզոր գործընթացը բազմաթիվ դիվանագետներ-  
րի, վաճառականների, միսիոներների և արկածախնդիրների  
ուղղորդեց դեպի Արևելք: Նրանք եվրոպական տարբեր լեզուներ  
ով թողել են ստվարածավալ գրականություն, օրագրություն-  
ներ, զեկուցագրեր, նամակներ, որտեղ ընթերցողը հարուստ  
նյութ կգտնի իրեն հետաքրքրող ամենատարբեր հարցերի վե-  
րաբերյալ:

Հայերի մասին եվրոպացի հեղինակների թողած գրավոր  
ժառանգությունը վերաբերվում է Հայաստանը, Թուրքիան և  
Պարսկաստանն ընդգրկող մի մեծ տարածաշրջանին: Դրանք  
ճանապարհորդական ուղեգրություններ են, միսիոներական  
հանգամանակից զեկույցներ, առևտրա-տնտեսական և սոցիալ  
քաղաքական կյանքի զանազան դիտարկումներ, Արևելքի տի-  
րակալների հետ եվրոպական երկրների կնքած քաղաքական ու  
տնտեսական պայմանագրեր եւ այլն:

Հիշյալ գրականությունը մեզ համար չափազանց հետաքր-  
քիր է օտարազգի տարբեր մասնագիտությունների տեր ան-  
ձանց դիտարկման տեսակետից՝ առանց մոռանալու նաև այն  
հանգամանքը, որ հաճախ դրանց մեջ հարկ է փնտրել հեղինակի  
մոտեցումներն ու շահագրգռության աստիճանը: Այդուհանդերձ  
այս հեղինակները, որքան էլ կողմնակի հայացքով, սակայն մեզ  
հետաքրքրող 17-18-րդ դդ. տարածաշրջանային բարդ իրադար-  
ձությունների, սոցիալ քաղաքական ու տնտեսական հարաբե-  
րությունների ականատեսն ու վկան են եղել: Նրանց թողած դի-  
տարկումներն ու փաստերը հաճախ անկրկնելի արժեք են ձեռք

բերում հայ պատմագրության մեջ դրանց բացակայության պայմաններում:

Եվրոպացիներից շատերը Արևելք էին գալիս իրենց պետական կառույցների հատուկ հանձնարարականներով: Կաճառականներին հետաքրքրում էր տվյալ երկրի առևտրա-տնտեսական վիճակը՝ ի՞նչ կարելի է արտահանել ու ներմուծել, ո՞ր ճանապարհներն են առավել ձեռնտու և անվտանգ և այլն: Դիվանագետներին առավելապես քաղաքական մթնոլորտն էր հետաքրքրում, մանավանդ այդ շրջանում մեծ ջանքեր էին գործադրվում հակաթուրքական կռաւիցիայի ստեղծման ուղղությամբ: Իսկ միսիոներները գալիս էին իրենց երկրների հոգևոր միսիաների ու Հռոմի Պապի որոշակի հանձնարարությամբ՝ արեւելյան բրիստոնյաներին եւ հատկապես «հերձվածող» հայերին կաթոլիկ եկեղեցու ազդեցության տակ ներգրավելու նպատակով:

Աշխատության շրջանակներում մեզ հատկապես հետաքրքրում է Նոր Ջուղայի հայ գաղթօջախի պատմության, ազգագրության եւ մշակույթի վերաբերյալ եվրոպացի հեղինակների վկայությունները՝ Շահ Աբասի կողմից հին Ջուղայի տեղահանումից սկսած մինչև 18-րդ դարի կեսերը:

Այս տեսանկյունից եվրոպացի հեղինակներին կարելի է բաժանել երեք պայմանական խմբի.

1. Հեղինակներ, որոնք ականատեսն են եղել Շահ Աբասի կողմից Ջուղայի 1604-1605 թթ. բռնագաղթին:

2. Հեղինակներ, որոնք նկարագրում են Պարսկաստանի տարբեր տարածքներում և Նոր Ջուղայում հայերի հաստատվելը:

3. Հեղինակներ, որոնք այս կամ այն չափով անդրադառնում են Նոր Ջուղայի հասարակական-տնտեսական, կրոնա-դավանաբանական ու մշակութային խնդիրներին:

Այս հեղինակների մի մասը շատ կարճ ժամանակով է այցելել Նոր Ջուղա, մյուսները՝ ինչպես օրինակ Ժան Բատիստ Թավերնեն և Ժան Շարդենը, մի բանի ճամփորդությունների ընթացքում են գրառել իրենց ուղեգրությունը: Իսկ կան այնպիսիք, ինչ-

պես օրինակ վեդարավորների (կապուցիների) կաթողիկե առաքելության հանրահայտ ներկայացուցիչ Ռաֆայել դյու Մանը, որոնք տասնամյակներ շարունակ բնակվելով Սպահանում, մոտիկից են դիտարկել և լուրջ մասնակցություն են ունեցել գաղութահայ կյանքին: Ավելին, հիշյալ ճանապարհորդներից շատերն են վայելել վերջինիս հյուրընկալությունը և չէին կարող նրա փորձն ու դիտողականությունը չօգտագործել իրենց տրակտատներում:

Առաջին խմբի հեղինակներից կարելի է հիշատակել Գերմանիայի Ռուդոլֆ II կայսեր կողմից Իրան ուղարկված տրանսիլվանացի Կակաշ դե Չալունկեմենիին և Գեորգ Թեկտանդերին<sup>1</sup>, որոնք նախ Ռուսաստանի Ցարի հետ բանակցություններ պիտի վարեին հակաթուրքական դաշինքի մեջ նրան ներգրավելու ուղղությամբ, ապա Իրանի շահի հետ պիտի բանակցեին Եվրոպայի հետ նրա կնքելիք պայմանագրի վերաբերյալ: Ծանապարհին, Էտիեն Կակաշի մահվանից, հետո, Թեկտանդերն է վարում բանակցությունները և մեզ են հասել հենց նրա՝ ուղեգրության նյութերը: Հեղինակը Շահ Աբասի բանակում էր գտնվում, երբ վերջինս գրավում էր Նախիջևանն ու Երևանը: Նրա արժեքավոր տեղեկությունները՝ հայկական բնակավայրերի վիճակի մասին, նրա հանդիպումը Էջմիածնի կաթողիկոսի հետ հետաքրքիր լույս են սփռում ժամանակի իրադարձությունների վրա:

Իսպանիայի թագավոր Ֆիլիպ 2-րդը հակաօսմանյան ճակատ կազմելու ծրագրի իրագործման շրջանակներում Իրանի հետ դիվանագիտական հարաբերությունները սերտացնելու նպատակով 1601 թ. Արևելք է ուղարկում մի պատվիրակություն, որի կազմում էր Ավգուստինյան Հոգևորական Անտոնիո

<sup>1</sup> Iter Persicum ou description du voyage en Perse entrepris en 1602 par ÉTIENNE KAKASCH de Zalonkemeny, envoyé comme ambassadeur par l'empereur Rodolphe II, à la cour du grand-duc de Moscovie et à celle de Châh Abbas, roi de Perse. Relation rédigée en allemand et présentée à l'empereur par GEORGES TECTANDER von der Jabel. Traduction publiée et annoté par Charles Schefer; Paris, E. Leroux, 1877.

դե Գուլվեան<sup>2</sup>: Վերջինս մեծարժեք աշխատություն է հրատարակել նվիրված Շահ Աբասի կյանքին ու քաղաքական գործունեությանը, որի մեջ լուրջ անդրադարձ է կատարել նաև Թուրքիայի դեմ վարած նրա պատերազմական գործողություններին: Նրան ենք պարտական Յին Ջուղայի գրավման և բնակչության բռնագաղթի հանգամանակից նկարագրության համար, որի ակնատեսն է եղել նա, և որի համարժեքը չունենք մեր պատմագրության մեջ:

Յեղիսակների այս խմբի մեջ կարող ենք նշել նաև Իսպանիայի արքայի երկրորդ պատվիրակության (1618 թ.) ղեկավար Գարսիա դե Սիլվա Ֆիգերոային<sup>3</sup>, որը Նոր Ջուղայի Յայերի մասին խոսելիս, ևս անդրադարձ է կատարել նրանց բռնագաղթի հանգամանքներին, մասնավորապես ջուղահայ խոջայական կապիտալի Եվրոպայի հետ ունեցած առնչություններին:

Բոկոտն Կարմելիտների ֆրանսիական միսիայի ներկայացուցիչ Յ. Ֆիլիպի<sup>4</sup> աշխատությունը նույնպես արժեքավոր տեղեկություններ է տալիս Իրանի քրիստոնյա բնակչության վիճակի մասին:

<sup>2</sup> Relation des grandes guerres et victoires obtenues par le roy de Perse Shah Abbas contre les empereurs de Turquie, Mohamet et Achmet son fils. par le P. Fr. ANTOINE de GOUVEA, traduit de l'original portuguais. Rouen, 1646.

<sup>3</sup> L'Ambassade de D. Garcias de Silva FIGUEROA en Perse, contenant la politique de ce grand Empire, les moeurs du Roy Schah Abbas, & une relation exacte de tous les lieux de Perse & des Indes, ou cet Ambassadeur a esté l'espace de huit années qu'il y a demeuré. Traduite de l'Espagnol par Monsieur de Wicqfort, Paris, 1667. Նրա մասին մանրամասն տե՛ս C. Alonso, D. García de Silva y Figueroa: Emba-jador en Persia, Badajoz, Spain, 1993, L. Gil, García de Silva y Figueroa: Epistolario diplomático, Cáceres, Spain, 1989. Յեղիսակն է նաև մար-կիզ Բեդմարին հասցեագրված բավական արժեքավոր նամակների՝ Garciae Silva Figueroa de Rebus Persarum epistola v. Kal. an. M.DC.XIX Spahani exarat ad Marchionem Bedmarii, Antwerp, 1620.

<sup>4</sup> Voyage d'Orient du R.P. PHILIPPE de la Très Sainte Trinité, carme déchaussé, ou il décrit les divers succez de son voyage, plusieurs régions d'Orient, leurs montagnes, mers et leurs fleuves, la chronologie des princes qui y ont dominé, leurs montagnes, habitans tant Chrestiens qu'infidèles, Lyon, 1652, 1669.

Գերմանացի արևելագետ, փիլիսոփա և մաթեմատիկոս Ադամ Օլեարիուսի<sup>5</sup> աշխատությունը (1630-40-ական թթ.) ի շարք այլ պետությունների առևտրա-տնտեսական հարցերի, որի համար էլ նա գերմանական պատվիրակության կազմում մեկնել էր Արևելք, լայնորեն անդրադառնում է նաև Սեֆյան հարստության տնտեսական ու քաղաքական պատմությանը: Այստեղ քիչ չեն նաև Նոր Ջուղայի հայության կենցաղին ու տնտեսական կյանքին վերաբերվող հետաքրքրական տեղեկությունները:

Աշխարհիկ ուղեգիրների շարքը շարունակում է հայտնի ֆրանսիացի ճանապարհորդ Ժան Բատիստ Թավերնիեն (1631-1668)<sup>6</sup>, որը բազմիցս ճանապարհորդելով Արևելք՝ սովորածավալ աշխատություն է թողել՝ տարածաշրջանի համապարփակ ուսումնասիրությամբ ու փաստական հարուստ նյութով: Նրա ճամփորդություններն ընդգրկում են համարյա ողջ Արևելքը՝ ճանապարհ բացելով Բեռնիեի, Թևրոնոյի, Շարդենի համար: Ինչպես ինքն է հրավացիորեն պարծենում իր «Ուղեգրությունների» 2-րդ հատորում (էջ 326) «... արահետ բացեցի ուրիշների համար և Եվրոպայում առաջինը ադամանդի հանքերի ճանապարհը ցույց տվեցի»: Եվ իսկապես, Ֆրանսիայի տնտեսության զարգացման համար նա կարողացավ ցույց տալ Արևելքի հարստությունների և արտադրական ռեսուրսների կարևորությունը: Այս

<sup>5</sup> ОЛЕАРИЙ АДАМ, Подробное описание путешествия Голштинского посольства в Московию и Персию в 1633, 1636 и 1639 годах (пер. с нем. П. Барсов), Москва, 1870.

<sup>6</sup> Les Six Voyages de Jean Baptiste TAVERNIER écuyer baron d'Aubonne, qu'il a fait en Turquie, en Perse, et aux Indes, pendant l'espace de quarante ans, & par toutes les routes que l'on peut tenir: accompagnez d'observations particulières sur la qualité, la religion, le gouvernement, les coutumes & le commerce de chaque país; avec les figures, le poids, & la valeur de monnoyes qui y ont court, Gervais Clouzier, Paris, 1676. Նրա մասին տե՛ս. CHARLES JORET, Jean-Baptiste Tavernier, Ecuyer, Baron d'Aubonne, Chambellan du Grand Electeur, d'après des documents nouveaux et inédits. Paris 1886. Gérard Monfort, Les Six Voyages de J.-B. Tavernier en Perse et aux Indes, Paris, 2004, Les Voyages en Orient du Baron d'Aubonne, Éditions Favre, 2005.

ետնապատկերի վրա ջուղահայության հետ նրա գործնական հարաբերությունները, նրանց կենցաղի, հավատալիքների, տնտեսական վիճակի նկարագրությունը բավական մեծ կարևորություն է ստանում: Այս ամենով հանդերձ, լինելով բավական յուրօրինակ և միաժամանակ ազնվական անձնավորություն, նա համոզված էր. «Աստծո շնորհիվ ես կարողացա լավ հեղինակություն ձեռք բերել, և այդ հեղինակությունն ինձ համար առավել թանկ էր քան Յնդկաստանի ողջ ոսկին ու ակնեղենը»<sup>7</sup>: Չմոռանալ նշել նաև, որ այս սովորածավալ աշխատանքի որոշ հատվածներ Յ. Ռաֆայել դյու Մանի և Յ. Գաբրիել Շինոնի պատմածների ազդեցության տակ են գրվել: Դրանով հանդերձ Թավերնիեի ուղեգրությունը մեծ նշանակություն ունի մեր տարածաշրջանն ուսումնասիրողների համար, այնպես ինչպես մի այլ ուղեգրի՝ ֆրանսիացի ակնավաճառ ժան Շարդենի<sup>8</sup> ուղեգրությունը (17-րդ դ. 2-րդ կես), որը նախորդ հեղինակի նման մի քանի անգամ է եղել Արևելքում և նույնպես բազմահատոր աշխատություն է հանձնել սերունդներին՝ դասական մի տրակտատ, ուր Արևելքը ներկայանում է իր բոլոր գույներով՝ վարչատնտեսական, քաղաքական, մշակութային, ազգագրական անձնահատկություններով:

Շարդենը Թավերնիեի նման հայտնի ակնավաճառ էր և 1665-ին դուրս գալով Փարիզից 15 տարի շարունակ ճամփորդում է այդ «մյուս աշխարհում», որը նրան գերում է՝ ստիպելով սովորել բազմաթիվ լեզուներ: Սկզբում բնակություն է հաստատում Սպահանում, ուր մուտք ունենալով Շահի Արբունիք՝ անվանի ակնավաճառի հեղինակություն է ձեռք բերում: Այդ ընթացքում նա կարողանում է ծանոթանալ նաև տեղի բնակչության, այդ թվում հայերի ավանդույթներին: Յուրընկալվում է

<sup>7</sup> Histoire de la conduite des Hollandais en Asie. Recueil, etc., ch. 1, p. 243.

<sup>8</sup> Voyages de M. le chevalier CHARDIN en Perse et autres lieux de l'Orient. Amsterdam, Jean-Louis de Lorme, 1711, 10 vol. in-12. Շարդենի կյանքի ու գործունեության մասին ավելի մանրամասն տե՛ս Dirk Van der Cruysse, Chardin le Persan, Paris, Fayard, 1998.

հարուստ հայ վաճառականներից շատերի օջախներում՝ միջազգային առևտրի տեսանկյունից փոխադարձ շահագրգռությունների շրջանակում: Մեզ հետաքրքրող էջերը նրա աշխատության մեջ բազմաթիվ են և փաստական հարուստ նյութ են տրամադրում բազմակողմանի ուսումնասիրության համար:

Շատ բնորոշ են Շարդենի խոսքերը ճանապարհորդ վաճառականների մասին. «Վաճառականի փառքը նրա քսակի մեջ է, իսկ գիտնականինը՝ նրա գրքերում»<sup>9</sup>: Այս երկուսը լիարժեքորեն համակցված են նրա ստեղծագործության մեջ:

Այս շարքում առանձնանում է 17-րդ դ. կարևորագույն աղբյուրներից մեկը հանդիսացող ժան Թևընոյի<sup>10</sup> ուղեգրությունը: Տիրապետելով տարածաշրջանային մի քանի արևելյան լեզուների, հեղինակը կարողացել է շատ նուրբ դիտարկումներով ու եզրակացություններով, ինչպես նաև տարածաշրջանին վերաբերվող նկարագարողումներով հարստացնել իր աշխատությունը: 2012 թ. ամռանը Հանթինգթոնի ցուցասրահը անդրադարձել է այս հեղինակի 18-րդ դարում արված նկարին՝ որպես Եվրոպայի և Արևելքի միջև քաղաքակրթությունների կամրջի ամենավառ օրինակներից մեկի: Նկատելի, որ սուրճի մշակույթը Թևընոն է ամրագրել Փարիզում ապա Մարսելում:<sup>11</sup>

<sup>9</sup> Dirk Van der Cruisse, op. cit., Résumée, p. 672.

<sup>10</sup> THEVENOT Jean, Relation d'un voyage fait au Levant, dans laquelle il est curieusement traité des Etats sujets au Grand Seigneur ... Paris 1665; Suite du voyage de Levant, dans laquelle, après plusieurs remarques très singulières sur des particularitez de l'Égypte, de la Syrie, de la Mésopotamie, de l'Euphrate et du Tygre, il est traité de la Perse et autres estats sujets au roy de Perse... et aussi des antiquitez de Tchehelminar et autres lieux vers l'ancienne Persepolis, et particulièrement de la route exacte de ce grand voyage, tant par terre, en Turquie et en Perse, que par mer, dans la Méditerranée, golfe Persique et mer des Indes. Paris, 1674.

<sup>11</sup> LECLANT Jean, "Le café et les cafés à Paris (1644-1693)", Annales. Économies, Sociétés, Civilisations, vol. 6, no 1, 1951, p. 1-14.

Հոլանդացի նավաստի Ժան Ստրյուիսի<sup>12</sup>, Իտալացի Ջեմելի Կարերիի<sup>13</sup>, հոլանդացի նկարիչ Կորնեյ լը Բրյուիսի<sup>14</sup>, ֆրանսիացի բուսաբան Պիտտոն դը Տուրնըֆորի<sup>15</sup> աշխատությունները ևս հարուստ նյութ են պարունակում Նոր Զուղայի հայության կյանքի, նրանց նիստուկացի, ծեսերի ու ավանդույթների մասին: Ավելին այս ուղեգրությունները հարստացված են հեղինակների կողմից արված գծանկարներով, որոնք որոշակի մշակութային արժեք ներկայացնելուց բացի մեծ տեղեկատվություն են պարունակում ժամանակի հատկապես մեզ հետաքրքրող գաղթօջախի կենցաղի, տարագի, ավանդույթների վերաբերյալ: Օրինակ շատ տպավորիչ է Բրյուիսի գրքի էջերում պատկերված Սուրբ Խաչի տոնակատարությունը Նոր Զուղայի հայկական գերեզմանատանը, կամ Նոր Զուղայի հայուհու պատկերը՝ տարագի մանրամասն նկարագարդումով և այլն:

Մի ողջ համաստեղություն են կազմում տարբեր ազգությունների և տարբեր հոգևոր առաքելություններին (դոմինիկյաններ, օգոստինյաններ, հիսուսյաններ, վեդարավորներ (կապուցիներ), ֆրանցիսկյաններ, բուկոտն կարմելիտներ եւն) պատկանող հոգևորականների տրակտատները ու փաստագրական ժառանգությունը<sup>16</sup>:

<sup>12</sup> Voyages de Jean STRUYS en Moscovie, en Tartarie, en Perse, aux Indes et en plusieurs autres pays étrangers, Amsterdam, 1681.

<sup>13</sup> GEMELLI CARERI Jean François, Voyage du Tour du Monde, Paris, 1719 (օգտագործել ենք ուղեգրության ֆրանսերեն թարգմանությունը):

<sup>14</sup> BRUYN Cornelis de, Voyages de Corneille Le Brun par la Moscovie en Perse et aux Indes Orientales... on y a ajouté quelques remarques contre Messieurs Chardin et Kempfer. Amsterdam, Wetstein frères, 1718, 2 vol.

<sup>15</sup> TOURNEFORT Joseph Pitton de, Relation d'un voyage fait au Levant par ordre du Roi, Paris, Imprimerie Royale, 1717, 2 vol.

<sup>16</sup> Լատին միսիոներների քանակն Արեւելքում հատկապես մեծացավ Հռոմում 1622 թ. Հավատաստիյուտ ժողովի (De Propaganda Fide) հիմնադրումից հետո (մանրամասն տե՛ս Sacrae Congregationis de Propaganda Fide. Memoria Rerum. 350 anni a servizio delle Missioni. 1622-

Նրանց մեջ հատկապես ակնառու է շուրջ կես դար Սպահանում իր պրոֆեսիոնալ գործունեությունը ծավալող, Ֆրանսիայի, ինչպես նաև Պարսկաստանի արքայական վերնախավի լիակատար վստահությունը վայելող, վեդարավորների միսիայի գլխավոր տեսուչ Ռաֆայել դյու Մանը, որի աշխատանքը 1890-ին հրատարակվեց արեւելագետ Շ. Շեֆերի կողմից<sup>17</sup>:

1995 թ. Փարիզում, որպես *Moyen Orient et Océan Indien XVI-XIX s.* մատենաշարի 9-րդ գիրք, լույս տեսավ հայտնի ֆրանսիացի արեւելագետ Ֆրենսիս Ռիշարի «Ռաֆայել դյու Ման՝ XVII դարի միսիոներ Պարսկաստանում» երկհատոր աշխատությունը<sup>18</sup>, որը պարունակում է շատ կարևոր տեղեկություններ ինչպես արեւելագիտության, այնպես էլ հայագիտության համար: Աշխատության առաջին հատորում («Կենսագրություն. Թղթակցություն») Ֆ. Ռիշարը մանրամասն ուսումնասիրել է Ռաֆայել դյու Մանի Պարսկաստանում անցկացրած տարիները, կենսագրական բնույթի բազմաթիվ հարցեր, հրատարակել է նրա ողջ էպիստոլյար ժառանգությունը և կատարել է լուրջ հետազոտություն՝ պարզելու համար դյու Մանի աշխատանքների աղբյուրագիտական հենքը: Վերլուծվել և ցույց են տրվել XVII դարի այն եվրոպական ուղեգիրները, ովքեր այս կամ այն չափով օգտվել ու ազդվել են դյու Մանի աշխատանքներից:

Ժակ Դյուտերտը (պատմագրության մեջ հայտնի որպես Հ. Ռաֆայել դյու Ման) ծնվել է 1613 թ. ֆրանսիական Մանս քաղաքում: Ոչինչ հայտնի չէ նրա ստացած սկզբնական կրթության

1972, Vol. I/1, Rom-Freiburg-Wien, 1971 եւ հատկապես էջ 680-706՝ Josef Metzler, Nicht erfüllte Hoffnungen in Persien հոդվածը):

<sup>17</sup> DU MANS le P. Raphael, Etat présent de la Perse en 1660 (éd. Charles Schefer), Paris 1890.

<sup>18</sup> RICHARD Francis. Raphael du Mans, missionnaire en Perse au XVII s., I. Biographie. Correspondance. II Etats et Mémoire. Moyen Orient et Océan Indien, XVI-XIX s., Société d'Histoire de l'Orient, L'Harmattan, 1995 (Տե՛ս մեր եւ Ս. Կարապետյանի համատեղ գրախոսությունը «ՊԲՀ»-ում, 1996, թիվ 1-2, էջ 364-369):

մասին, ինչպես նաև թե ինչպես է նա մտել Մանսում 1602 թ. հիմնադրված վեդարավորների (կապուցիսների) վանքը: Ըստ Ֆ. Ռիշարի, նա պետք է որ ուսման նպատակով ապրելիս եղած լիներ նաև Փարիզում, որտեղ և ձևավորվել էր նրա անբարյացկամ վերաբերմունքը հիսուսյանների (ծիզվիտների) նկատմամբ: Ռաֆայել դյու Մանը ֆրանցիսկյանների մի ճյուղը հանդիսացող եւ մեծ հարգանք վայելող վեդարավորների (կապուցիսների) օրդեն մտավ 22 տարեկան հասակում: Այս օրդենի հոգևորականները հիմնավոր պատրաստություն ունեին աստվածաբանության և փիլիսոփայության 7-ամյա ուսումնասիրման շնորհիվ, այստեղ հատկապես կարևորվում էին նաև բնագիտական իմացությունները: Ուստի պատահական չէր, որ ինչպես Յ. Ռաֆայելը, այնպես էլ նրա միսիոներ գործակիցները բազմակողմանի զարգացած մարդիկ էին:

Մանսի գավառը, սկսած 1626 թ., հ. Պացիֆիկ դե Պրովենսի (1588—1648) ճնշման տակ որդեգրեց դեպի Արևելք վեդարավորների միսիանների առաքումը: Մի կողմից վեդարավորները նպատակ ունեին իրագործել Զոմբի հետ Արևելքի բրիստոնյա եկեղեցիների միությունը եւ մյուս կողմից, ըստ հրատարակչի, հոգևոր կյանքի եւ ուսման միջոցով «թույլ չտալ իսլամական երկրներում բնակվող բրիստոնեական փոքրամասնությունների անհետանալը»:

Ոչ մի ուղղակի վկայություն չկա Ռաֆայել դյու Մանի Պարսկաստան անցնելու թվականի, կամ անցած ուղու վերաբերյալ: Ըստ Ֆ. Ռիշարի ենթադրության, նա մեկնել է 1645 թ. վերջին կամ 1646 թ. սկզբին: Նախ եղել է Եգիպտոսում եւ մնացել տեղի վեդարավորների մոտ: Դատելով իր իսկ գրությունների թվականներից, նա Պարսկաստան հասավ 1647 թ. և այնտեղ ապրեց մինչև իր կյանքի վերջը՝ 1694 թ.: Պարսկաստանում, շնորհիվ իր գիտելիքների ու Էրոուդիցիայի, օժտված լինելով հզոր խառնվածքով ու լեզուների իմացությամբ, նա կարողացավ երկարատև գործունեության ասպարեզ ապահովել իր համար: Դեկավարելով դեռևս 1628 թ. Յ. Պացիֆիկի կողմից հիմնված Սպա-

հանի միսիան, նրան հաջողվեց նույնիսկ դառնալ պարսից շահերի անձնական թարգմանը և որպես այդպիսին մասնակցեց համարյա բոլոր եվրոպական դեսպանությունների կամ անհատ անձանց հետ շահերի բանակցություններին ու զրույցներին: Սկզբում վայելում էր շահ Աբբաս II-ի, այնուհետև՝ շահ Սուլեյմանի հարգանքը: Եկեղեցիների միության և Արևելքում բրիստոնյաների պաշտպանության խնդրով Պարսկաստան մեկնած այս հոգևորականը շուտով դարձավ ոչ միայն Պարսկաստանում, այլև ողջ Արևելքում Կոլբերի ծրագրերի իրականացնող գլխավոր անձը, որին հաջողվեց իր ձեռքում կենտրոնացնել այդ բազմականությունն իրագործելու բոլոր թելերը:

Թե ինչպես էր դյու Մանը կատարում իր խնդիրը, կարելի է դատել թեկուզ հենց եվրոպական պետությունների կողմից Պարսկաստանին հակաթուրքական լիգայի մեջ ներքաշելու փորձերի վերաբերյալ փաստերից: Վեդարավոր հոգևորականը, որի ձեռքի տակով անցնում էին եվրոպական միապետների բոլոր նամակները, այդ փորձերի «ակամա վկան էր»: Կեմպֆերին ուղղած իր բազում նամակներում եւ հատկապես 1685 թ. հունիսի 30-ի նամակում, նա շեշտում էր, որ իզուր են բրիստոնյա տերությունների եւ հատկապես Լեհաստանի ջանքերը հակաթուրքական կռաւիցիայի մեջ Պարսկաստանի գինյալ մասնակցությունը շահագրգռելու գործում: Դեռևս Սեբաստիան Կնաբը՝ 1682-1690 թթ. Նախիջևանի Զայ կաթոլիկների առաջնորդը, իր նամակներում նկատել էր Յ. Ռաֆայելի կանխակալ վերաբերմունքը հակաթուրքական լիգայի ստեղծման նկատմամբ: Վեդարավորը ողջ ուժով աշխատում էր այդ ծրագրի դեմ, քանի որ այն կվնասեր իր երկրի՝ Ֆրանսիայի շահերին: Ըստ Ս. Կնաբի, դյու Մանը անմիջական սերտ կապերի մեջ էր պարսից արքունիքի բարձրաստիճան գինվորական պաշտոնյաների եւ թագավորական քարտուղարի հետ, որոնք օսմանյան լրտեսներ էին պարսից արքունիքում: Ֆ. Ռիշարն ընդունում է, որ գուցե Կնաբի վերաբերմունքը ծայրահեղ է, բայց ինչ վերաբերվում է Յ. Ռաֆայելին, իրոք հայտնի է, որ վերջինս 1686 թ. Պոլսի ֆրանսիական դեսպանին գեկուցել է հա-



կասումանյան ճակատ ստեղծելու նպատակով Սպահան եկած դեսպանությունների մասին (տե՛ս հտ. 1, փաստաթուղթ 35): Ուշագրավ է, որ դեսպանն իրավունք ուներ այս մասին տեղեկացնել նաև թուրքերին: Վեղարավորն արքունիքում ունեցած իր փորձով գիտեր, որ Պարսկաստանի մասնակցությամբ լիզա ստեղծելու փորձը իրականանալու ոչ մի գործնական հավանականություն չուներ: Ըստ Ֆ. Ռիշարի, նրա լռությունը բացատրելի է որքան նրա զգուշավորությամբ, նույնքան էլ Լյուդովիկոս XIV-ին ծառայելու նրա ցանկութեամբ:

Սպահանում Յ. Ռաֆայելի գործունեության բացահայտմանը զուգահեռ Ֆ. Ռիշարը մանրամասնորեն քննարկում է Սպահանի և նրա արվարձանների բնակչության էթնիկական և դավանական կառուցվածքը՝ զետեղելով նաև Սպահանի եւ արվարձանների բրիտանոյա բնակչության (հայեր, ասորիներ, վրացիներ, հակոբիկյաններ, ինչպես նաև գեբրեր, և այլն) էթնիկական բարտեզը: Գրքում մանրամասնորեն լուսաբանվում է շահ Աբաս 1-ի կողմից հայերի բռնագաղթից հետո Նոր Ջուղա քաղաքի ու նրա թաղերի ձևավորումն ըստ բռնագաղթված բնակավայրերի:

Ֆ. Ռիշարը, խոսելով Սպահանում եվրոպական միսիանների (կապուցիների, կարմելիտների, ֆրանցիսկյանների, հիսուսյանների եւ այլն) հաստատման մասին, անդրադառնում է նաև հայ բնակչության մեջ էթնոդավանական գործընթացներին, մասնավորապես Փերիայի, Բուրվարի դաշտի հայկական գյուղերի իսլամացման և կաթոլիկացման փորձերին: 1621 թ. օգոստոսին շահը հայտնի շեյխ Ամելիի դրոմամբ որոշեց պարտադրել Փերիայի բոլոր հայերին (Սկանդերիա (Էսկանդարի), Բուրվարի և Փարչուս գավառներից) իսլամ ընդունել: Շատ բողոքներից հետո հայերը հասան այն բանին, որ շարունակեն ազատորեն հետևել իրենց կրոնին և Սպահանի կարմելիտները քիչ անց եկան իրենց միսիան հիմնելու: Վավերագրորեն հայտնի է, որ Փերիայում կար 44 գյուղ, կենտրոնական Շահ Բուլակ-Է-Արամենե բնակավայրով: Ենթադրվում է, որ այս գավառում էր գտնվում նաև Շուրիսկան (Սուրիշկան) գյուղը՝ Դարանից 20 կմ

արևմուտք, որն ըստ Յ. Սեն Ժոզեֆի, ուխտավայր էր ինչպես բրիտանոյանների, այնպես էլ մահմեդականների համար «Կարմիլ ավետարանի» շնորհիվ, որը բերվել էր Աղթամարից և պահվում էր գյուղի եկեղեցում: Ի դեպ, պարսիկ հեղինակները ևս պատմում են այս իրադարձությունների մասին: Ըստ Նրանց (տե՛ս օրինակ՝ Իսկանդեր բեկ Մունշի) հայ բրիտանոյանների մի խումբ Ֆարիդունի և Բախտիարի տարածքում, ուր նրանք զբաղվում էին երկրագործությամբ, իսլամն ընդունելու «շտապ հրավեր» ստացավ: Իրենց ծանր կյանքի պատճառով նրանցից ոմանք ենթարկվեցին շահի հրամանին: Վե՛ճ առաջացավ եկեղեցին մգկիթի վերածելու շուրջ, հայ հոգևորականները ճնշում գործադրեցին որոշ հայերի վրա նրանց արգելելով իսլամանալ: Հավատափոխներից «հանեցին» ավետարանը և նրանց ուսուցիչներ տվեցին Դուրանը ուսուցանելու համար:

Հարկ է նկատել, որ Բուրվարի դաշտն ուներ հայ գաղթականներով բնակեցված բազում գյուղեր: 1746 թ. մի վիճակագրությամբ դեռևս 4 դաշտ բնակեցված էին հայերով. 21 գյուղ եկեղեցիներով՝ Փերիայում, 17՝ Բուրվարիում, 12՝ Գանդումանում և 9՝ Լանջանում (մի մասն ավերված)<sup>19</sup>: Ֆ. Ռիշարն այս թվերը համեմատում է մոնսիյոր Պալլուի կողմից Հավատասփյուռ ժողովի (Պրոպագանդա Ֆիդե) պրեֆեկտ կարդինալին ուղղված 1662 թ. սեպտեմբերի 19-ի զեկուցագրում մանրամասն տրված Սպահանի բրիտանոյանների թվերի հետ: Չեկուցագրում հաղորդվում է, որ Սպահանում կան երկու կաթոլիկ ընտանիք, նաև ապրում են անգլիացիներ, հոլանդացիներ և միսիոներ հոգևորականներ: Մնացած բոլոր բրիտանոյանները շահի հրամանով ստիպված եղան լքել քաղաքը: Դրա փոխարեն իրար կողքի գտնվող չորս մեծ արվարձանները՝ Ջուղան, Երևանը, Շեխշեբանը եւ Գաբրաբադը՝ բնակեցված են 1/3-ը համարյա միայն հայերով և վերջինը՝ գեբրերով: Ըստ Պալլուի Ջուղայում 8000 մարդ է ապրում, Եր-

<sup>19</sup> Վիճակագրական տեղեկությունները բերվում են ըստ A Chronicle of the Carmelites in Persia, London, 1939, vol. I, p. 644.

ևան արվարձանում 4000, Շեխաբանում 2000: Հայ արքեպիսկոպոսը մի փոխանորդի հետ կառավարում է այս երեք քաղաքները: Իր ենթակայության տակ նա ունի 8 հոգևորական, 80 քահանա և միանձնուհիների մի վանք: Ջուղայում կան մի քանի ֆրանկներ, որոնք ֆրանսիացիներ են: Պալլուն միայն վեց հայ կաթոլիկ ընտանիք է ճանաչում:

Քաղաքից դուրս կա երկու հայկական գյուղ՝ Ջուղային մոտ՝ "Guendenar" և Ջղախոռ՝ „Giagacour": Ի վերջո, Փերիայի լեռներում, մայրաքաղաքից 4-5 օր հեռավորության վրա, կան ավելի քան 80 հայկական գյուղեր՝ մի եպիսկոպոսով, 3-4 ճգնավորով և ավելի քան 50 քահանաներով: Սա մի երկրամաս է, ուր տարվա 6 ամիսը ձյուն է եւ ուր կյանքը դժվար է և միսիոներներին լավ են ընդունում: Այնտեղ տանող ճանապարհի վրա կարելի է գրտնել ևս երկու հայկական գյուղ, որոնց բնակիչների մեծ մասը Նախիջևանի հայ կաթոլիկ արքեպիսկոպոսությունից գաղթեցվածներ են, բայց քահանայի բացակայության պատճառով և մյուս հայերի գալ-գնալու պատճառով միայն 12 ընտանիք են կաթոլիկ մնացել:

Պարսկաստանում Հ. Ռաֆայելի գործունեությունն ուներ հոգևոր-դավանական, քաղաքական և կազմակերպչական ուղղություններ: Շատ եվրոպացիների ուսումնասիրություններում Պարսկաստանի մասին տեղեկությունները և պարսիկ հասարակության նկարագրությունները վերցված են Հ. Ռաֆայելի մեզ հասած կամ մեզ անծանոթ գործերից: Հայտնի է, որ վերջինս հաճախ էր տալիս իր ուսումնասիրությունները եվրոպացի հյուրերին (դը Լալեն, Թեդնո, Տավերնիե, Շարդեն...), որպեսզի նրանք դրանց միջոցով ծանոթանան պարսից իրականությանը և իրենց հերթին՝ ծանոթացնեն եվրոպային: Ֆրենսիս Ռիչարի կատարած աղբյուրագիտական խոր ուսումնասիրությունը լիովին ապացուցում է այս դրույթը: Ավելորդ չենք համարում ստորև նշել եվրոպացի այն ճանապարհորդ-հեղինակներին, որոնց գործերը պատմագրության մեջ համարվում են ստույգ ար-

ժանահավատ, հեղինակներ՝ որոնք օգտվել են Ռաֆայելի դյու Մանի գործերից:

**Ժան Թեդնո.** 1664 թ. Սպահան այցելած Ժ. Թեդնոյին Ռաֆայելի դյու Մանը անկասկած ցույց է տվել իր «Պարսկաստանի պետությունը» աշխատությունը և ծանոթացրել նրան մայրաքաղաքի անցուդարձին: Շատ կետերում Թեդնոյի թողած պատմությունը (Suite du Voyage de Levant... de Jean Thévenot, Paris, 1674) ազդեցություն է կրել դյու Մանի գրառումներից: Դրանք հատկապես այն մասերն են, ուր Թեդնոն նկարագրում է պարսկական պետական կառուցվածքները, կրոնը, մայրաքաղաքը, տների կառուցվածքը, արհեստները:

**Ժան Բատիստ Տավերնիե.** Հաստատվում են Տավերնիեի Պարսկաստանի նկարագրության (Les six Voyages de M Jean-Baptiste Tavernier..., Rouen, 6 vol., 1724) եւ Հ. Ռաֆայելի, L'Etat de 1660"-ի միջև որոշակի նմանությունները: Օրինակ, Պարսկաստանի նկարագրության 6-րդ գլուխը բացող մասը կարող է արտագրված լինել Հ. Ռաֆայելի այս մեմուարից, կամ նրան նմանակող մի այլ աշխատությունից: Ավելին, «6 ճամփորդությունների» 5-րդ գլխի և Հ. Ռաֆայելի 1655 թ. վերագրված «Պարսկաստանի կացության մասին» ձեռագրի, 1674 - 1676 թթ. Pétil-ի կողմից արտագրված մասի միջև շատ մեծ նմանություն կա: Ոչ միայն բառերի ու պարսկական անունների տառադարձումն է միևնույնը, այլև ամբողջական նախադասություններ են կրկնվում: Հիմք կա մտածելու, որ Հ. Ռաֆայելը 1667 թ. մի արտագրություն է հանձնել Տավերնիեին, կամ նրան տվել է արտագրելու իր «Պարսկաստանի պետություն»-ից, որ ավելի ամբողջական է եղել: Տավերնիեի մոտ Մուհամեդ բեգի մասին հատվածը ևս պետք է վերցված լինի Ռաֆայելի դյու Մանից: Դիտարկելով Տավերնիեի «Հայոց հավատքը» գլխի բնագիրը, Ֆ. Ռիչարը գտնում է, որ ընդհանրապես անհնար է այն վերագրել մի հեղինակի, որը չի ներգրավում Պարսկաստանում երկար ապրած և յավատեղյակ միսիոներ: Իսկ այդպիսին կարող էր լինել միսիոներական միջավայրից միայն Ռաֆայելի դյու Մանը:

**Պետրոս Պետիկ.** Սրա մոտ չի երևում, որ իր տեղեկությունների համար պարտական է Յ. Ռաֆայելին, որին նա մեծապես գովում է, ասելով. «Այս մարդը, որ 32 տարի է Սպահանում է, ճանաչված է մեծերի կողմից, երեխաները նրան մատով են ցույց տալիս հրապարակում, որովհետև նա խիստ ժուժկալ ու. աստվածասեր կյանքի հայելին է»: Պետրոս Պետիկն իր «Cehil Sutan...» (Vienna, 1678) հանրահայտ աշխատության մեջ հրապարակում է Յ. Ռաֆայելի նամակը, որն իր ձեռքն անցնելուց հետո այնքան խնամքով պահել էր:

**Շարդեն.** «La description général de la Perse»-ը բազմաթիվ կետերում, նույնիսկ իր շարադրանքի հերթականությամբ հիշեցնում է Յ. Ռաֆայելի «De Persia»-ն: «Սուլեյմանի թագադրությանը» նվիրված գլխի որոշ մանրամասներ ցույց են տալիս, որ նա ծանոթ էր վեղարավորի տեքստերին: Շարդենը պատմում է, որ երբ հյուրընկալվում էր վեղարավորների մեկաստանում, Յ. Ռաֆայելը նրան ծանոթացրել է շատ պարսիկ գիտնականների հետ: Չնայած դրան, ուշագրավ է, որ Շարդենի գնահատանքները, արժեքավորումները շատ տարբեր են Յ. Ռաֆայելի տեսակետներից: Շարդենն իր խոսքը համեմու է հարուստ դիտարկումներով ու դատողություններով, որոնք հատուկ չեն վեղարավորին: Շարդենն իր աշխատությունը հրատարակեց 1686 թ.՝ վերջնականապես ընդունելով ռեֆորմիստական գաղափարները: Շիա Պարսկաստանը նա նկարագրում է կրոնական ազատությունների տեսակետից, որն անծանոթ էր կաթոլիկ Ֆրանսիային և որն էլ նրա աշխատությանը հատուկ արժեք է տալիս: Չնայած դա նվազ որոշակիությամբ է երեւում, քան Տավերնիեի մոտ, ընդունելի է, որ Շարդենը, անկախ ամեն ինչից, պարտական է Յ. Ռաֆայելի աշխատանքներին: Իրավամբ Ֆ. Ռիշարդը գտնում է, որ նրանց աշխատությունների համեմատական քննությունը մի հարուստ աշխատասիրության նյութ կարող էր լինել: Ուշագրավ է, որ իր ձեռագիր տեքստում Շարդենը կաթոլիկ միսիանների մասին այլ դատողություններ է անում, քան հետագայում իր աշխատության հրատարակության մեջ: Իր նա-

խորդների աշխատանքների մասին Շարդենը գրում է. «Ես կարդացել եմ, թե ինչ են գրում Տավերնիեն և Թելընոն իրենց ուսումնասիրություններում: Ես շատ ճիշտ եմ գտնում նրանց գրածը, որ երկուսի մոտ էլ միևնույնն է: Եվ այլ կերպ չէր էլ կարող լինել, քանի որ երկուսն էլ իրենց մեմուարները վերցրել են նույն աղբյուրից՝ վեղարավոր Ռաֆայել դյու Մանից, որին արդեն 40 տարի է Սպահանից անցնող բոլոր ազգերի հետաքրքրասեր ճամփորդները պարտական են այն ամենով, ինչ ամենաարժեքավորն է իրենց գրվածքներում»:

**Ֆրանսուա Պետի դը լա Կրուա.** Ֆրանսուա Պետի դը լա Կրուան ժան Թելընոյի ընկերոջ որդին էր: Նրա հայրը թագավորի արաբերեն և թուրքերեն լեզուների թարգմանիչ-քարտուղարն էր, իսկ նրա եղբայրը մինչև 1718 թ. Փարիզի Սեն ժերմեն դե Պրե բենեդիկտյան աբբայության գրադարանավարն էր: Կոլբերը երիտասարդին Արևելք ուղարկեց համապատասխան գիտելիքներ ձեռք բերելու և հոր գործը շարունակելու նպատակով: Նա Յ. Ռաֆայելին էր բերում Կոլբերի 28. 08. 1673 թ. նամակը: Սկզբնական շրջանում մնալով Ռաֆայել դյու Մանի մոտ, նրանից է ստանամ պարսկերենի և Պարսկաստանի մասին իր առաջին ծանոթությունները: Նա իր աշխատությունը (Journal du Sieur Fr. Petis..., 1694) գրելու ժամանակ լայնորեն օգտվել է Ռաֆայել դյու Մանի օժանդակությունից:

**Ջոն Ֆրայեր.** 1677 թ. Սպահան է գալիս Ջոն Ֆրայերը որպես Յնդկաստանի անգլիական ընկերության բժիշկ: Մնալով այստեղ մոտ 5 շաբաթ, իր 5-րդ նամակում նա անդրադառնում է տեղի լատին հոգևորականներին: «Ես պիտի խոստովանեմ, որ նրանցից ոմանք ոչ միայն սուրբ մարդիկ են, այլ նաև շնորհքով և գիտուն, որպես գլխավոր ունենալով Յ. Ռաֆայելին, մի վեղարավորի, որը նրանց համար օրինակ է ծառայել տարիներ շարանակ և լավ ճանաչված է այս երկրում: Ես պետք է վկայեմ, որ նրանից եմ ստացել լավագույն և հեղինակավոր տեղեկությունները»: Նրա աշխատության հրատարակության (A New Account of East-India and Persia..., London, 1668) մեջ կան դիտարկում-

ներ, որոնք նա մասամբ վերցրել էր Յ. Ռաֆայելի հետ ունեցած գրույցներից:

**Էնգելբերտ Կեմպֆեր.** Պարսկաստանի հետ առևտրական հարաբերություններ սկսելու նպատակով 1679, 1683 թթ. Սպահան ժամանած շվեդական դեսպանության քարտուղար Էնգելբերտ Կեմպֆերը շատ արագ ձեռք բերեց Յ. Ռաֆայելի բարեկամությունը, որը նրան սովորեցնում էր պարսկերեն և ծանոթացնում երկրին: Նրան և Պրիստաֆին Է Յ. Ռաֆայելը հանձնել 1684 թ. իր „De Persia“-ի լատիներեն օրինակը, որը ներկայումս պահվում է Բրիտանական գրադարանում: Կեմպֆերի աշխատության (Engelbert Kœmpfer. Amœnitatum exoticarum..., Lemgo-viœ, 1712) հիմնական աղբյուր է հանդիսացել Ռաֆայել դյու Մանի “De Persia”-ն, հատկապես՝ իսլամի, պարսկական տոների, դասավանդման և գիտությունների, բանակի և պետական որոշ կառույցների մասին հատվածներում: Կան ուղղակի ասացվածքներ, անեկդոտներ (պատմություններ), որոնք բառացիորեն են վերցված: Սակայն Է. Կեմպֆերն ամեն ինչ չէ, որ օգտագործել է, նա, օգտվել է այլ աղբյուրներից ևս, հաճախ Յ. Ռաֆայելի տեղեկությունները ճշգրտված են և լրացված: Իսկ Պարսկաստանի մասին իր ընկալումը շատ ավելի բացասական է քան Յ. Ռաֆայելինը՝ “De Persia”-ի մեջ:

Աղբյուրագիտական այս եթսկուրսը վկայում է, որ, վեղարավոր Յ. Ռաֆայել դյու Մանը, անկասկած մեծ ազդեցություն է ունեցել Սպահան այցելած բոլոր եվրոպացիների վրա: Ֆ. Ռիշարի հավաստմամբ՝ «նա ֆրանսիական իրանագետների նախնին է համարվում իր օգտագործած գունագեղ և հումորով հագեցված լեզվով՝ որպես «Ռիշելյոյի դարաշրջանի» մի մարդ»:

Ներկայացվող աշխատության առաջին հատորի երկրորդ բաժնում հրատարակված են Յ. Ռաֆայելի 1659 – 1694 թթ. նամակներն ուղղված ժամանակի քաղաքական ու կրոնական գործիչներին՝ Պուլեին, Բաբունին, Սիլվեստր Սենտ-Էնյանին, Ֆերմանելին, Կոլբերին, Գազիլին, Պետիկին, կարդինալ Ալթիերին, Շար-

դենին, Ռեզենին, Յ. Ուրբանոս Փարիզեցուն, Կեմպֆերին, Իվ դը Բուրժին, հայ կաթոլիկ գործիչ Գրիգոր Ծործորեցուն և այլոց:

Աշխատության երկրորդ հատորը ընդգրկում է Ռաֆայել դյու Մանի “Estats et Mémoire”-ը, ուր մտնում են 1660 թ. շարադրած “Estats de la Perse”, “Mémoire sur les Jésuites” գրված 1662 թ. վերաշարադրված “Estats de la Perse” և 1684 թվականով թվագրված “De Persia” գործերը: Ռաֆայել դյու Մանն իր հայտնի “Estat de la Perse” աշխատությունը (որի ձեռագիրը 1682-1683 թթ. մինիստր Կոլբերի անձնական գրադարանում էր) սկսեց գրել 1660 թ.: Որ այս ձեռագիրը, ըստ հրատարակչի, հրատարակության համար չէր նախատեսված, վկայում է այն հանգամանքը, որ այնտեղ բացակայում էր առաջաբանը: Աշխատանքը, հավանաբար, գրվել էր սեփական նախաձեռնությամբ, կամ էլ դյու Մանի վերադասի պատվերով: Ձեռագրի բովանդակությունը խիստ հագեցված է (կարծես հարցարան է լրացվել) Պարսկաստանի քաղաքականության, դավանանքի, գիտության, արվեստի և նույնիսկ ընդերքի մասին տեղեկություններով:

Գիտական բարձր մակարդակով վերահրատարակելով “Estats de la Perse”-ը Ֆ. Ռիշարը ուղղել և շտկել է Ֆրանսիայի Ազգային գրադարանում պահվող ձեռագիրը, որը և արևելագետ-բիբլիոֆիլ Շ. Շեֆերի կողմից 1890-ին հրատարակվել էր ոչ ճիշտ ընթերցումներով: Ծանոթագրություններում հիմնականում օգտագործվել է Գաբրիել Շինոնի արժանահավատ “Relations nouvelles”-ը: 1665 թ. „Estats de la Perse”-ը ըստ էության, 1660 թ. նրա շարադրած տեղեկագրի մեկ այլ խմբագրությունն է, իսկ 1684թ. “De Persia”-ն, նույնի մեկ այլ խմբագրություն է լատիներեն լեզվով:

Ռաֆայել դյու Մանի “Estat”-ն ամբողջովին տարբերվում է տնտեսական և առևտրական նպատակներով գրված այլ հեղինակների “Memoire”-ներից: Նա, բարոյագետի իր սուր հայացքով, նկարագրում է շատ գունագեղ, յուրօրինակ և ամբողջական տեսարաններ՝ պարսկական հասարակության «թատրոնը»:

Համենայն դեպս, վեղարավոր վանականը իր առաջ նպատակ էր դրել ճշգրտել իր բոլոր նախորդների (լա Բուլեյ Լա Գուզի, Ալեքսանդր Զոռոսի, Ադամ Օլշեգերի, Օլեարիուսի և այլոց) հապճեպորեն հաղորդած տվյալները Պարսկաստանի մասին: Չպետք է մոռանալ, որ Սպահանի վեղարավորների միսիան «ծնվեց» շահ Աբբաս I-ի դարաշրջանում, երբ Պարսկաստանը բացվեց Եվրոպայի առաջ, և Գոայի արքեպիսկոպոս Alexio de Meneses-ի կողմից կազմակերպվեց միսիոներների ներթափանցումը դեպի Արևելք, որին նպաստեց նաև Հավատաստիյուն ժողովի (Պրոպագանդա Ֆիդելի) գործունեությամբ ոգևորված Լյուդովիկոս XIII-ի քաղաքականությունը: Սակայն կաթոլիկացման մասսայականության առաջին հույսերը հորս ցնդեցին, երբ Իրանի մասին առաջին ճշգրիտ վկայությունները ստացվեցին: Այս տեսակետից այն տեղեկությունները, որ Պարսկաստանի մասին հավաքեց Զ. Ռաֆայելը, օրինակելի են: Նա հասկանում էր այն բոլոր արգելքները, որոնք խանգարում են ժողովրդի կաթոլիկացմանը: Ֆ. Ռիչարն ընդունում է, որ Պարսկաստանի միսիայի արդյունքը բավական փոքր էր, և ջուղահայերի ակնկալված միությունը Զոռոսի Սուրբ Պետրոսի գահի հետ չիրականացավ և դավանական անտագոնիզմը ավելի կարծրացավ (Զ. Ռաֆայելի կյանքի վերջին տաս տարիները լի էին հայոց հետ բազում կոնֆլիկտներով): Այնուամենայնիվ, ըստ Ֆ. Ռիչարի, դյու Մանը, այլ լատին միսիոներների հետ միասին, կարողացավ եթե ոչ ապահովել հայոց քաղաքական անկախությունը, ապա նպաստել նրա մտավոր և հոգեվոր զարթոնքին, որն էլ սկիզբ դրեց «հայկական վերածննդին»:

Այլ էր դյու Մանի կողմից 1662թ. շարադրված "Mémoire sur les Jésuites"-ի պատմությունը: Եվրոպայում հիսուսյան ժան Մաշոյի կողմից 1659 թ. հրատարակվեց մի «Տեղե-կագիր» ("Relation"), ուր չափազանցվում էր Հիսուսյանների գործունեությունը Պարսկաստանում՝ հատկապես քրիստոնյաներին կաթոլիկացնելու վերաբերյալ: Սա նպատակ ուներ տրամադրություն ստեղծել Հիսուսյանների ընկերությունից դրամական միջոցներ ստա-

նալու համար: Այս եւ սրա նման այլ հրատարակություններ, հայ վաճառականների միջոցով ընկան պարսկահայերի ձեռքը եւ հակառակ ազդեցություն թողնելով՝ շարժում առաջացրին միսիոներների դեմ: Այս իրադարձությունները Զ. Ռաֆայելը շարադրեց իր գրքում 1661 թ.: Գիտենք, որ այդ "Mémoire"-ի ձեռագիրը Զ. Ռաֆայելը ցույց է տվել Շարդենին: Դրան ծանոթ է եղել նաեւ Տավերնիեն:

Ֆ. Ռիչարի այս երկհատոր աշխատության մեջ ընդգրկված բոլոր նյութերը ծանոթագրված են գիտական մեծ իմացությամբ ու բարեխղճությամբ: Ծանոթագրման համար օգտագործված նյութը, քաղված եվրոպական, կարելի է ասել բոլոր խոշոր ձեռագրատներից (Վատիկանի, Պրոպագանդա Ֆիդելի, Բրիտանական գրադարանի, Ֆրանսիայի Ազգային գրադարանի, Փարիզի Արտասահմանյան միսիանների և այլ դիվաններից), վկայում է հեղինակի երկարատև փնտրտուքների մասին: Եթե առաջին հատորում զետեղված նամակները հիմնականում լույս են սփռում դյու Մանի քաղաքական ու դավանական գործունեության վրա, ապա երկրորդ հատորում ներկայացված "Estats et Mémoire"-ը հիմնականում Պարսկաստանում ապրած տարիների նրա ուսումնասիրություններն են:

Նրա տեղեկացվածությունը 17-րդ դարի թուրք-իրանական քաղաքական հարաբերությունների մասին շատ կարևոր է եղել ու բարձր է գնահատվել իր երկրում: Ավելին, բավական է նկատել, որ նրա աշխատությունը շարադրված է եղել հատուկ՝ Լյուդովիկոս XIV-ի արտաքին գործերի նախարար Կուլբերի համար: Լինելով ժամանակի լուսավորյալ անձնավորություններից մեկը՝ դյու Մանը սիրել է գիտությունը, դիտողականության մեծ հմտություն է ունեցել, պրպտող միտք, պարսկական արքունիքում համարյա բոլոր եվրոպական պատվիրակությունների թարգմանն է եղել: Լինելով դիվանագիտական հարաբերությունների կենտրոնում, նա բավական լուրջ նամակագրություն է թողել, որի պահպանված մասը հրատարակվել է Ֆրանսիացի արևելագետ պատմաբան Ֆրենսիս Ռիչարի կողմից 1995 թ.՝

երկհատոր մեծարժեք աշխատության մեջ՝ ներառելով նաև դյու Մանի հիմնական տրակտատն ու կենսագրությունը:

Դյու Մանի աշխատության վերջում կցված են չափազանց կարևոր փաստաթղթեր տարածաշրջանում Ֆրանսիայի կառավարության ներկայացուցիչների զեկուցագրերից և Թավերնիեի հանգամանակից եզրակացությունները Պարսկաստանի հետ Ֆրանսիայի առևտրական հարաբերությունների նպատակահարմարության և ընթացքի մասին:

Միսիոներական ցանցի հայտնի գործիչներից մեր աշխատության մեջ անդրադարձել ենք նաև Ժակ Վիլլոտի<sup>20</sup>, Ֆրանսուա Սանսոնի<sup>21</sup>, Գաբրիել դը Շինոնի<sup>22</sup>, Ֆիլիպ Ավրիլի<sup>23</sup>, Ֆրանսուա Պիկեի<sup>24</sup> և այլոց աշխատությունների համապատասխան հատվածներին:

Պետք է նկատել, որ միսիոներական այս ցանցը, որը բավական լայն տարածում ուներ Օսմանյան Թուրքիայի և Իրանի տարածաշրջանում, բացի իրենց առաքելությունների ներկայությունը հաստատելուց և հոգևոր խնդիրներով ու հոգեորսությանը զբաղվելուց, նաև լրտեսական բավական ծավալուն գործունեություն էր ծավալում: Դրան մենք հասու ենք եղել ոչ միայն հիշյալ միսիոներների թողած աշխատությունների շնորհիվ, այլև այն հարուստ փաստաթղթային ֆոնդերից, որոնք առիթ ենք

<sup>20</sup> VILLOTE Jacques. Voyages d'un missionnaire de la Compagnie de Jesus, en Turquie, en Perse, en Armenie, en Arabie, & en Barbarie. Paris, Jacques Vincent, 1730.

<sup>21</sup> SANSON Francois, Etat présent du royaume de Perse. Paris, 1694. Ou Voyage ou relation de l'état présent du royaume de Perse, Paris 1695.

<sup>22</sup> CHINON Gabriel de, Relations nouvelles du Levant, ou traités de la Religion, du gouvernement et des coutumes des Perses, des Arméniens, et des Gaures... Composés par le P. G. D. C. [Gabriel de Chinon] et donnée au public, par le sieur L. M. P. D. E. T. Lyon 1671.

<sup>23</sup> AVRIL Philippe, Voyages dans divers états d'Europe et d'Asie entrepris pour découvrir un nouveau chemin à la Chine, Paris, 1693.

<sup>24</sup> La vie de Messire Francois PIQUET, Consul de France et de Hollande à Alep. Paris, M. DCC. XXXII.

ունեցել պրպտելու Վատիկանի, Հավատասփյուռ Ժողովի և Ֆրանսիայի Արտասահմանյան միսիաների դիվաններում:

Հիսուսյանների միսիային պատկանող հոգևորական Յուզե Կրուշինսկու «Պատմությունը»<sup>25</sup> ականատեսի ձեռքով գրված արժանահավատ և ժամանակի իրադարձությունները խորությամբ վերլուծող ստեղծագործություն է և վերաբերվում է Իրանը աֆղանական տիրապետության տակ ընկնելու շրջանին: Հեղինակը շուրջ երկու տասնամյակ ապրելով Սպահանում մասնակցել է համարյա բոլոր արքունի բանակցություններին, ավելին՝ կապեր հաստատելով աֆղան պարագլուխների հետ՝ տիրապետել է բավական լուրջ ու գաղտնի տեղեկատվության: Նա ի մոտո է ճանաչել հայերին, քանի որ բնակվում էր Նոր Ջուղայում և ականատես է եղել քաղաքական հիշյալ իրադարձությունների ընթացքում նրանց բաժին հասած դաժան դեպքերին:

Այս առումով բավական մեծ արժեք են ներկայացնում Մամի-Կլերակի «Պարսկաստանի պատմություն»<sup>26</sup> աշխատությունը, կարմելիտների հանրահայտ «Ժամանակագրությունը»<sup>27</sup>, ուր ի մի են բերված ուսումնասիրվող ժամանակաշրջանի բազմաթիվ քաղաքական և հոգևոր գործիչների զեկուցագրերը, որոնք ամենևին էլ վերջին տեղը չեն գրավել իրենց պետությունների քաղաքական դիրքորոշման ու հետագա ռազմավարության մեջ:

Նոր Ջուղայի մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի հայ աղբյուրագիտական նյութը ևս բազմազան է: Չաքարիա Զա-նաքեռցու<sup>28</sup>, Գրիգոր Դարանաղցու<sup>29</sup>, Չաքարիա Ազուլեցու<sup>30</sup>,

<sup>25</sup> Histoire de la dernière révolution de Perse par le Père Y. KRUSINSKI. Tome I-II, Paris 1728.

<sup>26</sup> MAMIYE - CLAIRAC, Histoire de Perse depuis le commencement de ce siècle. Tome I-III, Paris, 1750.

<sup>27</sup> A Chronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the XVIIth and XVIIIth centuries. Tome I-II, London, 1939.

<sup>28</sup> Չաքարեայ Սարկաւազի Պատմագրություն, հտ. Ա-Գ, Վաղարշապատ, 1870:

Սիմեոն Երևանցու<sup>31</sup>, Խաչատուր Ջուղայեցու<sup>32</sup>, և վերջապես Առաքել Դավրիժեցու<sup>33</sup> երկերը մեծածավալ նյութ են պարունակում 17-18-րդ դարերի տարածաշրջանային իրադարձությունների և հայ ժողովրդի պատմության այդ շրջանի զանազան դրվագների վերաբերյալ:

Ժամանակաշրջանն ու պատմական նյութի հետաքրքրությունն անմասն չեն թողել հայ և օտարազգի պատմաբաններին, որոնք բազմաքննությամբ ուսումնասիրություններ են կատարել Նոր Ջուղայի պատմության վերաբերյալ: Լեոյի<sup>34</sup>, Զ. Տեր-Յովհաննյանցի<sup>35</sup>, Ս. Տեր-Ավետիսյանի<sup>36</sup>, Թ. Ավդալբեկյանի<sup>37</sup>, Ա. Յովհաննիսյանի<sup>38</sup>, Տ. Յակոբյանի<sup>39</sup>, Ռ. Կյուլպենկյանի<sup>40</sup>, Մ. Չուլայանի<sup>41</sup>, Զ.

Փափազյանի<sup>42</sup>, Լ. Խաչիկյանի<sup>43</sup>, Վ. Բայբուրդյանի<sup>44</sup>, Լ. Դանեղյանի<sup>45</sup>, Զ. Լ. Չեքիյանի<sup>46</sup>, Շ. Խաչիկյանի<sup>47</sup>, Ի. Բաղդյանց Մաքեաբի<sup>48</sup>, Գ. Գևոնյանի<sup>49</sup>, Զ. Գևորգյանի<sup>50</sup>, Վ. Ղուկասյանի<sup>51</sup>, Ս.

տարակուսիքները տե՛ս Կյուլպենկյան Ռ., Հայ-պորտուգալական հարաբերություններ, Երևան, 1986:

<sup>41</sup> ՉՈՒԼԱԼՅԱՆ Մ., Հայ ժողովրդի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, XIII-XVIII դդ., գիրք Ա, Զաղաքական պատմություն, Երևան, 1990:

<sup>42</sup> «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը», II, Հրովարտակներ, կազմեց՝ Զ. ՓԱՓԱԶՅԱՆ, պր. 1 (ԺԵ-ԺԶ դդ.), Երևան, 1956, պր. 2 (1601-1650 թթ.), 1959; պր. 3, (1652-1731) կազմեց Զ. Կոստիկյանը, Երևան, 2005; պր. 4, (17034-1797), կազմեց Զ. Կոստիկյանը, Երևան, 2008:

<sup>43</sup> ԽԱՉԻԿՅԱՆ Լ., Փափազյան Զ., Յովհաննես Տեր-Դավթյան Ջուղայեցու հաշվեմատյանը, Երևան, 1980:

<sup>44</sup> BAIBOURTYAN V., International Trade and the Armenian Merchants in the Seventeenth Century, New Delhi, 2004.

<sup>45</sup> ԴԱՆԵՂՅԱՆ Լ., Առաքել Դավրիժեցու երկը որպես Սեֆյան Իրանի XVII դարի պատմության սկզբնաղբյուր, Երևան, 1978:

<sup>46</sup> ZEKIYAN B. L., La Colonie Armene del Medio Evo in Italia e le relazioni culturali italo-armene. Venice, San Lazzaro, 1978; Xoga Safar ambasciatore di Shah 'Abbas a Venezia, Oriente Moderno, 58; Gli Armeni in Italia, Rome, 1990. Ad limina Italiae, Ar druns Italioy: In Viaggio per l'Italia con mercanti e monaci armeni, Padua, 1996. Gli Armeni e Venezia: Dagli Sceriman a Mechitar (coll. Aldo Ferrari); Venice, 2004.

<sup>47</sup> ԽԱՉԻԿՅԱՆ Շ., Նոր Ջուղայի հայ վաճառականությունը և նրա առևտրատնտեսական կապերը Ռուսաստանի հետ XVI-XVIII դարերում, Երևան, 1988: Լազարյան Առևտրական ընկերության հաշվեմատյանը (1741-1759 թթ.), Երևան, 2006:

<sup>48</sup> BAGHDIAZT McCabe, The Shah's silk for Europe's silver, The Eurasian trade of the Julfa Armenians in Safavid Iran and India (1530-1750), Atlanta, 1999.

<sup>49</sup> KEVONIAN K., Marchands Arméniens au XVII s., à propos d'un livre arménien publié à Amsterdam en 1699, "Cahiers du monde Russe et Soviétique 16", 1975, pp. 199-244; Numération, calcul, comptabilité et commerce; La société reconstituée, - "Les Arméniens dans le commerce asiatique au début de l'ère moderne", Paris, 2007, 283-389.

<sup>50</sup> KEVORKIAN R. H., Catalogue des "incunables" arméniens (1551-1695) ou chronique de l'imprimerie arménienne. Genève, 1986.

<sup>29</sup> Ժամանակագրություն Գրիգոր վարդապետի Կամախեցույ կամ Դարա-նաղցույ, Երուսաղեմ, 1915:

<sup>30</sup> Չափարիա Ազուլեցու Ուղեգրությունը, Երևան, 1938:

<sup>31</sup> Ջամբռ. Գիրք որ կոչի յիշատակարան արձանացուցիչ, հայելի և պարունակող բնակից որպիսությանց Սրբոյ Աթոռոյս և իւրոյ շրջակայից վանօրեիցն, համաժողովեցեալ և շարադրեցեալ ի Սիմեոն Գաւահար և վշտակոծ կաթուղիկոսէ Երևանցույ, Վաղարշապատ, 1873:

<sup>32</sup> Խաչատուր արեղայի Ջուղայեցույ Պատմություն Պարսից, Վաղարշապատ, 1905:

<sup>33</sup> Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, Երրորդ տպագրություն, Վաղարշապատ, տպ. Սր. Էջմիածնի, 1896:

<sup>34</sup> ԼԵՈՒ, Խոջայական կապիտալ, Երևան, 1934:

<sup>35</sup> ՏԵՐ-ՅՈՎՀԱՆՆԵԱՆՅ Զ., Պատմություն Նոր Ջուղայու, որ յԱսպահան, 3 հատոր, Նոր Ջուղա 1880:

<sup>36</sup> Тер Аветисян С., Город Джуга, Тбилиси, 1937.

<sup>37</sup> ԱՎԴԱԼԲԵԿՅԱՆ Թ., Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1969:

<sup>38</sup> ԳՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հտ. 1, Երևան, 1957:

<sup>39</sup> ԳԱԿՈՔՅԱՆ Տ., Հայերի պայքարը կաթոլիկական միսիաների ասիմիլյատորական ձգտումների դեմ Իրանում (XVII-XVIII դդ.), Արևելագիտական ժողովածու, հտ. I, Երևան, 1960:

<sup>40</sup> GULBENKIAN R., Relações entre Portugal Arménia e médio Oriente, pelo Académico de Número, Estudos Históricas (Academia Portuguesa da Historia), 3 volumes, Lisboa, MCMXCV. Հայերեն թարգմանության անիսնամ հրա-

Աս-լանյանի<sup>52</sup> և այլոց աշխատությունները՝ լինեն դրանք մենագրություններ կամ հոդվածներ, համակողմանի վերլուծության են ենթարկել մեզ հետաքրքրող ժամանակաշրջանն ու Նոր Ջուղայի գաղթօջախի պատմությունը, որն իր գոյությամբ ու գործունեությամբ ոչ միայն մեծ դերակատարություն է ունեցել հայ ժողովրդի պատմության թատերաբեմում տնտեսական, մշակութային և ինչու ոչ, հասարակական-քաղաքական տեսանկյունից իրար շարժապետով հայկական համարյա բոլոր գաղթօջախները, այլև որոշակի՝ և ամենևին ոչ չնչին ազդեցություն է թողել Արևելք-Արևմուտք տնտեսական, մշակութային կապերի ասպարեզում:

Անդրադառնանք ֆրանսիացի հայտնի պատմաբան Ֆերլան Բրոդելի խոսքերին. «... Были ли они связаны все в огромном промежуточном пункте в Джульфе и только в нем? Или же, как я полагаю, существовали другие промежуточные перевалочные пункты? В Польше, во Львове, служившем связующим звеном между Востоком и Западом, небольшая армянская колония – «персы», как их называли, - со своей юрисдикцией, своими типографиями, своими многочисленными деловыми связями господствовала над огромным потоком гужевых перевозок в направлении Османской Империи. Начальники этих перевозок, караван-баши, всегда были армянами. Не этим ли потоком перевозок связывались в единое целое две гигантские арены – ни больше ни меньше, как Запад и Восток – которые держали в руках джульфинские купцы?...»<sup>53</sup>

<sup>51</sup> GHOUGASSIAN V., The emergence of the Armenian Diocese of New Julfa in the seventeenth century, Atlanta, 1998.

<sup>52</sup> ASLANIAN S. D., From the Indian Ocean to the Mediterranean, The Global Trade Networks of Armenian Merchants from New Julfa. Univ. of California press, 2010.

<sup>53</sup> БРОДЕЛЬ Фернан, Игры обмена, (Материальная цивилизация, экономика и капитализм, XV-XVIII вв.) т. 2, Москва, 2007, ст. 144.

Ամենևին տարօրինակ չէ, որ Նոր Ջուղայի ֆենոմենը հետաքրքրել է բազմաթիվ օտար ուսումնասիրողների: Ինչպես Ֆ. Բրոդելն է արժեվորում նրանց դերը Արևելք-Արևմուտք տնտեսական ու մշակութային հարաբերություններում, այնպես էլ բազմաթիվ օտար մասնագետներ քննել են այդ երևույթի ամենատարբեր կողմերն ու ազդեցության ոլորտները համաշխարհային քաղաքակրթության ետնաբեմի վրա: Նշենք նրանցից Կ. Ալոնսոյին<sup>54</sup>, Ռ. Բեկիուսին<sup>55</sup>, Ջ. Պ. Բելինջերին<sup>56</sup>, Բ. Բիաթթաշարիային<sup>57</sup>, Ջ. Կարսվելին<sup>58</sup>, Ա. Կրոելը<sup>59</sup>, Ս. Շոդուրին<sup>60</sup>, Էդ. Յերցիգին<sup>61</sup> և շատ ուրիշների:

<sup>54</sup> ALONSO C., Nueva documentacion inédita sobre las misiones agustinianas en India y en Persia (1571-1609),- Analecta Augustiniana, 33, p. 309-394; El convento agustiniano de Ispahan durante el periodo 1621-1671, Doc. Inédita,- Analecta Augustiniana, 34, 1973, pp. 274-308; El convento agustiniano de Ispahan durante el periodo 1690-1702, - Archivo Augustiniano, vol. LXVII - Num. 185, 1983, p. 141-184; Novismo florilegio documental sobre los agustinos en Persia (1608-1622) - Analecta Augustiniana, vol. L, 1987, pp. 45-119; El P. Simon de Moraes, pionero de las misiones agustinianas en Persia (†1585), - Analecta Augustiniana, vol. LXII, 1979, pp. 343-372; El P. Antonio de Gouvea O.S.A. y la embajada persa de Denzig Beg (1609-1612) - Analecta Augustiniana, vol XXXVIII, 1975, pp. 63-94; A los orígenes de las relaciones entre la Santa Sede y Persia (1571-1572), Miscelanea historiae Pontificiae, vol. 50, Roma 1983, pp.215-229; La Embajada persa de Denguiz-Beg y Antonio de Gouvea, osa, a la luz de nuevos documentos, Archivo Augustiniano, vol. LXIV, 182, 1980 pp. 49-115; Una embajada de Clemente VIII a Persia (1600-1609) - Archivum Historiae Pontificiae, 34, 1996, pp. 7-126; Due lettere riguardanti i primi tempi delle Missioni Agostiniane in Persia,- Analecta Augustiniana, vol. XXIV, 1961, pp.152 - 201.

<sup>55</sup> BEKIUS R., The Armenian colony in Amsterdam in the XVII-XVIII century: Armenian Merchants from Julfa before and after the Fall of the Safavid Empire, London, 2002, (Paper pres. at the conf. "Iran in the Safavid Age").

<sup>56</sup> BELLINGERI G. P., Sugli Sceriman rimasti a Giulfra: Devozione agli ultimi Safavidi? in Gli Armeni e Venezia, Venezia, 2004.

<sup>57</sup> BHATTACHARYA B., Armenian European Relationship in India, 1500-1800, Journal of the Economic and Social History of the Orient 52, p. 62-98. The Book of Will' of Petrus Woskan (1680-1751): Some Insights into the Global



Հայաստանը շրջապատված լինելով Սև, Միջերկրական և Կասպից ծովերով, իր աշխարհագրական դիրքով ծովային և ցամաքային կարևորագույն ճանապարհների խաչմերուկում էր գտնվում: Անկասկած սրանով է բացատրվում այն հանգամանքը, որ հնագույն ժամանակներից սկսած, հայերը ճանաչված էին որպես Արևելքում առևտրով զբաղվող ազգերից մեկը, որոնք կապում էին Միջերկրծովյան աշխարհը Արևելքի հեռավոր երկրների հետ, հարաբերություններ, որոնք պահպանվեցին հաջորդ դարաշրջաններում ևս, որոնք երկրի անկախության ժամանակաշրջանում է՛լ ավելի զարգացան՝ հատկապես Անիի Բագրատունիների (885-1045) և Կիլիկյան թագավորության (1080-1375) շրջանում, երբ բարգավաճում էր Այաս նավահանգիստը:

Ենթարկվելով մոնղոլ-թաթարական և թուրքական նվաճումներին, երկիրը XVI դարում դարձավ թուրք-պարսկական պատերազմների թատերաբեմ: Սա պայմանավորված էր հարևան պետությունների՝ Օսմանյան կայսրության և Սեֆյան Իրանի միջև անընդհատ պատերազմներով, որոնց ընթացքում Հայաստանի քրիստոնյա բնակչությունը ենթարկվում էր դաժան կոլոպուտների, կոտորածների ու բռնագաղթերի: Ի վերջո, 1639 թ. պայմանագրով Հայաստանը բաժանվեց այս երկու կայսրու-

Commercial Network of the Armenians in the Indian Ocean,- Journal of the Economic and Social History of the Orient, 52, p. 67-98.

<sup>58</sup> CARSWELL J., New Julfa: The Armenian Churches and Other Buildings. Oxford, 1968.

<sup>59</sup> KROELL A., Nouvelles d'Hispanhan (1665-1695), Paris, 1979.

<sup>60</sup> CHAUDHURY S., Khwaja Wazid in Bengal Trade and Politics (1740-1760), The Indian Historical Review 26, 1990; Trading Networks in a Traditional Diaspora: Armenian in India, 1600-1800, in Diaspora International Networks: Four Centuries of History, Oxford, 2005.

<sup>61</sup> HERZIG Ed., The Armenian Merchants from New Julfa: A study in Premodern Trade, (diss.), Oxford University, 1991; Commercial Law of the New Julfa Armenians, in, Les Arméniens dans le commerce asiatique au début de l'ère moderne, Paris, 2007.

թյունների միջև: Թուրքիային հանձնվեց Հայաստանի արևմտյան հատվածը, իսկ Իրանին անցավ արևելյան մասը: Սակայն Հայաստանի երկու հատվածներում էլ քրիստոնյա բնակչության վիճակը ծանր էր անկայուն քաղաքական կացության, բազմատեսակ հարկերի, բռնի մահմեդականացման, մշտապես վտանգված կյանքի, պարբերական մանկաժողովների, համաճարակների պատճառով: Սա բնակչության դեպի մոտակա և հեռավոր երկրներ արտագաղթի պատճառ էր հանդիսանում: Այս շրջանում, հիմնականում, ձևավորվեցին Արևելքի և Արևմուտքի հայկական գաղթօջախները:

Հայ վաճառականների և առևտրական կապիտալի առաջին մեծ տեղաշարժը Հայաստանի սահմաններից դուրս կապված է Շահ Աբբաս I-ի տիրապետության շրջանում, 1604-1605 թթ. դեպի Պարսկաստանի խորքերը հայ բնակչության բռնագաղթի հետ: Այդ տարիներին թուրք-պարսկական պատերազմների հետևանքով շուրջ 350-400 հազար բնակչություն բռնագաղթվեց: Արևելյան Հայաստանում այնպիսի քաղաքներ, ինչպես Երևանը, Նախիջևանը, Ագուլիսը, Դաշտը, Աստապատը, Շոռոթը, Մեղրին և հատկապես Արաքսի ափին գտնվող վաճառաշահ քաղաք Ջուղան, ուր բնակվում էին բազմաթիվ վաճառականներ, և որն արդեն XV դ. վերջից առևտրական լայնատարած կապեր էր հաստատել Արևելքի և Արևմուտքի բազմաթիվ քաղաքների հետ, նույնպես բռնագաղթի ենթարկվեց<sup>62</sup>:

Շահ Աբբասն այլ նպատակներ էլ էր հետապնդում: Նախ իր կայսրությունում զարգացնել արհեստներն ու առևտուրը՝ այստեղ պատվաստելով աշխատասեր և ընդմիշտ հարկատու հայ

<sup>62</sup> Այս մասին առավել մանրամասն տե՛ս Պատմություն Առաքել վարդապետի ԴԱԻՐԻԺԵՑԻՈՅ...: ԴԱՆԵՂՅԱՆ Լ., Առաքել Դավրիժեցու երկը որպես Սեֆյան Իրանի XVII դ. պատմության սկզբն-աղբյուր, Երևան, 1978, էջ 81-110; Relation des grandes guerres et victoires obtenues par le roy de Perse Shah Abbas contre les empereurs de Turquie, Mohamet et Achmet son fils. par le P. Fr. Antoine de GOUVEA, traduit de l'original portuguais. Rouen, 1646, p. 341-362.

բնակչությանը, և, Օսմանյան կայսրության տարածքով հայ վաճառականների կողմից իրագործվող միջազգային առևտրի ուղղությունը փոխել դեպի Պարսից Շոց: Ապա Գիլանի և Մազանդարանի շրջաններում զարկ տալ գյուղատնտեսությանն ու մետաքսագործությանը:

Սակայն եթե բռնագաղթված հասարակ բնակչությունը ենթարկվում էր բախտի քմահաճույքներին, ապա Ջուղայի խոջաները, որոնց համար շահը հատուկ պամաններ էր ստեղծել, բացառություն էին կազմում: Ջուղայի վաճառականները, բնակչության մի մասի հետ միասին, հաստատվեցին Սպահանի շրջակայքում և որոշ արտոնությունների շնորհիվ իրենց գործունեությունը շարունակեցին: Այստեղ էլ նրանք հիմնեցին Նոր Ջուղա արվարձանը, որը 17-րդ դարի երկրորդ կեսին ունեցավ մոտ 10-12000 բնակիչ. քաղաքը բաժանված էր թաղերի, որոնք կոչվում էին նախկին բնակավայրերի անուններով՝ Դաշտի, Ջուղայի, Երևանի, Թավրիզի և այլն:

Նոր-Ջուղան XVII դ. դարձավ արևելյան առևտրի մետրոպոլիսներից մեկը, նշանակալից դեր խաղաց հայ-եվրոպական առևտրական հարաբերությունների զարգացման գործում:

Այժմ անդրադառնանք 17-րդ դարավերջի և 18-ի սկզբի եվրոպացի ճանապարհորդներից մեկի շատ հետաքրքիր ուղեգրությանը, որը Շահ Աբբաս I-ի տեղահանումից շուրջ հարյուր տարի հետո այցելեց Նոր Ջուղա և իր ուղեգրության էջերում հանգամանորեն անդրադարձավ այդ գաղթօջախի կյանքի ամենաբազմազան կողմերին՝ հեղինակի տեղեկությունները հնարավորինս համեմատելով XVII դարի այլ ուղեգիրների թողած փաստագրական նյութի հետ:

ԿՈՌՆԵՅ ԼԸ ԲՐՅՈՒԻՆԻ «ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ»  
ՈՐՊԵՍ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐ

Հոլանդացի նկարիչ Կորնեյ լը Բրյուկնը (1652-1726 թթ.)<sup>63</sup> 1677 և 1701-1708 թթ. երկու ուղևորություն կատարեց Արևելք: Առաջին ուղևորության ընթացքում նա անցավ Փոքր Ասիայով, Կիպրոսով, Սիրիայով, Պաղեստինով մինչև Եգիպտոս: Երկրորդ ուղևորության երթուղին Մոսկովյան պետության տարածքով անցնում էր Կովկասով Պարսկաստան, այնտեղից էլ Հնդկաստան: Մեզ առավել հետաքրքրող նրա երկրորդ ուղևորության երթուղին անցնում էր Հաագայից դեպի Արխանգելսկ, այնտեղից էլ Մոսկվա: 1703 թ. նա Պետրոս I-ի հետ ժամանեց Վորոնեժ՝ ծանոթանալու Դոնի նավաշինական արդյունաբերությանը: Նորից վերադառնալով Մոսկվա, նա այնուհետև Վոլգայով իջավ Հարավ՝ Սարատով այնտեղից անցավ Աստրախան-Շամախի-Նիզաբադ-Թավրիզ-Արդեբիլ-Սպահան երթուղով՝ դեպի Հնդկաստան: Հետագային ճանապարհը ևս անցավ նույն երթուղով 1707-1708 թթ. և վերադարձավ Ամստեր-



<sup>63</sup> Նրա մասին տե՛ս М. А. ПОЛИЕВКОВ. Европейские путешественники XIII-XVIII вв. по Кавказу. Тифлис, 1935, с. 83-85.

դամ, ուր 1711 թ. հոլանդերենով հրատարակեց շուրջ 300 փոքրագրապատկերներով հարստացված իր ուղեգրությունը<sup>64</sup>:

Իր ճանապարհորդությունը Կոռնեյ լը Բրյուինս անցավ մի քանի ջուղահայ վաճառականների ուղեկցությամբ: Եթե որոշ դեպքերում դրանով է պայմանավորված հայերի վերաբերյալ լը Բրյուինի տեղեկությունների առկայությունը, ապա հայ գաղթօջախների վերաբերյալ նրա հիմնական վկայությունների համար պարտական ենք առաջին հերթին հեղինակի դիտողականությանը:

Լը Բրյուինս իր ուղեկից ջուղահայ վաճառականներից, որոնց լեզուն իր իսկ հաղորդմամբ, նա «հասկանում էր» (ՇԵ, III, 284), հակառակ հանվանտե հիշատակում է Յուլանդիայից Նոր Ջուղա վերադարձող Յակոբ Դավիդովին (Jacob Davildof) և Պետրոս Արխանգելին (Pierre Archangel):

Ուղեկիցներից առաջինը՝ Յակոբ Դավիդովը (Яков Давыдов), հայտնի է Մոսկվայի Ռուսական Մաքսատնային գրանցման մատյաններից, մի քանի անգամ՝ 1691-1696 թթ. Նոր Ջուղայից Աստրախանով-Վոլգայով-Մոսկվա, իսկ այնտեղից Շվեդիա-Յուլանդիա հում մետաքս փոխադրելիս<sup>65</sup>:

<sup>64</sup> Կոռնեյ լը Բրյուինի «Ուղևորությունը» հրատարակվեց 1714 թ., 1718 թ. (Ամստերդամ) և 1725 թ. (Ռուան, հինգ հատորով) այն երկու անգամ լույս տեսավ Ֆրանսերենով, 1820 և 1837 թթ.՝ անգլերենով: Շատ ավելի ուշ՝ 1829-1830 թթ. եղավ նաև մասնակի ռուսերեն թարգմանություն: Մենք օգտվել ենք հետևյալ հրատարակությունից՝ "Voyages de CORNEILLE LE BRUINE, par la Mos-covie, en Perse et aux Indes Orientales... on y a ajouté quelques remarques contre Messieurs Chardin et Kempfer. Amsterdam, Wetstein freres, 1718. (Այսուհետև ՇԵ եւ համապատասխան հատորն ու էջը):

<sup>65</sup> Армяно-русские отношения в XVI веке. Сборник Документов под ред. В. Парсамяна. Т. I, Ереван, 1953, с. 209-210, 213, 215, 220. Հմտ. Н. Г. КУКАНОВА. Очерки по истории русско-иранских торговых отношений в XVII - первой половине XIX века (по материалам русских архивов), Саратов, 1977. Գրքում զետեղված հավելվածը՝ «Հայ առևտրականների այցելությունները ռուսական քաղաքները 1673-1697 թթ.» (էջ 87, 99):

Լը Բրյուինի երկրորդ ուղեկցին՝ Պետրոս Արխանգելին հակված ենք նույնացնելու Մոսկվայի Մաքսատնային գրանցման մատյաններից հայտնի մեկ ուրիշ ջուղահայ առևտրականի՝ Առաքել Պետրովի (Аракеп Петров կամ Рахвл Петров) հետ, որը ևս 1690-ական թթ. Շվեդիա ("Свейский рубеж") և Յուլանդիա հում մետաքս արտահանող հայտնի վաճառականներից էր<sup>66</sup>: Անհավանական չէ նաև այն, որ Պետրոս Արխանգելը կարող էր լինել մեկ այլ ջուղահայ վաճառական՝ Ավետիք Պետրովը, կամ Ավետիք Պետրոսովը<sup>67</sup>:

Լը Բրյուինին ուղեկցող այս ջուղահայ վաճառականները, փաստորեն օգտվելով ռուսական արքունիքի և Նոր Ջուղայի առևտրական ընկերության միջև 1667 թ. կնքված (1673 թ. վերահաստատված) պայմանագրից, որով նրանց Ռուսաստանի վրայով տարանցիկ առևտրի արտոնություններ էր տրված, հում մետաքսի հերթական քանակությունն էին տարել Յուլանդիա և Շվեդիա:

Լը Բրյուինը Իրան էր մեկնում մի խմբի հետ, որը տասնամյակներ շարունակ օգտվելով Ռուսաստանի տարածքով անցնող Վոլգա-Կասպյան տարանցիկ երթուղուց, յուրացրել էր այդ ճանապարհի բոլոր դժվարությունները և ձեռք էր բերել այն հաղթահարելու որոշակի հմտություններ<sup>68</sup>: Ծանապարհորդության ընթացքում Լը Բրյուինը հաճախ օգտվելով հայ վաճառականների հեղինակությունից, լեզուների և ճանապարհների նրանց

<sup>66</sup> Армяно-русские отношения, т. I, с. 213, 217, 221, 224.

<sup>67</sup> Նույն տեղում, էջ 237, 238, 240:

<sup>68</sup> Բազմաթիվ դեպքեր են հայտնի, երբ եվրոպացի ճանապարհորդները դիմել են հայ վաճառականների միջնորդությանը՝ իրենց գործերը կարգադրելու և ճանապարհային զանազան դժվարություններ հաղթահարելու համար: Հիշատակելի է, օրինակ, լը Բրյուինից մոտ 30 տարի առաջ Աստրախանից Մոսկվա ուղևորվող կաթոլիկ հայր Ֆիլիպ Ավրիլի դեպքը, որին միայն հայ վաճառականների միջոցով է հաջողվում ձեռք բերել ճանապարհը շարունակելու համար անհրաժեշտ համապատասխան անձնագրեր (St' u PHILIPPE AVRIL. Voyage en divers états d'Europe et d'Asie. Paris, MDCXCII (1692), p. 114).

իմացությունից, անընդհատ շեշտում է իր հարգալից վերաբերմունքը նրանց նկատմամբ, վերջիններիս անվանելով «իմ հայերը» (CB, III, 284): Տպավորիչ է հատկապես Լը Բոյուիևի հուզմունքը և վիշտը երբ Սարատովում հիվանդանում և երկու օրից մահանում է Պետրոս Արխանգելը: Նավի ողջ անձնակազմը մասնակցում է նրա հուղարկավորությանը: Պետրոս Արխանգելի դին Սարատովի բլուրներից մեկի վրա հողին հանձնելու արարողությունը Լը Բոյուիևը հանգամանորեն նկարագրում է «Հայկական թաղման ծես» վերնագրի տակ (CB, III, 264-267):

1703 թ. մայիսի 20-ին Լը Բոյուիևը ուղեկցող խմբի հետ միասին ժամանում է Աստրախան: Իր «Ուղեգրության» մեջ նա մանրամասն նկարագրում է քաղաքը, ամրոցը, պարիսպները, շուկաներն ու խանութները:

Եթե տեղի հայկական համայնքի մասին 17-րդ դ. ճանապարհորդները (Ստրյուխս, Ավրիլ և այլն) հիշատակում էին անցողակի, ապա Լը Բոյուիևը անդրադառնում է հայկական թաղամասի տեղադրությանը, հայերի թվին, նրանց խանութների ու առևտրական տան գործունեությանը: Նա խոսում է քաղաքային դարպասներից մեկի մասին՝ «որ կոչում են Priestmiskinske կամ Nette, որը ամրոցի երեք դարպասներից մեկն էր և բացվում էր քաղաքի վրա, շուկայի ("Bazar") կամ Մեծ փողոցի ("Bolsjaulists") դեմ դիմաց, ուր և գտնվում էին ռուսների և հայերի հիմնական կրպակները» (CB, III, 288): Ըստ Լը Բոյուիևի, Աստրախանում 1703 թ. կային շուրջ քառասուն հայ ընտանիքներ, որոնք բնակվում էին Հայկական թաղամասում, որի ծայրին էր գտնվում հայերի քարվանսարան ("Caravanserai"), որը մի ընդարձակ վայր էր՝ շրջափակված մի քանի դռներ ունեցող քարաշեն պարսպով: Դռները պահպանվում էին պահակների կողմից: Ներսում էին գտնվում վաճառականների կրպակները, պահեստները, բնակելի կացարանները, ինչպես նաև գլխավոր շինությունը՝ երկհարկանի, երկար միջանցքներով: «Երթևեկող հայ վաճառականները այստեղ սենյակներ են վարձում, կան նույնիսկ այնպիսիք, որոնք այստեղ ապրում են և կրպակներ ունեն, ես ևս նրանց հետ

մնացի»,- հաղորդում է Լը Բոյուիևը (CB, III, 297): Խոսելով այն մասին, որ հայ վաճառականների հետ մրցակցության մեջ գտնվող հնդիկները, զգուշանալով հրդեհներից, կառուցել են տվել մի քարաշեն առևտրական տուն, Բոյուիևը ավելացնում է, որ «Հայերը ևս կառուցել էին տալիս նմանատիպ մի առևտրական տուն, որի հիմքերն արդեն վեց ոտնաչափ բարձրացել էին» (CB, III, 297):

1706 թ. հայկական առևտրատան մոտ կառուցվեց նաև քարաշեն եկեղեցի<sup>69</sup>:

Աստրախանից նավով դուրս գալով Կասպից ծով, Լը Բոյուիևն իր խմբով 1703 թ. յուլիսի 23-ին ափ է իջնում Նիզովայա կամ Նիզաբադ ("Nisawacy") նավահանգստում, ուր նրա ուշադրությունն են գրավում դեպի Աստրախան միաժամանակ ուղևորվող 6 նավեր, «որոնց վրա բազմաթիվ հայ վաճառականներ կային իրենց ապրանքներով» (CB, III, 476):

1703 թ. օգոստոսին Լը Բոյուիևը ժամանում է Շամախի, ուր հայերը նորաբնակներ չէին և փոքրամասնություն չէին կազմում: Դեռևս 15-րդ դ. աղբյուրները հաղորդում են, որ Շիրվանի կենտրոնում Շամախիում բնակչության մեծամասնությունը հայեր են: Այսպես, 1474 թ. այցելելով Շամախի, վենետիկյան դիվանագետ Ջ. Բարբարոն հաղորդում է, որ Շամախին, որն ուներ չորսից հինգ հազար տուն, «գտնվում է Մեծ Հայքում և բնակիչները մեծ մասամբ հայեր են»<sup>70</sup>:

<sup>69</sup> ГОЛИКОВА Н.. Очерки по истории городов России конца XVII начала XVIII вв., Москва, 1982, с. 14. Աստրախանի հայկական գաղութի հիմնադրման մասին մանրամասն տե՛ս Վ. Ա. Խաչատրյան. Աստրախանի հայկական գաղութի առաջացումը,- ՊԲՀ, 1983, 4, էջ 44-57:

<sup>70</sup> ՀԱՎՈՐՅԱՆ ՀՈՎՀ., Ուղեգրություններ, հտ. Ա. (1253-1532), Երևան, 1932, էջ 199: Ուշագրավ է, որ "Путешественники об Азербайджане" (составил Ямпольский З.), Баку, 1961, т. 1, с. 74) գրքում Ջ. ԲԱՐԲԱՐՈՅԻ տեքստից այս հատվածն առանց որևէ մեկնաբանման, դուրս է թողնվել:

1561 թվականին է վերաբերվում անգլիացի Ա. Ջենկինսոնի վկայությունը, ըստ որի Շամախին «գլխավորապես բնակեցված է հայերով»<sup>71</sup>:

Շամախու հայերի, նրանց սովորությունների ու բարքերի մասին են պատմում Յուզտինյան դեսպանության անդամներից Ա. դամ Օլեարիուսը (1637 թ.) Մանդելսոն, Յ. Ստրյուկսը (1671 թ.) և այլոք: Օլեարիուսի հաղորդմամբ նույնիսկ տեղի խանի զորքերը բաղկացած էին «մեծ մասամբ հայ քրիստոնյաներից»<sup>72</sup>:

1686 թ. Շամախի այցելած ֆրանսիացի հիսուսյան քարոզիչ Ֆիլիպ Ավրիլը Շամախու մոտ 50–60-հազարանոց բնակչության մասին հայտնում է. «Բացի հայերի մեծ թվից, որ կարելի է հասցնել մոտ 30000-ի, կան նաև հնդիկներ, մոսկովիտներ, վրացիներ, հույներ, թուրքեր, չերքեզներ և բազմաթիվ այլ ժողովուրդներ...»<sup>73</sup>:

<sup>71</sup> Английские путешественники в Московском государстве в XVI в. Перевод с английского Ю. В. Готье, Ленинград, 1938, с. 205. Հմտ. Հ. ՀԱՎՈՐՅԱՆ, Ուղեգրություններ, հտ. Ա, էջ 372: "Путешественники об Азербайджане" ժողովածուի կազմողները համարելով այս հաղորդումը սխալ, միաժամանակ այն ծանոթագրել են հետևյալ կերպ, «այսպիսի սխալի պատմական արմատները կարող է լինել այն փաստը, որ 10-րդ դ. արաբ հեղինակների մոտ հայտնի խալիֆայի վարչական միավորներից մեկը (Չայաստան) ընդգրկում էր նաև հայերով չբնակեցված տարածքները: Շամախիում հայերի մեջ կարող էին դասվել հայացված աղվանները և թաթ-գրիգորյանները, որոնք մինչ այժմ բնակվում են Ադրբեջանի Շամախու շրջանի Մադրասա գյուղում» (Նույն տեղում, էջ 476, ծանոթ. 124): Հետաքրքիր է, որ այդպիսի եզրակացությունը ժողովածուի մեջ չի հիմնավորվում ոչ մի փաստական նյութով:

<sup>72</sup> ОЛЕАРИЙ А., Подробное описание путешествия голштинского посольства в Московию и Персию в 1633, 1636 и 1639 годах. Москва, 1870, с. 526. Այս հաղորդումը ևս դուրս է թողնված, "Путешественники об Азербайджане" ժողովածոյում:

<sup>73</sup> AVRIL PH., op. cit., p. 84. Հետաքրքրական է, որ ադրբեջանցի պատմաբան Ս. Աշուրբեյլին իր «Կաթոլիկ միսիոներները Ադրբեջանում 17-րդ դ.» աշխատության մեջ ("Средневековый Восток. История, культура, источниковедение", Москва, 1980, с. 25), անդրադառնալով Հայր Ավրիլի հաղորդմանը գրում է. «Հայր Ավրիլի հաղորդմամբ, Շամախիում, 17-րդ դ.,

Եթե սրան ավելացնենք նաև Էնգելբերտ Կեմպֆերի տեղեկությունները քաղաքի հրեական թաղամասի մասին, ապա կարելի է համեմատաբար լիակատար պատկերացում ունենալ քաղաքի էթնիկական և դավանական կազմի մասին<sup>74</sup>:

Մեկ այլ կաթոլիկ քարոզիչ՝ Մոնիեի հաղորդմամբ, Շամախու շրջանում 18-րդ դարի սկզբին արդեն կային մոտ 60 հայաբնակ գյուղեր<sup>75</sup>:

Ճիշտ նույնանման հաղորդում էր անում Իսրայել Օրին, երբ 1701 թ. ռուսական իշխանություններին յայտնում էր, թե Շամախու բնակիչները «ավելի շատ քրիստոնյաներ են, քան անհավատներ և գավառում էլ քսան վերստ տարածությամբ 1 անհավատների գյուղ կա և 10 քրիստոնյաների, և այստեղից քրիստոնեական օգնությունն ավելի շատ է, քան անհավատների թշնամանքը»<sup>76</sup>:

Այսպիսին էր Շամախու էթնիկ պատկերը, երբ 1703 թ. օգոստոսին լը Բոյուլինս իր խմբով մտավ քաղաք և անցնելով մաքսատունը, իր հայ ուղեկիցների հետ միասին իջևանեց հայկական քարվանսարայում, ուր մի հայ վաճառական առատորեն հյուրասիրեց նրանց (ՇԵ, III, 284):

Խիստ ուշագրավ տեղեկություններ է հաղորդում լը Բոյուլինը դեպի Շամախու շրջակայքում գտնվող Յեդիգումբեթ, կամ Յոթ աշտարակ կոչվող սրբավայրը կատարած իր այցելությունից: «Մենք անցանք հիմնականում հայերով բնակեցված մի քա-

րացի տեղաբնակ ադրբեջանցիներից (? - Է. Թ.) և հայերից, հանդիպում էին նաև հնդիկներ, ռուսներ, վրացիներ, հույներ, թուրքեր, չերքեզներ և այլոք...»:

<sup>74</sup> Die Reisetagebücher ENGELBERT KAEMPERS. Wiesbaden, 1968, p. 45.

<sup>75</sup> Lettres édifiantes et curieuses, écrites des missions étrangères. Nouvelle édition. Mémoires de Levant. T. III, Paris, 1780, p. 14.

<sup>76</sup> Армяно-русские отношения в первой трети XVIII в. Сборник Документов. Под ред. А. Иоаннисяна. Т. II. часть I, Ереван, 1964, с. 209.

նի գյուղերով և ժամը իննի մոտ հասանք Զերքենջ ("Kirkins")<sup>77</sup> բերդի բարձունքի վրա գտնվող և խաղողատունկերով ծածկված մի գյուղ: Այստեղ քարաշեն մի վանք կա՝ Սահակ վարդապետ ("Sahach Viartapeet") անունով սրբի գերեզմանով: Տեղացիներն ասում են, որ նա թուրք մահմեդական ծագում ունի և հավատափոխվելով այնքան է կապվել իրենց դավանանքին, որ դարձել է իրենց սրբերից մեկը: Ապա, դժբախտություն է ունեցել թուրք մահմեդականների ձեռքն ընկնելու, որոնք նրան այրեցին Շամախիում: Այստեղ տոն օրերին մոմ են վառում և ճաշում գերեզմանի կողքին: Քանի որ ես այստեղ էի կիրակի օրը, գերեզմանի մոտ շատ մարդ գտա և ինձ քաղաքավարի ձևով ճաշի հրավիրեցին: ... Այս գյուղը շուրջ 200 ընտանիք ունի, վանքի կենտրոնում մի փոքրիկ մատուռ կա, ուր գտնվում է այդ գերեզմանը և այն առանձնանում է մի փոքրիկ պատով, որի կողքին մի մեծ ընկուզենի է աճում, նրա շուքի տակ էլ մարդիկ նստում են: Այս նույն տեղում առաջներում փոքրիկ մզկիթ է եղել, որը 35 տարի առաջ փլվել է երկրաշարժի պատճառով: Նրա տեղում էլ կառուցել են այս վանքը» (CB, III, 502-503):

1703 թ. հոկտեմբերի 6-ին լը Բոյուհինս իր խմբով Շամախուց ժամանում է Արդեբիլից կես լը հյուսիս գտնվող Զելգերան գյուղը ("Kelgeran"), որն ըստ լը Բոյուհինսի՝ մեծ մասամբ հայերով էր բնակեցված: Գյուղն ուներ երկու «շատ խավար եկեղեցի» (CB, IV, 31): Լը Բոյուհինս այստեղ հաճույքով դրամական օգնություն է ցույց տալիս հանգանակություն հավաքող տեղի հայ քահանաներին՝ Արդեբիլի մոտ գտնվող գյուղերից մեկում Ս. Յովհաննես անունով եկեղեցի կառուցելու համար (CB, IV, 34): Հա-

<sup>77</sup> Զերքենջ գյուղի սուրբ Սահակ վարդապետի ուխտատեղիի մասին տե՛ս ՋԱԼԱԼԵԱՆՑ ՍԱՐԳԻՍ, Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, Մասն Բ, Տփլիս, 1858, էջ 401: Մ. Սմբատեանց. Նկարագիր սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի և միւս վանօրէից և ուխտատեղեաց ... որք ի Շամախույ թեմի. Տփլիս, 1896, էջ 162-168, ԶԻՐՏԵԱՆ Յ.. Շահեկան վիճակագրական ուղեգրություն մը Շամախիի հայոց մասին, «Հասկ», 1960, թիւ 11-12, էջ 448:

մածայն լը Բոյուհինսի, այս գյուղի բնակիչները շատ հպարտ ու վրեժխնդիր բնավորություն ունեն և տեղի կառավարիչն արդեն քառասուն տարի չի կարողանում նրանց հախից գալ: Ստիպված է եղել նույնիսկ նրանց մի մասին Սպահան արտաքսել:

Զելգերանում Սեֆյան շահերի դամբարաններն այցելելուց հետո, լը Բոյուհինս իր խմբով շտապում է Նոր Ջուղա՝ ներկա գտնվելու Ջրօրհնէքի արարողությանը:

Հաղորդելով Շահ Աբբասի կողմից Նոր Ջուղայի հիմնադրման մասին, լը Բոյուհինս հանգամանորեն կանգ է առնում քաղաքի և նրա թաղամասերի տեղագրության նկարագրման վրա: Ըստ նրա, Նոր Ջուղան կազմված էր հին և նոր գաղութներից: Հինը կոչվում էր Soegga և բնակեցված էր հայտնի վաճառականներով, որոնց նախնիները այստեղ էին տեղափոխվել Շահ Աբբասի օրոք: Նոր Ջուղան իր դիրքով ավելի բարձրադիր էր և կազմված էր հետևյալ թաղերից՝ 1) Գյավոաբադ կամ Զոեց (Gaif-rabaet կամ Koetz)՝ բնակեցված հիմնականում տների և գերեզմանների վրա աշխատող քարտաշներով, 2) Թավրիզի թաղը բնակեցված էր ջուլիակներով և կերպասագործներով, որոնց մեջ հանդիպում էին նաև ֆրանսիացիներ, 3) Դաշտ (Toest) կամ Շամշաբադ (Samsja-baet) թաղը բնակեցված էր վաճառականներով և բանվորներով, 4) Երևանի թաղը հասարակ ժողովրդի բնակատեղին էր, 5-6-7-րդ թաղերը կոչվում էին Նախիջևան (Nagt-siewan), Շիախշաբան (Siachsa-baen) և Գասկեցի Kasketsie)՝ նույնպես բնակեցված հասարակ ժողովրդով, որոնցից յուրաքանչյուրը կոչվում էր իր իսկ թաղի անունով (CB, IV, 220-221):

Ըստ լը Բոյուհինսի՝ Հին Ջուղայի թաղը շատ ավելի մեծ էր, քան մնացած բոլոր թաղերը միասին և բնակեցված էր շուրջ 2000 ընտանիքներով, որոնց մեջ էին ամենահարուստ և ամենանշանավոր վաճառականները (CB, IV, 221):

**Եկեղեցիները.** Լը Բոյուհինսի կողմից տրվում են Հին Ջուղայի թաղի ամենանշանավոր եկեղեցիների նկարագրությունը: Ըստ նրա հաղորդման, ամենագլխավոր եկեղեցին «Անապատն էր՝ եպիսկոպոսանիստը»: Խոսքը Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի

մասին է, որի առաջնորդը լը Բրյուկինի այցելության ժամանակ Ալեքսանդր Եպիսկոպոս Ջուղայեցին էր, հետագայում Էջմիածնի կաթողիկոս<sup>78</sup>:

Ըստ լը Բրյուկինի նկարագրության, յոթ Եպիսկոպոսներ էին բնակվում վանքի շրջակա մենաստանում, որը բաղկացած էր փոքրիկ կացարաններից, և որոնց պատերի մեջ փորված խցերը ծառայում էին որպես գրապահոցներ: Գրքերից բացի այս կացարաններում մի բարձր գրակալ կա, որի առջև հոգևորականները հատակին են նստում աղոթելու համար: Կացարանները խիստ կոկիկ ու մաքուր են, սպիտակեցրած պատերով, որոնց վրայ 2-3 ապակեպատ փոքրիկ լուսամուտներ կան: Մենաստանի բավական երկար սրահում ճաշի ժամանակ Ավետարանից հատվածներ են ընթերցվում: Մենաստանն ուներ մատուռ, վերևից ներքև զարդարված «անարվեստ սրբապատկերներով» (CB, IV, 88-89):

Ուղեգրի կողմից հիշատակվող երկրորդ եկեղեցին սրբապատկերներով զարդարված սուրբ Հակոբն էր: Սա աջ կողմում ուներ մի քանի կացարաններ, ուր կրոնավորներից զատ ապրում էին միանձնուհիները: Խոսքն ամենայն հավանականությամբ, Նոր Ջուղայի Միրադենց սուրբ Հակոբ անունով եկեղեցու մասին է, որն ըստ Նոր Ջուղայի Հայտնի նկարագրող Հ. Տեր Հովհանյանցի «մինն էր ի փառազարդ եկեղեցեաց Ջուղայու, թե՛ ըստ շինուածոյ մեծութեան բարձրութեան և վայելչութեանն և թե՛ ըստ ներքին պատկերազարդ և ծաղկափթիթ նկարուցն»:<sup>79</sup> Կարծում ենք, որ լը Բրյուկինի հաղորդումը չի կարող վերաբերվել Նոր Ջուղայի սուրբ Հակոբ Բաղաթա անունով առավել փոքր ու համեստ եկեղեցուն:

Լը Բրյուկինի հիշատակած երրորդ եկեղեցին, որ ամենամեծն էր՝ սուրբ Թովմասն էր: Վերջինս ավելի երկար էր և ամեն կող-

<sup>78</sup> ՏԵՐ-ՅՈՎՀԱՆՆԵԱՆՑ Յ., Պատմութիւն Նոր Ջուղայու, որ յԱպահան, հտ. 2, Նոր Ջուղա, 1880, էջ 34-48:

<sup>79</sup> Նույն տեղում, էջ 161-162:

մից պահվում էր երեքական սյան վրա: Պատերը սպիտակ էին, առանց սրբապատկերների: Գմբեթը շատ ցածր էր և խորան կարելի էր բարձրանալ երեքական աստիճաններով<sup>80</sup>:

Այս երեքից զատ, լը Բրյուկինը հիշում է «ևս 11, կամ 12 եկեղեցիներ, առավել փոքր և քիչ զարդարված»: Իսկ Նոր Ջուղայի թաղում եղած 13-14 եկեղեցիները «շատ փոքր են և նշանակալից ոչինչ չունեն» (CB, IV, 222)<sup>81</sup>:

**Խոջայական տները.** Լը Բրյուկինի կողմից մանրամասնորեն նկարագրվել են Հին Ջուղայի թաղի մի քանի մեծահարուստների բնակարանները, որն անկասկած ունի ազգագրական նշանակություն<sup>82</sup>:

Ըստ նրա, ամենանշանավորը խոջա Մինասի տունն էր, որի մեծ սրահն ամբողջովին ոսկեզօծված էր, պատված ծաղկանկարներով ու զարդանախշերով: Պատերը հայելազարդ էին, իսկ հատակը կամարակերպ՝ բաժանված չորս մասի, որոնցից յուրաքանչյուրի կենտրոնում ոսկյա բազմազույն աստղ կամ վարդ էր քանդակված: Պատերը մոտ 2-3 ոտնաչափ բարձրությամբ երեսպատված էին մարմարով: Այս սրահի երկու կողմերում մեծ քանակությամբ տերևազարդ նախշերով փորագիր որմնախորշեր կային: Այս տան նախամուտքից կարելի էր մտնել բակը, ուր գե-

<sup>80</sup> Ըստ Հ. Տեր Հովհանյանցի (հտ. 2, էջ 163) սուրբ Թովմա եկեղեցին «կառուցեալ է ի վերայ վեց սեանց, երկայնութիւնն է 82 ոտնաչափ սկսեալ ի ստորոտէ սեղանոյն, և լայնութիւնն՝ 60 ոտնաչափ: Ունի գմբեթ բավական բարձրութեամբ ի մեջ առաստաղի երկրորդ դասուն: Չունի նկարէն պատկերս կամ ծաղիկս ինչ, այլ սպիտակացեալ է բոռով: Շինութիւնն եկեղեցւոյ յարտաքին կուսէ է, շատ վայելչաշէն վասն գոյնզգոյն յախճապակեացն գետեղելոց յորմուսս»:

<sup>81</sup> Նոր Ջուղայի բոլոր եկեղեցիների ու նրանց արձանագրությունների մասին տե՛ս ՏԵՐ ՅՈՎՀԱՆՆԵԱՆՑ Յ., Նշվ. աշխ., հտ. 2, էջ 154-252: J. CARSWELL. New Julfa. The Armenian Churches and other Buildings. Oxford, 1968, p. 19-62. Nor Djulfa (Documenti di architettura armeni, 21), Venezia, 1991.

<sup>82</sup> Նոր Ջուղայի խոջայական տների ներքին հարդարանքի մասին տե՛ս ՀԱՎՈՐՅԱՆ Հ., ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Ա., Խոջայական ապարանքների գեղարվեստական հարդարանքը (XVII-XVIII դդ.), Երևան, 2007:

ղեցիկ շրջանաձև ծաղկաթումբ կա: Ճիշտ այդպիսին կարելի էր տեսնել տան ետևում երկրի սովորության համաձայն, կանանց համար առանձին կառուցված գեղեցիկ բնակարանով:

Ըստ լը Բրյուիևի, Նոր Զուղայի քաղաքարի՝ խոջա Ղուկասի տունը «թեև իր մեծությամբ չէր գիջում նախորդին, սակայն ավելի քիչ զարդարված և նվազ գեղեցիկ էր»:

Արժիեթ Աղայի ("Arjiet Aga") տունը, որի առջև ավելի մեծ պարտեզ կար, շատ ավելի մեծ էր և ուներ բազմաթիվ գեղեցիկ սենյակներ:

Խոջա Սաֆրազի տունը ևս ուներ մեծ պարտեզ: Տան բոլոր պատերը նկարազարդված էին չափերով բնականին շատ մոտ, մեծ պատկերներով: Լը Բրյուիևն այս պատկերների մեջ հիշում է «մի թուրքի և թրքուհու, ինչպես նաև բազում այլ նկարներ՝ պարսկական ու իսպանական տարազներով, իրարից որոշակի հեռավորության վրայ» (CB, IV, 224): Ուղեգրի հաղորդմամբ, այս տան վրա եղած մեծ պատշգամբում, «որտեղից բացվում էր աշխարհի ամենագեղեցիկ տեսարանը, սիրով իր ազատ ժամանակն էր անցկացնում Շահ Աբբասը» (CB, IV, 224):

Խոջա Աղամալու (Hodjie Agamael) տունը Բրյուիևի կողմից առանձնացվում է որպես «ամենաբարձրն ու ամենազարդարվածը», այն ուներ նաև խոշոր ու գեղեցիկ պատուհաններով, մեծ պատշգամբով մի կառույց, որը բացվում էր փողոցի վրայ:

Համաձայն լը Բրյուիևի հաղորդման, նախորդներին իրենց գեղեցկությամբ ու շքեղությամբ չէին գիջում նաև Խոջա Յովհաննեսի ու Խոջա Միրզայի տները, չնայած այդ տների նկարագրությունը չի տրվում:

Նրա իսկ հաղորդմամբ «քիչ չէին այն տները, որոնք մարմարե շատ զուլալ ցայտաղբյուրներով ավազաններ ունեին իրենց ամենաշքեղ սենյակներում, կամ մուտքի առջև: ...Այս տները շատ մաքուր են և լավ խնամված: Սենյակները ծածկված են գեղեցիկ գորգերով և սալիկներով, որոնց վրա ոսկեգոծ կամ արծաթագոծ ծածկոցներ են փռված» (CB, IV, 224):

Հիշյալ տների նախամուտքը սովորաբար շատ ցածր է լինում «որպեսզի արգիլեն պարսիկներին ձիերով ներս մտնել, և որպեսզի դրսից չերևա ներսի ողջ շքեղությունն ու հարստությունը» (CB, IV, 224)<sup>83</sup>:

**Տարազը.** Ըստ լը Բրյուիևի հաղորդման, ջուղահայերի տարազն առանձնապես չէր տարբերվում պարսկականից<sup>84</sup>, չնայած

<sup>83</sup> Պուլեի կողմից մի քանի նկատառումներ են արվել, կապված Նոր Զուղայի հայերի բնակարանի վերաբերյալ: Ըստ նրա՝ տները բոլորը հողից են, ինչպես Սպահանում և ավելի գեղեցիկ են, քան քաղաքում, քանի որ համամասնությունը ավելի լավ է պահպանված: Բուխարիկը պատի մեջ 2,5-3 ոտնաչափ լայնք ունեցող շրջանաձև՝ ներս ընկած խորաբանդակ է: Ապակու փոխարեն լուսամուտներին 2 մատ հաստությամբ փայտե ճաղեր են, որոնց արանքից դուրսը լավ է երևում: Որոշ տներ ապակի էլ ունեն, և դրանք դրված են տան ներսում, ինչպես Եվրոպայում: Տների վրա դրսից երևացող գմբեթները ներսից համարյա չեն երևում և կառուցված են այնպես, որպեսզի ապահովեն անձրևաջրերի հոսքը, որը կվաւսեր այս տներին և նրանց հողե ծածկը: «Ես վստահաբար կարող եմ ասել, որ Փարիզի շրջակայքում այս գաղութի տեսարանները գերազանցող ոչինչ չէք գտնի և այս ամենը ավելի քան գերազանցում են Պարսկաստանում եղող ամենագեղեցիկ տեսարանները...»,- ավելացնում է Պուլեն (տե՛ս POULLET. Nouvelles relations du Levant. Paris, II partie, MDCLXVIII (1668), p. 237).

Ըստ Ֆիգուերայի «հայերի տները ի մեծի մասամբ շատ գեղեցիկ են և հրաշալի կառուցված, ներսից նկարազարդված, ոսկեգոծ պատերով ու առաստաղներով» (L'ambassade de D. Garcias de Silva FIGUEROA en Perse. Paris, 1667, p. 285): Նրա հաղորդման համաձայն, այս գեղեցիկ տների մի մասը կառուցված է ամենահարուստ բնակիչների կողմից, մյուս մասը՝ շահերի, նախարարների ու նրանց ծառայողների կողմից, քանի որ գիտեին, որ «շահը մեծ բավականություն էր ստանում գործն ավարտված տեսնելով, և քանի որ այստեղից էր բացվում աշխարհի ամենագեղեցիկ տեսարաններից մեկը» (նույն տեղում, էջ 193):

<sup>84</sup> Այսպիսի դիտողություն կարելի է գտնել համարյա բոլոր Եվրոպացի հեղինակների մոտ: Նոր Զուղայի հայտնի հետազոտող Դ. Տեր-Յովհաննեսը այս կապակցությամբ գրում է. «Տարազ զգեստուց արդի արանց Զուղայու է ըստ ամենայնի նմանութեան պարսկական հանդերձից, այլ ըստ պատկերացն վկայելոյ՝ նախնիք ջուղայեցւոյ ունեցեալ են զհանդերձս այլատարազ քան զպարսկականն, զի նմանութիւնն ունին զգեստք նոցա Գուռջի կամ Վրացի զգեստուց. զգոտի հաստ ի մեջս, և



որ հագուստը «այնքան էլ մաքուր չի և չալմաների ծալքերն այնքան էլ խնամքով չեն արված: Բացի դրանից հայերին չէր թույլատրվում չալման կրել պարսկական ձևով, ինչպես նաև կանաչ մաշիկներ հագնել»<sup>85</sup>:

Հաշվի առնելով լը Բոյուհնի դիտողականությունը, ստորև մանրամասն բերում ենք հայկական տարազի նրա նկարագրությունը: Առավել ևս, որ 17-18 դդ. պարսկահայ տարազը շատ համառոտ է ուսումնասիրված հայագիտության մեջ<sup>86</sup>:

Ըստ լը Բոյուհնի, հարուստ հայուհիների հագուստը շատ թանկարժեք է: Նրանք իրենց գլխին կրում են թանկագին քարերով ու մարգարիտներով զարդարված ժապավեն, իսկ նրա տակ երկու մատ լայնությամբ, նույնպես ոսկեզօծ շամբարայ: Իսկ այ-

գիակեղ ունելով ի գլուխ: Տարագ կանացի զգեստուցն ըստ բազմաց վկայելոյ նոյն է զոր բերին ի Հայաստանայ: Վերին հանդերձ կանացի կոչի թակալայ, որոյ լանջն և գոգ բաց է, և քղանցք կամ վերին գոգ ծածկեն զայն: Ծածկեալ են գլուխք ևոցա չորիւք փաթութանօք, որոյ վերայ դնեն զկօտ, կապեն զթնակալ, արկանեն զլանջածածկոցն՝ որ մանդիլ կոչի, և յամառան՝ թօռն, և շղարշապատեն զգլուխն» (նշվ. աշխ., հտ. 2, էջ 289):

<sup>85</sup> Հայերի տարազի նկատմամբ կրոնական խտրականությունը շատ ավելի դաժան ձևերով դրսևորվում էր հարևան Թուրքիայում: Դոլիե-Դելանի 1664 թ. վերաբերող հաղորդման համաձայն, հայերը «առավել ազատ են ամբողջ Պարսկաստանում, նրանք կարող են հագնվել այնպես, ինչպես ուզում են, մի բան, որ չեն կարող անել Թուրքիայում, ուր նրանց արգելված է հարուստ կերպասներ հագնել և կանաչ գույն կրել» (Les Beautez de la Perse... par le sieur A.D.D.V., Paris, MDCLX-XIII, 1673, p. 50): 16-18-րդ դդ. Օսմանյան կայսրությունում հայերի ազգային տարազի արգելման վերաբերյալ սուլթանական ֆերմանների մասին տե՛ս Ա. Յ. Փափազյան., Արևմտահայության վիճակը ըստ Օսմանյան սուլթանական ֆերմանների (XVI-XVIII դդ.)- ՊԲՀ, 1988, 2, էջ 124-136, նույնի, Օսմանյան կայսրության ոչ մահմեդական ժողովուրդներին վերաբերող թուրքական մի շարք վավերագրեր, ՊԲՀ, 1983, էջ 201-211; տե՛ս նաեւ Նույնի Թուրքական վավերագրերը Հայաստանի եւ հայերի մասին (16-19-րդ դարեր) իս Երեւան, 1999:

<sup>86</sup> Տե՛ս Վ. Հացունի. Պատմութիւն հին հայ տարազին, Վենետիկ, 1923, էջ 276-279:

տերի շուրջը ավելի քան քսան մարգարիտներով ընդմիջվող, ոսկե դուկատներ և այլ զարդեր, որոնք անցնում են կզակի տակով:



Հայուհիները երեք տեսակի քող են կրում, որոնք ամրացվում են գլխի ետևի մասում: Առաջինը՝ «երեսանոցը» ("Jeriesan-noots") ծածկում է նրանց դեմքի ներքևի մասը՝ մինչև քիթը, երկրորդը՝ «եազմա» "Jasma") ոսկեկար և արծաթով ասեղնագործ կրում են պարանոցի շուրջը: Այս երկու քողերը երբեք չեն հան-

վում<sup>87</sup>: Երրորդը՝ «լաչակը» ("Letsiek") ևս ասեղնագործ է և այս երկու բողերի տակից, ետևի կողմից, թիկնոցածն իջնում է մինչև հագուստի ներքևի մասը:

Կանայք հազնում են ձեռագործ տափտայից, կամ մի այլ շքեղ կերպասից շապիկ, որը բաճկոնից քիչ կարճ է: Դրա վրայից հազնում են մինչև ծնկները հասնող մի «արխալուղ» ("Argalog"), իսկ դրա վրայից ծաղկավոր կերպասից մի բաճկոնակ ("Takala"): Այս բոլորի վրայից հազնում են ոսկեկար կերպասից սիբիրյան սամույրի մորթով երկտակված բաճկոն ("Katebie"):

Կանայք գծավոր, կարմիր-ճերմակ սատինից անդրավարտիքներ «ոտաց շոր» ("Wotaets-sjoor") են կրում, ապա նաև կարմիր կամ դեղին մաշիկներ «բաբուշներ» ("Paepoetsjes"), քանի որ, ինչպես տղամարդկանց, հայ կանանց էլ արգելված էր կանաչ մաշիկներ կրել:

Գոտին, որ 3-4 մատ լայնություն ունի, գործված է ոսկե, կամ արծաթե փորագրված թաղանթներով և զարդարված է թանկագին քարերով: Այս գոտին նրանք կապում են ավելի լայն՝ մետաքսե գոտու վրայից: Հարուստ կանայք վզից կախում են 2-3 ոսկե շղթաներ, որոնցից մեկից կախված է լինում անուշահոտով լի մի սրվակ, իսկ մյուսներից՝ ոսկե դուկատներ: Սրանց հետ

<sup>87</sup> Ըը Բրյուկինի ժամանակակից, հիսուսյան կրոնավոր Հակոբ Վիլլոտի հաղորդմամբ հայ կանանց քնորոշ է այն, որ «փայթաթված իրենց բողերով նրանք ոչինչ չեն ցուցադրում իրենց հագուստների հարուստ արդուզարդից ո՛չ փողոցում և ո՛չ իսկ եկեղեցում: Միայն տանն են հանում բողը՝ ներկայանալով իրենց ողջ փայլով, նշելու համար, որ հաճոյանում են միայն իրենց ամուսիններին, որով էլ լավ դաս են տալիս մեր ևրոպացի կանանց» (տե՛ս VILLOTE J.. Voyages d'un missionnaire de la compagnie de Jesus. Paris. MDCCXXX (1730), p. 496). Ըը Բրյուկինի հաղորդումը մասամբ հաստատվում է նաև 1664 թ. վերաբերվող Թեվենոյի այն հաղորդմամբ, թե «հայ կանանց դեմքը միշտ կիսով չափ փակ է մի բողով, որը քթից իջնում է մինչև նրանց կզակը, բացի այդ ազգի օրհորդներից, որոնք, մինչև ամուսնանալը, ծածկում են միայն իրենց կզակը» (տե՛ս "Suite du voyage de mr. THEVENOT au Levant. Amsterdam, T. III, MDCCXXVII (1727), p. 320):

միասին նրանք կրում են նաև մարջանե վզնոց, որը 2-3 հատիկը մեկ ընդմիջվում է մեկ կամ զույգ ոսկի դուկատներով: Սրանցից բացի կանայք կրում են նաև ոսկի ապարանջաններ ու մատանիներ:

Ամռանը մորթե բաճկոնի փոխարեն նրանք անթև, մինչև ծնկները հասնող մի այլ բաճկոն (Koer-toek) են կրում<sup>88</sup>:

Ի տարբերություն կանանց, օրհորդներն այնքան էլ բողարկված չեն: Հիմնական տարբերությունը գլխի հարդարանքի մեջ է: Նրանք միայն պարանոցի շուրջն են բող կրում, իսկ գլխին՝ ոսկուց ու արծաթից ձեռագործված մարգարտազարդ ապարոշ<sup>89</sup>:

<sup>88</sup> Տեղին է մեջբերել ջուդահայ տարագի մասին Գարսիա դե Սիլվա Ֆիգուերոայի 1618 թ. վերաբերող դիտարկումը. «Հայ կանանց մեծ մասը պարսկուհիների նման սպիտակ բող չեն կրում, այլ մի տեսակ սև կամ սրճագույն կերպաս, որն իջնում է մինչև նրանց ծնկները և ասերված են մոտավորապես Իսպանիայի գյուղացի կանանց նման: Բոլորն էլ երկրի սովորությամբ՝ ինչպես պարսկուհիներն ու արաբ կանայք, անդրավարտիք են կրում: Երիտասարդ կանայք կապում են գլուխը և ճակատը փակում են բարակ՝ բազմագույն տափտայից ժապավենով. առավել հարուստներն այդ ժապավենները զարդարում են կամ բարակ ոսկի թաղանթներով, կամ էլ այն նույն կերպասի մասնիկներով, որից նրանց ժապավեններն են պատրաստված. վերջիններս իջնում են նրանց այտերի երկայնքով մինչև պարանոցը, ինչպես կարելի է տեսնել մեր արքայադուստրերի օձիքների (morions) վրա, այնքան պինդ կապելով դրանք, որ մազերն ու դեմքը կտր և այտուցված տպավորություն են թողնում որը, չնայած ամբողջովին ծպտված ու այլափոխված տեսքին, իրենց գեղեցկության մի մասն է կազմում...» (տե՛ս L'ambassade de D. Garcias de Silva FIGUEROA en Perse. Traduit de l'espagnol, par m. De Wicqfort. Paris. MDCLXVII (1667), p. 201-222):

<sup>89</sup> Ըը Բրյուկինի մեկ այլ ժամանակակից՝ իտալացի Ջեմելի-Կարերիի 1694 թ. վկայությամբ, «հայ կանայք շատ գեղեցիկ են, արվեստը ոչինչ չի խնայել նրանց գեղեցկության համար: Նրանք իրենց գլուխը ծածկում են սպիտակ նուրբ բողով, որը կապվում է կզակի տակ: Նրանք իրենց մազերը հյուսելով հավաքում են թավշե մի ծամկալի մեջ և թողնում են ուսերի վրայ: Մինչդեռ ամենահարուստները, ինչպես այստեղ, այնպես էլ այլուր, իրենց գեղեցկությունը պաճուճում են ոսկու ու ակնեղենի մեջ» (GEMELLI-CARERI. Voyage du tour du monde. Traduit de l'italien. Paris, T. II, MDCCXIX (1719), p. 139):

Լը Բրյուկինի եզրակացությամբ, փողոց դուրս եկող հայուհին գրեթե ոչնչով չէր տարբերվում պարսկուհիներից:

### ՀՈԳԵՎՈՐ ԵՎ ԱՇԽԱՐՀԻԿ ԾԵՍԵՐ ԵՒ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐ

**Ջրօրհնէք.** Հայոց մեջ ընդհանրապես, և ջուղահայոց մեջ մասնավորապես, ջրօրհնէքի արարողության նկարագրության կարելի է հանդիպել 17-18-րդ դդ. Հայաստան և Իրան այցելած բազմաթիվ եվրոպացի ուղեգիրների մոտ (Ֆիգուերոա, Տավեր-նիե, Թեվընո, Գ. Շինոն, Պուլե և այլն): 17-րդ դ. 30-ական թթ. սկզբին շամախահայոց մեջ ջրօրհնէքի արարողության մանրամասն նկարագրությունը հաղորդում են Օլեարիուսը, Մանդելս-ուն, Ստրյուկսը:

Ինչպես տեսանք Լը Բրյուկինը շտապում էր հասնել Նոր Ջուղա, ականատես լինելու այս արարողությանը, որ պիտի կատարվեր եպիսկոպոսանիստ Անապատ (իմա Ս. Ամենափրկիչ) եկեղեցում: Լը Բրյուկինի կողմից մանրամասնորեն նկարագրվում է դեռ առավոտյան ժամը 3-ից սկսած պատարագը, որն անցկացնում էին սևազգեստ հանդերձանքի վրայից ոսկեկար կերպասից տոնական զգեստներ հագած կրօնավորներն ու ականակուռ ու մարգարտազարդ վեղար կրող եպիսկոպոսը: Արարողությունից հետո, պատարագից եպիսկոպոսը, երկու ձեռքում ասեղնագործ սպիտակ թաշկինակների մեջ ականակուռ խաչերով<sup>90</sup>, իր շքախմբով շարժվեց դեպի զարդաքանդակներով ու երկու զանգ ունեցող հանդիպակաց զանգակատունը: Այստեղ շինության կենտրոնում դրված ջրով լի մի սկահակի մոտ մեկ ժամ ևս արարողություն կատարելուց հետո, եպիսկոպոսը ջրի մեջ լցրեց մե-

<sup>90</sup> Դեռ 1618-1619 թթ. Նոր Ջուղա այցելած իսպանացի Գարսիա Ֆիգուերոան խիստ զարմացել էր, թե «ինչպես էին այս խեղճ հայերը փրկել այս հարստությունը, որ բավական նշանակալի էր, քանի որ այդ խաչերը 100-ից ավելի էին, փոքրերը՝ արծաթից, չհաշված նույն այդ նյութից պատրաստված սկիհները, որոնք նույնպես թվով քիչ չէին» (L'ambassade de Garcias de Silva FIGUEROA, p. 284):

ռոնով սկիհի պարունակությունը, ապա խաչը երեք անգամ ընկղմեց ջրի մեջ՝ ավարտելով հոգևոր արարողությունը: Վերջում նախ պատարագի մասնակցող կրոնավորները թրջելով իրենց ձեռքը սկահակի մեջ, քսեցին իրենց դեմքին, ապա այն բուլոր հայերը, որոնց հաջողվեց մոտենալ սկահակին, սրբեցին իրենց դեմքը սուրբ ջրով: Նրանց մեջ կային մարդիկ, որոնք սրվակներ էին բերել իրենց հետ՝ այդ ջրից տուն տանելու նպատակով:

Լը Բրյուկինը նշում է նաև, որ Ջրօրհնէքի արարողությունն անցկացվեց նաև Նոր Ջուղայի մյուս եկեղեցիներում և նույնիսկ Ջուղայի կողքով անցնող գետակում (ՇԵ, IV, 86-88)<sup>91</sup>:

Նրա վկայությամբ, այս արարողության կատարման համար Նոր Ջուղայի քալանթարը նախօրոք ստանում էր շահի թույլտվությունը, որի համար վճարվում էր մոտ 200 դուկատ հարկ<sup>92</sup>: Շահի կողմից ուղարկվում էր պահակախումբ այս բազմամարդ

<sup>91</sup> Հայոց մեջ որոշ վայրերում սովորություն է եղել այս արարողությունը գետի, լճի, կամ ծովի վրա կատարել, չնայած Մ. Օրմանյանի դիտողությամբ այսպիսի սովորությունը ավելի տարածված էր հույների մոտ (տե՛ս Մ. Օրմանյան. Ծիսական բառարան, Երևան, 1992, էջ 38): Լը Բրյուկինի հաղորդումից առաջ, հայերի կողմից Չենդերուդ գետի վրայ այս արարողության կատարման մասին են վկայում Գարսիա Ֆիգուերոան՝ 1618-1619 թթ. (op. cit., p. 282-286), բոկոտն կարմելիտները՝ 1620-ին (A Chronicle of the Carmelites in Persia..., London, Vol. I, 1939, pp. 245-246), հմմտ. Յ. Զյուրտյան. Ջուղայեցի խոճայ Նազար և իր գերդաստանը. «Հայրենիք», 1943, թիվ 4 (Ցուլիս-Օգոստոս), էջ 77-78), Ժ. Բ. Տավերնիեն՝ 1632 թ., (տե՛ս J. B. TAVERNIER, op. cit., t. I, pp. 502-503), Գ. Շինոնը՝ 1650 թ. (տե՛ս G. de CHINON, op. cit., pp. 296-297). Ջեմելի-Կարերին՝ 1694 թ. (տե՛ս GEMELLI-CARERI, op. cit., p. 144-145) և ուրիշներ: Շամախու հայերի կողմից ջրօրհնէքը գետի վրայ կատարելու մասին հաղորդում են Ադամ Օլեարիուսը՝ 1637 թ. (A. Оларий. указ. раб., с. 531-534), և Յ. Ստրյուկսը՝ 1671 թ., (Jean STRUYS, op. cit., T. II, Lyon, MDCLXXXII (1682), pp. 262-264):

<sup>92</sup> Օլեարիուսի հաղորդմամբ, Շամախիում ևս հայերը տեղի խանին վճարում էին 1000 թալեր՝ ջրօրհնէքի արարողության կատարման համար (տե՛ս (A. Оларий. Указ. соч., с. 533):

արարողությունները հսկելու և կարգ ու կանոն պահպանելու համար, քանի որ հաճախ մասնակցում էին նաև բազում մահմեդականներ: Յաճախ պահակախումբը հոգևորականների համար ստիպված էր դազանակներով ծանապարհ բացել բազմության միջով (CB, IV, 88):

**Հարսանյաց ծես.** Այն, որ լը Բոյուհնի վրա հայկական հարսանյաց ծեսը թողել է մեծ տպավորություն, երեւում է նրանից, որ բոլոր եվրոպացի հեղինակներից, որոնք անդրադարձել են այս ծեսին, նա տալիս է դրա առավել հանգամանալից նկարագրությունը:

Բոյուհնին զարմացրել է այն հանգամանքը, որ ամենևին էլ պարտադիր չէր, որ ամուսնացող զույգը նախօրոք ծանոթ լիներ միմյանց: Նրա ասելով, հայերի մոտ իրեն ոչինչ այնքան տարօրինակ չի թվացել, ինչքան այն, որ նրանք իրենց երեխաներին ամուսնացնում էին ամենավաղ հասակում. «այնպես, որ համարյա չկան տղա երեխաներ, որոնք 8-10 տարեկանում արդեն ամուսնացած չլինեն»: Լը Բոյուհնը հաղորդելով, որ հաճախ երեխաներին ամուսնացնում են մեկ տարեկանում և հաճախ էլ դեռ չծնված, սա բացատրում է նրանով, որ այն աղջիկները, որոնք դեռ ամուսնացած չէին, ենթակա էին շահի հարեմի համար հավաքագրման և հայերը այս ամուսնությունները իրագործում էին դրանից խուսափելու նպատակով: «Չնայած, - նշում է լը Բոյուհնը, - քիչ չեն օրինակները, երբ այս օրենքն էլ է խախտվում»<sup>93</sup> (CB, IV, 244):

<sup>93</sup> Նոր Ջուղայում հայոց մեջ վաղ ամուսնությունների մասին են վկայում մի շարք եվրոպացի հեղինակներ: Այսպես, ըստ Գ. Շինոնի «հայերը և հատկապես ջուղայեցիները սովորություն ունեն շատ վաղ ամուսնացնել իրենց երեխաներին, այդպիսով պահելով նրանց և արգելք հանդիսանալով, որ նրանք չգրվեն թուրքերի մեջ» (G. CHINON. Op. cit., p. 274): Համաձայն Ժ. Բ. Տավերնիեի վկայության «հայերը սովորաբար իրենց երեխաներին ամուսնացնում են առանց երկու կողմերն իրար տեսնելու և նույնիսկ առանց հայրերի ու եղբայրների իմացության: Հարկ է, որ ամուսնացողները կատարեն իրենց ծնողների կամքը... Հաճախ ծնողները երեխաներին ամուսնացնում են դեռ 2-3 տարեկանում և նույնիսկ եթե երկու

Լը Բոյուհնի վկայմամբ, ծնողները պայմանավորվում են ամեն ինչի մասին և պայմանագիր են կնքում (CB, IV, 229):

Հարսանիքի օրը<sup>94</sup> փեսան, որ նախապես հոգ էր տարել երաժշտության մասին, իր ազգականներին և հյուրերին հրավիրում է իրենց տուն: Այնուհետև հայտնվում են մի խումբ աղջիկներ, որոնք փողոցներում երգում ու պարում են դափերի ու փողերի նվագակցությամբ և ուղեկցում են մի քանի կանանց, որոնց ձեռքին հագուստներ և թանկարժեք զարդեր կան<sup>95</sup>: Աղջիկները, հասնելով փեսայի տուն, նրա մեջքին կանաչ սատինից մի խաչ են կապում, և ապա տղամարդիկ ու կանայք առանձնաձև են տարբեր սրահներում, ուր հյուրասիրվում են անուշեղեն-

ընկերուհիները միաժամանակ հղիանում են՝ նրանք պայմանավորվում են ամուսնացնել նրանց, եթե աղջիկ և տղա ծնվեն: Ըստ պայմանավորվածության, ծնվելուց հետո, անմիջապես պսակում են նրանց» (Tavernier. Op. cit., p. 505): Թևենոյի հաղորդմամբ (1664 թ.) «Հայերն իրենց երեխաներին հաղորդություն են տալիս շատ փոքր հասակում, քանի որ նրանց ամուսնացնում են շատ վաղ տարիքում: Հաճախ ծնողները նրանց նշանում են ծնվելուց անմիջապես հետո և պսակում 7-8 տարեկան հասակում: Չնայած քահանան կատարում է պսակի արարողությունը, երիտասարդներն ամուսնանում են տարիքը հասնելուն պես» (Suite du voyage de Mr. de THEVENOT au Levant. T. III, p. 392):

<sup>94</sup> Համաձայն Գ. Շինոնի հաղորդման «ամուսնացողին տալիս են թագավոր անունը, որը հարսանիքի նախօրոք օրը, հարսանիքին հրավիրված բազում երիտասարդների հետ միասին, որոնցից յուրաքանչյուրին նա մեկական բաճկոն էր նվիրել, եթե այդ հնարավորությունն ուներ, ձեռքով գնում են քաղաքից դուրս զբոսանքի՝ իրենց թմբուկներով ու դափերով: Ուշ երեկոյան՝ վերադարձին, կանց են առնում կառավարչի (քալանթարի) դռանը և ողջունում նրան: Ապա հարսանիքի թագավորը, ինչպես նրան կոչում են, իջնում է իր ձիուց, շքախմբի անդամներից մեկի հետ մտնում է խոջայի տուն և համբուրում նրա ձեռքը: Խոջան նրան ամեն տեսակ օրհնանքներ ու մաղթանքներ է տալիս, որպեսզի երջանկանա իր զոյգի հետ: Ապա մի թեթև հյուրասիրում է նրանց, որից յետո նորապսակը միանալով իր ընկերներին՝ վերադառնում է տուն» (տե՛ս G. CHINON. Op. cit., p. 274-276):

<sup>95</sup> Նոր Ջուղայի կենցաղային մշակույթի մանրամասները տե՛ս ՄՏԵՓԱՆՅԱՆ Ա., Նոր Ջուղայի կենցաղային մշակույթը, (Իրանա-հայ գաղթօջախի 17-18-րդ դդ. արհեստագործության պատմությունից), Երևան, 2000:

ներով ու խմիչքով: Ապա սկուտեղների մեջ բերում են հարսի ու փեսայի հանդերձանքը, որոշ նվերներով, որոնք նախատեսված են հարսանիքին մասնակցող երիտասարդների համար: Զահանաների կողմից հագուստների օրհնության արարողությունից հետո, հենց տեղում նորապսակները հազնում են դրանք: Այնուհետև փեսան մի քանի ընկերների և երկու-երեք ազգականների հետ միասին գնում է իր ապագա կնոջ սենյակը, ուր հարսի հայրը, եղբայրը և այլ ազգականներ նրան ընդունում են բազում գովաբանություններով և մաղթանքներով: Այստեղ փեսայի մեջքին մի կանաչ գոտի էլ են կապում և տալիս են մի ասեղնագործ թաշկինակ, որի մի ծայրից ինքն է բռնում, մյուս ծայրից հարսը: Այս թաշկինակը նրանց ուղեկցում է պսակադրության ողջ ծեսի ընթացքում:

Հարսը հագնված է լինում շատ շքեղ: Նրա դեմքը ծածկված է լինում կարմիր տափտայով, որն իջնում է մինչև ոտքերը, ինքն էլ ամբողջությամբ ծածկված է լինում գեղեցիկ ասեղնագործ քողով, որն ամենևին էլ չի սքողում նրա գեղեցիկ հանդերձանքը: Հարսն այդ տեսքով, շրջապատված ուրիշ, քողածածկ կանանցով, թաշկինակի ծայրը բռնած, հետևում է իր ամուսնուն մինչև եկեղեցի:

Ըն Բրյուիկնի վկայությամբ, արարողության սկզբում հարսն ու փեսան խոստովանում են, որից հետո քահանան նրանց ուղեկցում է ներս, ուր և տեղի է ունենում պսակադրության աշրարողությունը: Զահանան հարցնում է փեսային, թե ցանկանում է որպես կին ունենալ հարսնացուին, նրան սիրել ու հարգել, եթե վերջինիս նույնիսկ վատ բան պատահի, կորցնի տեսողությունը, նրա ձեռքերն ու ոտքերը չաշխատեն, կամ էլ այլ փորձանք պատահի: Փեսայի դրական պատասխանից հետո, քահանան նույն հարցերը հարսնացուին ուղղելուց հետո, միացնում է նրանց ձեռքերն ու գլուխները, որոնք հարսանքավոր տղաներից մեկն այդպես միացած պահում է մի թաշկինակով, որի վրա խաչ

է բռնում: Այս ընթացքում ընթերցվում է Սուրբ Գիրքը<sup>96</sup>: Ապա քահանան նրանց գլխի վրայից վերցնելով խաչը, Հաղորդություն է տալիս: Այնուհետև հարսանքավորները դուրս են գալիս եկեղեցուց և դափերի, փողերի ու թմբուկների նուագակցությամբ, քահանաների առաջնորդությամբ ուղևորվում են դեպի փեսայի տուն, որի շեմին նրանց օջարակներով են հյուրասիրում և օծում վարդաջրով: Ապա տղամարդկանց ու կանանց առաջնորդում են տարբեր սրահներ, ուր հյուրասիրվելու համար հյուրերը նստում են ըստ կարգի:

Ճաշը սկուտեղների վրա դնում են հատակին, մի մեծ գորգի վրա, որի վրա էլ տեղավորվում են արևելյան ձևով: Սկզբից անուշեղենն են հյուրասիրում խմիչքով, հետո մսեղենը:

Ըն Բրյուիկնը չի մոռանում նշել, որ եթե նորապսակները պսակադրության ժամանակ Հաղորդություն են ստանում, 3-4 օր նրանց առանձնացած են պահում, իսկ եթե չեն ստանում, հենց նույն երեկո նրանց առաջնորդում են իրենց վարդաջրով օծված ննջարանը (CB, IV, 232):

Բրյուիկնի վկայմամբ, հաճախ եկեղեցի են գնում ձիերով, հաճախ էլ նրանց ամուսնացնում են գաղտնի, գիշերով, քիչ թվով ազգականների ներկայությամբ:

**Օժիտ.** Ըն Բրյուիկնը յատուկ ուշադրություն է դարձրել ջուղահայոց օժիտին: Նրա հաղորդմամբ, հարսանիքից մի քանի օր անց նորահարսին են տանում նրա օժիտը, որը հիմնականում բաղկացած է լինում հագուստեղենից, ոսկեղենից ու թանկարժեք քարերից, այնքան, որքան թույլ է տալիս նրա հոր քսակը: Այս ամենը տեղավորված է լինում անուշեղեններով ու մրգերով համեմված փայտե սնդուկների մեջ: Օժիտը բերում են դափերի ու ծնծղաների նվագակցությամբ:

<sup>96</sup> Տավերնիեի սրամիտ դիտարկումով, նորապսակների գլխին դրվող Ավետարանը «հաճախ բավականին ծանր էր լինում...» (J. B. TAVERNIER, op. cit., p. 506):

Լը Բրյուկինի հաղորդմամբ, հաճախ օժիտը ուշացնում են մինչև առաջին երեխայի ծնունդը: Այս դեպքում, օժիտի մեջ են դնում նաև երեխայի սպիտակեղենն ու օրորոցը (CB, IV, 232)<sup>97</sup>:

**Մանկան ծնունդ, մկրտություն, մանկական դաստիարակություն.** Լը Բրյուկինի հաղորդմամբ, հայերի մոտ մանկան ծնունդից հետո, ծնողներն անպայման կնքահայր են ընտրում և մի քանի օր անց մի կին այդ երեխային եկեղեցի է տանում կնքելու: Այնտեղ քահանան մերկացնելով երեխային, երեք անգամ ընկղմում է սուրբ ջրով գուռի մեջ և մկրտության աղոթքներ է արտասանում, որից հետո երեխային օծում է մեռնով: Նախ գլուխը, հետո հաջորդաբար բերանը, վիզը, ձեռքերն ու ոտքերը, որից հետո արդեն փաթաթված երեխային խորանի մոտ Հաղորդություն է տալիս: Այնուհետև քահանան երեխային հանձնում է կնքահորը, որը նրան փաթաթում է իր կողմից որպես նվեր պատրաստված թանկարժեք կերպասի մեջ: Ապա մկրտության թափորը, որի առջևից մի մեծ խաչ են տանում, իսկ մասնակիցների ձեռքին մոմեր կան՝ քահանաների երգեցողությամբ շարժվում է դեպի նորածնի տունը: Այստեղ կնքահայրը երեխային հանձնում է մորը, իսկ մկրտության արարողության մասնակիցները հյուրասիրվում են:

Լը Բրյուկինի դիտարկմամբ, հետագայում, սովորաբար, նույն կնքահայրն է կնքում այդ ընտանիքի բոլոր երեխաներին: Բացի այդ, կնքահոր երեխաները իրավունք չունեն ամուսնանալ նրա սաների հետ և ոչ էլ նույնիսկ նրա մոտ ազգականների երեխաների հետ՝ մինչև ազգակցության չորրորդ աստիճանը: Եվ նույնիսկ, տարբեր ընտանիքներից սերված տղան ու աղջիկը, ունենալով նույն կնքահայրը, իրար հետ չեն կարող ամուսնանալ:

Լը Բրյուկինի հաղորդմամբ, «ըստ Հայկական սովորության», եթե երեխան ծնվում էր որևէ հոգևոր տոնի (Չատիկ, Վարդա-

վառ, Բարեկենդան և այլն) նախօրեին, ապա նրան կնքում էին տոնական օրերին (CB, IV, 228-229):

Լը Բրյուկինը հետաքրքրությամբ և մասամբ քամահրանքով է նշում, որ չնայած հայերը շատ ուշադիր են արտաքին աշխարհի նկատմամբ, սակայն բազմիցս շրջանցում են այնպիսի կարևոր հանգամանքներ, ինչպիսին է, օրինակ, մանկան դաստիարակությունը, որոնք «հաճախ հասնելով հասուն տարիքի, չեն իմանում հասարակ դոմինիկյան աղոթարանը»: Հետագայում, ինքն էլ այս հանգամանքը բացատրում է նրանով, որ երեխաներին շատ վաղ են ամուսնացնում, և նրանք հաճախ երեխա են ունենում, մինչդեռ իրենք մանկական տարիքից դեռ դուրս չեն եկել: Նրանք, ընդհանրապես, այնքան խրված են լինում առօրյա հոգսերի մեջ, որ անհնար է լինում ուսում ստանալ,- նշում է Բրյուկինը,- «Ինչ երեխա կարող է դաստիարակել մայրը, երբ ինքը ևս ոչ մի կրթություն ու դաստիարակություն չի ստացել» (CB, IV, 234-235):

**Թաղման ծես և «Սուրբ խաչ»:** Թաղման ծեսին լը Բրյուկինն անդրադառնում է իր գրքի սկզբում, հայ վաճառական Պետրոս Արխանգելի մահվան կապակցությամբ: Նրա հաղորդմամբ, վերջինիս մահով վշտացած ուղեկիցները նրան ծածկեցին սպիտակ մաքուր սավանով, որ փաթաթեցին հանգուցյալի ոտքերի շուրջը, ինչպես նաև մի գիրք դրեցին գլխի վրա, մի խաչ՝ փորին և գլխավերևում խունկ վառեցին: Ապա մինչ վաճառականներից երկուսը երկու ժամվա ընթացքում ընթերցում էին հանգուցյալի հոգու հանգստության համար, մյուսները պատրաստեցին պատանք, մի նոր շապիկ և անդրավարտիք: Այնուհետև կրկին կարդալով ու երգելով, հանգուցյալին մերկացրին, լվացին գլուխն ու ողջ մարմինը և դնելով մի տախտակի վրա հագցրին սպիտակեղենը, վզին մի խաչ կապեցին, աջ ձեռքին մի տերողորմյա, իսկ ձախին՝ մի փոքրիկ մոմ: Հետո աչքերին, ականջներին ու բերանին սպիտակ կտորներ դնելով, ձեռքերը խաչեցին: Այս բոլորից հետո, նրան փաթաթելով պատանքի մեջ և դնելով մի թիակի վրա, որը ծածկված էր գորգով, տարան Սա-

<sup>97</sup> Օժիտի այս նկարագրության աղբյուրները հայկական այլ ազգագրական շրջանների հետ տե՛ս է. Տ. Կարապետյան. Օժիտը հայոց մեջ. Երևան, 1978, էջ 9-28:



րատովին մոտ գտնվող մի լեռան վրա, ուր նախօրոք փոս էին փորել: Այստեղ, կրկին երգելուց ու կարդալուց հետո, ընկերները համբուրեցին հանգուցյալի ճակատը և նրան հողին հանձնեցին՝ յուրաքանչյուրը խաչակնքելով ու մի բուռ հող նետելով նրա վրա: Հետո գերեզմանը լցրին հողով ու քարերով, գլխավերևում կանգնեցրին մի մեծ փայտե խաչ, իսկ շուրջը՝ երեք փոքր խաչեր և մեծ քարերով շրջապատեցին գերեզմանը: Այնուհետև բոլորը համբուրեցին գերեզմանի հողը, խունկ ծխեցրին ու մեկական բաժակ օղի հրամցրին:

Սարատովում մահացած և այնտեղ էլ թաղված նորջուղայեցի այս վաճառականի թաղումից գատ, «որին անհամբեր սպասում էին կինն ու երեխաները», լը Բոյուիկնը Նոր Ջուղայում ևս մասնակից լինելով թաղման արարողության, լրացրել է իր դիտարկումները: Ըստ նրա, կանայք ևս, ինչպես տղամարդիկ, մասնակցում էին այս արարողությանը: Թաղման թափորն առաջնորդում էին քահանաներն ու սարկավազները՝ թաղման

օրհներգեր կատարելով: Հանգուցյալի դագաղը տանող չորս հոգին հաճախ դառնում էին ութ՝ կապված վերջինիս երկարության հետ: Դիակը հողին էր հանձնվում առանց դագաղի, գլուխը մի քիչ բարձր և քահանան երեք անգամ, խաչածև, հող էր նետում նրա վրա: Այնուհետև նույնը անում էին հուղարկավորները:

Ըստ լը Բոյուիկնի, վերադառնալով հուղարկավորությունից, հանգուցյալի տանը հյուրասիրում են ճաշով ու ընթրիքով: Նույնը կրկնվում է նաև քառասուն օր հետո, երկու քահանայի և երկու սարկավազների մասնակցությամբ, որոնց վճարում էին հանգուցյալի գերեզմանի վրա Ավետարանից որոշ հատվածներ կարդալու և Դավթի սաղմոսները երգելու համար: Հոգևորականների յուրաքանչյուր օրվա համար 10 սոլ են ստանում, որն էլ լը Բոյուիկնի կարծիքով, ցույց է տալիս, թե թաղման ծեսին որքան հարգանքով են վերաբերվում ջուղահայերը (CB, IV, 233-234):

1704 թ. օգոստոսի 26-ին Նոր Ջուղայում Լը Բոյուիկնը մասնակցում է հայերի «Սուրբ Խաչի» արարողությանը: Ըստ նրա, օրը սկսելուց երկու-երեք ժամ առաջ, հայ կանայք գալիս են Նոր Ջուղայի գերեզմանատուն, իրենց հետ բերելով մոմեր, փայտ, ածուխ ու խունկ: Ապա իրենց հանգուցյալ ազգականների գերեզմանների կողքին խարույկ են վառում, իսկ գերեզմանների վրայ՝ վառվող մոմեր են դնում և կրակի մեջ անընդհատ խունկ են լցնում՝ ստեղծելով մեծ բոցավառություն և ողբալով դիմում են իրենց հանգուցյալներին: Լը Բոյուիկնը, որի վրա մեծ տպավորություն էր թողել մթան մեջ գերեզմանոցում վառվող կրակները, ավելացնում է. «Դրանք ինձ թվացին հրդեհված քաղաքի ավերակներ, որոնց մեջ մարդիկ, որոնք փրկվել էին հրդեհից, ողբալով իրենց դժբախտ ճակատագիրը, գիշերային խավարի մեջ ճրագներով եկել էին որոնելու իրենց ազգականներին ու բարեկամներին և գտնելու իրենց ունեցվածքի մնացորդները» (CB, IV, 260-261):

Ճիշտ է, ըստ լը Բոյուիկնի, արարողությանը մասնակցում էին միայն կանայք, այնուամենայնիվ նա գերեզմանոցում տեսնում է մի քանի տղամարդկանց ու քահանաների, որոնք աղոթում էին

այն գերեզմանների վրա, որոնց տերերն իրենց վճարում էին: Բրյուիկնի հաղորդմամբ, այս ծառայության համար նրանք ստանում էին 5, ոմանցից՝ 10, իսկ ունևորներից՝ մինչև 20 սուլ:

Ըը Բրյուիկնը շատ էր ազդվել գերեզմանոց այցելած մոտ 3000 սպիտակազգեստ կանանց և սևազգեստ քահանաների բազմությունից, վառվող կրակներից ու դեպի Սպահան տարածվող խնկաբույրից: Նա նկատում է, որ մինչև ցերեկվա ժամը 2-ը շարունակվող արարողությանը մասնակցելու գնացողների թիվը օրը բացվելուն պես ավելի ստվարացավ և կային կանայք, ովքեր երկրորդ անգամ էին գնում գերեզմանոց (CB, IV, 261-262):

**Հայերի դավանանքը, դավանափոխություն, «Իմամ Ջաֆարի» օրենքը:** Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ըը Բրյուիկնը Նոր Ջուղա էր այցելում Շահ Հուսեյնի իշխանության ժամանակ, երբ Պարսկաստանում թափ էր ստացել կրոնական անհանդուրժողականությունը, ապա այս երևույթի վերաբերյալ նրա վկայությունները ստանում են կարևոր աղբյուրագիտական արժեք: Թե ի՞նչ թափ էր ստացել հայերի մահմեդականացման գործընթացը Նոր Ջուղայում այդ ժամանակ, թերևս կարելի է դատել նրա իսկ բերած մի ցայտուն օրինակից: Այսպես, ըստ նրա վկայության, հայերից շատ նշանավոր անձինք ուրանալով քրիստոնեական հավատքը, մահմեդականացել էին՝ «հարստանալու և մեծ ունեցվածք կուտակելու նպատակով»: «Այսպիսի հավատուրացներից մեկն ուխտագնացություն էր կատարել դեպի Մեքքա և Մեդինա՝ Մուհամմեդի գերեզմանն այցելելու: Վերադարձին հայերից շատերը շտապեցին նրան ընդառաջ գնալ և հազար գովաբանություն անել, բայց դրա փոխարեն ոչ ոք չդիմավորեց Երուսաղեմից վերադարձող որևէ քրիստոնյայի և չգովաբանեց նրա արարքը» (CB, IV, 239-240)<sup>98</sup>:

<sup>98</sup> 17-րդ դ. վերջին, 18-րդ դ. սկզբին Նոր Ջուղայում հայերի բռնի կամ կամավոր հավատափոխության մասին վկայություններ կան բազում աղբյուրներում: Այսպես, ըստ հայ ժամանակագրի «թուին ՌՃԼԲ (1683) շահ Սուլեյմանն ջրարևեաց օրն Ջուղայու Հայոց ԻԷ (27) հարսն ու աղջիկ բաշեց և ուրացոյց գնոսա» (տե՛ս Մանր ժամանակագրություններ.

խոսելով պարսկական օրենքների ու սովորությունների մասին ըը Բրյուիկնը հիշում է այդ օրենքներից մեկը, որը պատմագրության մեջ հայտնի է որպես «Իմամ Ջաֆարի» օրենք: Համաձայն սրա, մահմեդականություն ընդունած նախկին քրիստոնյան իրավունք է ստանում լիովին ժառանգել իր քրիստոնյա ազգակիցների ողջ ունեցվածքը՝ անկախ ազգակցության աստիճանից<sup>99</sup>: «Եթե որևէ քրիստոնյա, կամ այլ հավատքի կրող, ընդունում է պարսկական կրոնը, նա ժառանգում է իր ազգականների ողջ ունեցվածքը, ի տարբերություն մյուսների, որոնք չեն հավատափոխվել, ինչպես ինքը: Այն դեպքում, երբ միաժամանակ երկու քրիստոնյաներ են ընդունում պարսկական հավատքը, երկուսի ժառանգներից ամենամոտը իր քրիստոնյա բուրդ վախճանված ազգականների միակ ժառանգորդն է համարվում» (CB, IV, 194): Շահ Հուսեյնի իշխանության ժամանակ Ջուղայում, հատկապես ունևոր խավի մեջ այս օրենքի ավերիչ գործունեության մասին է հաղորդում նաև Գանձասարի հայոց կաթողիկոս Եսայի Հասան Ջալալյանը. «Նմանապես և այլ բազմահոյլ չարիս յորդեցին, ուստերս և դստերս ուժգին քարշելով, զարս էլ գկա-

կազմեց Վ. Հակոբյան, Երևան, 1951, հտ. 1, էջ 303): Համաձայն Չաբարիա Ազուլեցու վկայության «թուին ՌՃԻ (1671) մայիսի ԻԲ (22) Ըսպիանայ Ջուղայ մին Ռհան անուն չի վարդապետ ջուղեցի, սայ բուրդացաւ (իմա՛ մահմեդականացավ - Է. Թ.), շատ զարար տվեց Ջուղու, ևս առավել հավատի պակասություն: Անուն եղին Շիւ-Մումին» (Չաբարիա Ազուլեցու օրագրությունը. Եր., 1933, էջ 103): Ժամանակագիրը լրացնում է այս վկայությունը. «Եւ սոյն ամին թուրքացաւ Շիւմումինն և վատ ասաց Շիւայի խանին և եղ հարկ ի մերայ եկեղեցեացն Ջուղայու» (Մանր ժամանակագրություններ, հտ. 1, էջ 303):

<sup>99</sup> Այս օրենքի գործունեության մասին Արևելյան Հայաստանում տե՛ս Բ. Դ. Փափազյան. Սեֆյան Իրանի ասիմիլյատորական քաղաքականության հարցի շուրջը, - Բանբեր Մատենադարանի, հտ. 3, Երևան, 1956, էջ 88-91, Կարապետյան Մ. Մ. «Իմամ Ջաֆարի» օրենքը և արևելահայերը (17-18-րդ դդ.) - ՊԲՀ, 1988, 1, էջ 219-221; Նույնի, Le diocèse arménien catholique du Nakhitchevan. Formation ethnique et processus ethno-confessionnels aux XVIIe-XVIIIe siècles, - Roma-Armenia, sous la direction de Claude Mutafian, Roma, 1999, pp. 322-326:



նայս բռնի ուրացուցանելով, և գլխամասացելոց զինչսն և զստացուածսն և զգանձս յափշտակելով՝ և ուրացողացն տալով. որպես և որքան տովաթավորս և մեծատունս աջօք մերովք տեսաք ի Ջուղայ»<sup>100</sup>:

Լը Բրյուկինն իր «Ուղեգրության» մեջ մանրամասնորեն պատմում է 1703 թ. յուլիսի 20-ին Նոր Ջուղայում մահմեդականների ձեռքով նահատակված Երևան թաղի բնակիչ Գրիգոր Ասատուրի սպանության հանգամանքները: Այս նկարագրությունը զգալի տարբերություններ ունի հայագիտությանը յայտնի «Լույս Գրիգորի» նահատակության այն տարբերակից<sup>101</sup>, որի բնագիրը, ըստ Նոր Ջուղայի տարեգիր Տեր Յովհանյանցի, «էր տետրակ մի փոքրիկ, որոյ պատմողն ոչ էր յայտնի, այլ էր ժամանակակից, և թերևս ականատես նոյն հայն էր, որ ներկայ էր ի ժամ նահատակությանն Գրիգորի: Շարադրությունն էր խառն ու շփոթ»<sup>102</sup>:

Լը Բրյուկինը, որը Նոր Ջուղայում էր գտնվում այս իրադարձությունից մոտ մեկ տարի հետո, ամենայն հավանականությամբ, հայերից լսելով այս դեպքի մասին պատմում է հետևյալը. անհամաձայնության պատճառով իրար հետ թշնամացան մի անգլիացի վաճառականի ծառաներն ու մի քանի հասարակ ծագում ունեցող պարսիկներ: Վերջիններս, վրեժխնդրությամբ լցված, շշուկներ տարածեցին, թե այդ վաճառականի հայազգի ծառայողը սպանել է իրենց հայրենակիցներից մեկին և այդ պատճառով փակեցին իրենց թաղի բոլոր կրպակները: Ենթադրյալ սպանությունից հուզված՝ ժողովուրդը բողոքեց մեծ Թայիֆին, որը մահմեդականացած վրացի էր: Վերջինս, որևէ

<sup>100</sup> Եսայի Յասան Ջալալեանց. Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի. Երուսաղէմ, 1868, էջ 18: Շահ Յուսէփի օրօք Նոր Ջուղայում մահմեդականացած հայերի մասին հմտ. Յ. Տեր Յովհանեանց. Պատմութիւն Նոր Ջուղայու, հտ. 1, էջ 201-209:

<sup>101</sup> Յայոց Նոր վկաները (1155-1843), աշխատութեամբ Յ. Մանանդեանի և Դ. Աճառեանի. Վաղարշապատ, 1903, էջ 538-551:

<sup>102</sup> Դ. Տեր Յովհանեանց, նշվ. աշխ., հտ. 1, էջ 221, ծանոթ. 3:

հրամանի չսպասելով, իր մոտ կանչեց վաճառականի հայ թարգմանչին և նրան մի թուղթ ստորագրել տվեց, որով նա կամ ստիպված էր ընդունել սպանությունը, կամ էլ որոշակի գումար վճարել: Ըստ լը Բրյուկինի, ոչ մի դժվարություն չկար այստեղ, մանավանդ որ թարգմանիչը լավ գիտեր, որ ծառայողը մարդասպան չէ և նույնիսկ մեղադրեց իր հայրենակցին: Դա նրա համար այնքան դյուրին էր, որ նույնիսկ հարկ չեղավ դիմել անգլիացի տիրոջը, որն իր հեղինակությամբ կարող էր ամեն ինչ հարթել և այդ ժամանակ էլ հիվանդ էր:

Այդ պահին ամբոխը աղմուկ բարձրացրեց հասարակ ծագում ունեցող պարսիկի մահվան առիթով, որին գավազանով մի քանի հարված էին հասցրել վատ արարքի համար, նրանք մարդասպան էին կոչում բոլոր ֆրանկներին (ինչպես բոլոր եվրոպացիներին): Այս գործի վերաբերյալ բողոք ներկայացվեց արքունիք:

Չբավարարվելով սրանով, Չարբախ տարվեց մի հանգուցյալի մարմին՝ ամբոխի երևակայությունը բորբոքելու նպատակով: Անգլիացի վաճառականը, միաժամանակ, հրաման ստացավ ազատվել իր բոլոր մահմեդական ծառաներից:

Մեղադրվող հայն այդ ընթացքում գնաց Նոր Ջուղա, ուր նրան դավաճանեց նաև թարգմանիչը և նրան մատնեց արդարադատության սպասավորների ձեռքը, որոնք էլ նրան բանտարկեցին: Այս որոշումից դժգոհ, ամբոխը պահանջեց և ի վերջո՝ իր ձեռքը զգեց նրան: Ծաղրուծանակից հետո, նրան առաջարկեցին մահմեդականություն ընդունել՝ խոստանալով կյանք ու ազատություն, նաև, խոշոր գումար և ձեռնտու ամուսնություն: «Բայց նա վեհանձնաբար հրաժարվեց պարգևներից՝ չնայած որ մահն աչքի առջև էր: Նա նույնիսկ մի քանի դավանափոխ հայերի, որոնք նրան թախանձում էին մահմեդականանալ, ասաց, որ երրեք չի ուրանայ իր Փրկչին ու իր Աստծուն: Սրա վրայ կատաղած պարսիկների ատելությամբ լցված ամբոխը հարձակվեց նրա վրա և սպանեց նրան, որից հետո նրա դիակը քարշ տվեցին արքունի մեծ հրապարակը, ուր նույնիսկ կանայք դաժանորեն անարգեցին այն: Այսպես մահացավ այս հերոս քրիստոն-

յան... նրա անունը Գրիգոր Ասատուր (Gregoire Assadoer) էր և բառն տարեկանը դեռ չէր լրացել» (CB, IV, 250-253):

Նահատակի մարմինը տեղափոխվում է Նոր Զուղա և թաղվում Սուրբ Ամենափրկիչ եկեղեցու բակում, ուր մի հայ վաճառական նրա շիրմի վրա սեփական ծախսերով տապանաքար է կառուցում «այս գեղեցիկ մահվան հուշը հավերժությանը հանձնելու նպատակով, ինչպես նաև հանգուցյալի հետ իր ընկերության վկայության համար»<sup>103</sup>:

Համաձայն լը Բրյուկնի, ահավոր էր այն մթնոլորտը, որ առաջացավ օտարերկրացիների մոտ այս բարբարոսական մահվանից հետո Սպահանում: Նրանք մի քանի օր չէին համարձակվում երևալ, վախենալով կրկին հանդիպել վրդովված ամբոխի կատաղությանը, որի անպատժելիությունը նրան անկառավարելի էր դարձնում: Ամփոփելով վերոհիշյալ ողջ նյութը, վստահորեն կարելի է ասել, որ լը Բրյուկնի հաղորդումներն ու վկայությունները նրանց դասակարգումն ու համեմատական ուսումնասիրությունը կարևոր արժեք են ներկայացնում գաղութահայոց պատմության ու ազգագրության հետազոտման գործում:

<sup>103</sup> Տապանագրի հրատարակությունը տե՛ս Յ. Տեր Յովհաննեսը, Եզվ. աշխ., հտ. 1, էջ 219-220: Հմմտ. Հայոց նոր վկաները, էջ 549-550:

## XVII ԴԱՐԻ ՎԵՐՋԻ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՀԱՅ ԳԱՂԹՕԶԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԻՑ

1698 թ. Նոր Զուղայի Սուրբ Ամենափրկչի վանքի միաբաններից երեք եպիսկոպոսներ մի նամակ են ուղարկում Եվրոպա՝ Վենետիկ: Փաստաթղթի վերին ծախս անկյունում իրար կողքի դրված կնիքների մեջ հստակ կարդացվում են փաստաթղթի հեղինակների անունները. «Յիսուսի Զրիստոսի Ժառայ Դաւիթ վարդապետ», «Յիսուսի Զրիստոսի Ժառայ Միքայել վարդապետ», «Յիսուսի Զրիստոսի Ժառայ Մովսես վարդապետ Հողեցի»<sup>104</sup>: Երեքն էլ Նոր Զուղայի Սուրբ Ամենափրկչի վանքի եպիսկոպոսական դասից էին XVII դարի վերջին քառորդում, Ստեփանոս Զուղայեցի արքեպիսկոպոսի առաջնորդության (1683-1696) տարիներին: Դեռևս 1677 թ. Նոր Զուղայում գրված հիշատակարաններում բոլորը հիշվում են միասին. «Աւարտեցաւ գիրըս ի Հսպայիան, ի գեօղն որ կոչի Զուղայ, ի հայրապետությանն Տեառն Ըստեփանոսի և եպիսկոպոսիս չորից Միքայել և Աղէքսանդր, Մովսեսի և Դաւիթ»<sup>105</sup>:

Իրենց Ստեփանոս Զուղայեցու հոգևոր որդիներ համարող այս չորս միաբանները առկա են Սուրբ Ամենափրկչի վանքի միաբանների բոլոր հայտնի ցուցակներում<sup>106</sup>: Իտալիա ուղարկված նամակի տակ չկա միայն Աղէքսանդր արքեպիսկոպոսի ա-

<sup>104</sup> Փաստաթղթի հայերեն բնագիրը տե՛ս Archivio storico della Sacra Congregazione per l'evangelizzazione dei popoli o "De Propaganda Fide", Scritture riferite nei Congressi (SC) Armeni, vol. 5, f. 540r, ժամանակին կատարված լատիներեն թարգմանությունը տե՛ս Նույն տեղում, SC Armeni, vol. 4 (1688-1702), ff. 555r-559v.

<sup>105</sup> Տե՛ս Յուզակ ձեռագրաց Նոր-Զուղայի Ս. Ամենափրկչեան վանաց թանգարանի, Հտ. Բ, Կազմեց Լ. Գ. Մինասեան, խմբագրութեամբ Օ. Ս. Եգանեանի, Վիեննա, 1972, էջ 130:

<sup>106</sup> Տե՛ս Յուզակ հայերեն ձեռագրաց Նոր-Զուղայի Ս. Ամենափրկչի վանքի, Հտ. Ա, Կազմեց Ս. Տեր-Աւետիսեան, Վիեննա, 1970, էջ 200, 474, 503-504, 750-752:

տունը, որ մի քանի տարուց դարձավ Սուրբ Ամենափրկչի առաջ-  
նորդ և ապա Էջմիածնի կաթողիկոս (1705-1715):

**Նամակի հասցեատերը.** Նամակը հասցեագրված էր նշա-  
նավոր հայ վաճառական, ծնունդով թավրիզեցի Մաթոսի որդի  
պարոն Աղային, որ բնակվում էր Լիվոռնոյում և ոչ Վենետիկում,  
ինչպես նշված է նամակում: Թավրիզից Լիվոռնո տեղափոխված  
Մաթոսի որդի պարոն Աղա Տերտերյան Օղլանքեշիյանցն էր,  
որ եղավ Լիվոռնոյի հայոց եկեղեցու կառուցման նախաձեռնու-  
ղը<sup>107</sup>:

Ստեփանոս Ջուղայեցու կողմնակիցները իզուր չէին ընտրել  
պարոն Աղային: Վերջինիս տարբեր խնդրանքներով դիմում էին  
ինչպես Էջմիածնի կաթողիկոսները, Պոլսի, Երուսաղեմի պատ-  
րիարքները, Ջուղայի Ամենափրկչի առաջնորդները, այլ տարբեր  
աշխարհիկ անհատներ՝ խնդիրներով, որոնք այս կամ այն կերպ  
կրում էին համազգային բնույթ: Մեր ձեռքի տակ են Աղային ուղղ-  
ված Նահապետ կաթողիկոսի, Ջուղայի նոր առաջնորդ Ալեք-  
սանդր արքեպիսկոպոսի, Չմյուռնիայի առաջնորդ Մարտիրոս  
վարդապետի, Երուսաղեմի Պողոս պատրիարքի, Սսի Ազարիա  
կաթողիկոսի և այլոց տարբեր բնույթի նամակները<sup>108</sup>:

<sup>107</sup> Սպանվեց իր «վրացի» սպասավոր Բեջանի ձեռքով 1709 թ. (տե՛ս Ղ.  
ԱԼԻՇԱՆ. Միսական, Վենետիկ, 1893, էջ 452, Մ. Վ. ՈՒՂՈՒՐԼԵԱՆ. Պատ-  
մություն հայոց գաղթականության և շինության եկեղեցույ նոցա ի  
Լիվոռնոյ քաղաքի, Վենետիկ, 1891, էջ 84-93, այստեղ էլ հրատարակված  
է նրա տապանագիրը, ուր վերջինս կոչված է «Աղա տե Մաթոնս Աստուա-  
ծատուր պարոն հայազարմ յևդուանից իշխանաց առ Կասպից ծովու  
Օղլանքեշիյանց»: Հմմտ. նաև Mesrop Owl'orlean. Storia della colonia  
armena di Livorno e della costruzione della sua chiesa. Presentazione, tra-  
duzione e note Alessandro Orenco, Livorno, 1990, pp. 72-78, 80, 85, 90):

<sup>108</sup> Այս թղթերը հավաքված են Ս. Ղազարում, Մխիթարյան Միաբանության  
Մատենադարանի N 1458 ձեռագրում (տե՛ս Հ. Բ. Սարգիսեան. Մայր  
ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենե-  
տիկ, Վենետիկ, 1924, էջ 1233-1248):

ժամանակին Նոր Ջուղայի տպարանին օգնելու խնդ-  
րանքներով պարոն Աղային էր դիմել նաև Ստեփանոս Ջուղայե-  
ցին: Վերջինիս գրած թղթերից մեզ հայտնի են հետևյալները.



1. «Թուղթ Ստեփանոս Վարդապետի՝ առաջնորդ արքայա-  
նիստ մայրաքաղաքին Իսպահանու և քրիստոսախնամ գեղա-  
քաղաքին Ջուղայու...ի վերայ Վենետիկ քաղաքի եղեալ ջուղայե-

ցի...վաճառականաց» - 1686 թ. սեպտեմբերի 27,- հաղորդում է Ջուղայում Խաչատուր վարդապետի տպարանը վերահաստատելու մասին, ուստի դիմում է նրանց օգնությանը և թուղթ խնդրում գիրք տպելու համար: «Երկու չափի, մեկը՝ փոքր գրքեր տպելու համար, մեծը՝ ճաշու գիրք և Հայսմավուրք: Այդպիսի մի գիրք տպեցինք 1686 հուլիսի 5-ին...» (Ս. Ղազարի Մատենադարան, ձեռ. թիվ 1458, թղ. 134ա-135բ):

2. «Գիր Ստեփաննու Վարդապետի, առաջնորդ գեղաբաղաքին Ջուղայու... ի վերայ... Վենետիկ, Ալեկոնայ և Ջենովայ եղեալ ջուղայեցի վաճառականաց... Պարոն Գրիգորիդ, պարոն Ամպրում աղիդ, պարոն Փանոսիդ, պարոն Պետրոսիդ, պարոն Յակոբջանիդ, պարոն Եավրե, պարոն Պողոսիդ, պարոն Ջլապխանիդ,... պարոն Աղէ, պարոն Աստուածատրէ...» - տպարանին օգնելու պահանջ-խնդրանքով՝ «բանգի հասարակ և ընթանուր Ֆռանկաց երկիրների դովաւ, այսինքն տպով պարծի շինի և հաստատի. ո՞չ ապաքէն ազգս այլ ըստ՞ իւր չափուն՝ ազգ մի և բանական գոն. մինչև յե՞րբ այլոց թուրք ընթեռնուցումք զօրէնս և զօրինադրությունս մերոյ և անգիտելի թողուլ զմեր վաղնջոց սրբոց հարց գրեանս...» - 1686 թ. նոյեմբերի 20-ին (Ս. Ղազարի Մատենադարան, ձեռ. թիվ 1458, թղ. 138բ):

3. «Թուղթ Ստեփանոսի վարդապետի՝ աշակերտի մեծափառ և երջանկապատիւ, շնորհազարդ տեառն Յակոբայ սրբազան կաթողիկոսի, առ պարոն Անտոն Չելեպի» (Լիվոռնո) - 1687 թ. ապրիլի 17,- հայտնում է, որ ինքն ու եղիազար կաթողիկոսը շատ մտահոգ են իր հիվանդությամբ, իսկ զանգակատան (Էջմիածնի՞) շինության համար հոգացած դրամը լավագույն ձևով պետք է հասցնել իրենց ձեռքը (Ս. Ղազարի Մատենադարան, ձեռ. թիվ 1458, թղ. 137բ-138ա):

4. «Յիսուսի Զրիստոսի ծառայ Ստեփանոս Վարդապետ, յորմէ ևս ի վերայ Թարվիզըցի Պարոն Աղիտ» - Հանդիմանական ոճով նամակ է առ այն, որ Եվրոպայում քնակվող ջուղայեցի վաճառականներից ոմանք, իմանալով, որ թղթի և տպագրական նյութերի մեծ պակաս կա, չեն օգնում Ջուղայի տպարանն աշ-

խատեցնելու գործում, պարոն Աղին պատվիրում է 300 մառչիլի թուղթ առնել (մեծադիր՝ «չափն Ոսկան Վարդապետին Աստուածաշնչին լինի»)՝ Հայսմավուրքը տպելու համար: Ուզում է նաև Աստուածաշնչի միջի պատկերներ՝ «ղալուպովն ուղարկես» - 1690 թ. ապրիլի 24 (Ս. Ղազարի Մատենադարան, ձեռ. թիվ 1458, թղ. 135բ-136բ):

### Ստեփանոս Ջուղայեցի

Ստեփանոս Ջուղայեցու առաջնորդության տարիներն անցան Նոր Ջուղայում կաթոլիկ միսիոներների հետ դաժան պայքարում: Ստեփաննոս Ջուղայեցու կողմից կաթոլիկների հալածման մասին լատին աղբյուրները հռոմի գեկուցել էին շատ ավելի վաղ: Այսպես 1679 թ. սեպտեմբերի 22-ին ֆրանսիացի վեդարավորներից մեկը՝ Fr. Giuseppe de Burges-ը, Թավրիզից կարդինալներին գեկուցում էր, որ արդեն երկու տարի առաջ այստեղ եկած Բարսեղ Էրզրումցու դեմ մեծ հալածանք սկսեցին Հակոբ Ջուղայեցին և հատկապես Ստեփաննոս վարդապետը՝ Ջուղայի եպիսկոպոսը: Այնուհետև գրում էր, որ ինչպես կաթողիկոսի, այնպես էլ Ստեփանոսի կողմից Բարսեղին հասցեագրված նամակները ձեռք բերելով, ուղարկում է հռոմ: Հավաստիացնում էր նաև, որ հայ վարդապետներից ոչ մեկը եկեղեցիների միության կողմնակիցը չէ<sup>109</sup>: Քիչ ավելի ուշ, Ֆրանսուա Պիկեն, 1682 թ. Սպահանից իր գեկուցագրերում տեղեկացնում էր, որ Սպահանի միսիան գոհացուցիչ չէ, բանի որ միսիոներները ապրում են Ջուղայից դուրս, մահմեդական միջավայրում և միայն կարմելիտ Հայր Եղիան լավ գիտի թուրքերեն և պարսկերեն, քայց ո՞չ հայերեն: Հայերի Նոր արքեպիսկոպոսը՝ Ստեփանոսը կաթոլիկների նկատմամբ շատ թշնամաբար է տրամադրված և «հակապապական է»: 1680-81 թթ. հայերի և ֆրանսիկների միջև ամուսնությունները

<sup>109</sup> SC Armeni, vol. 3, ff. 189r-190v: Կարմելիտների կողմից բռնագրաված Հակոբ Ջուղայեցու, նրա տեղապահ Միքայել վարդապետի այս նամակները, որ պահվում են Հավատասփյուռ ժողովի դիվանում, առանձին հրապարակման նյութ են:

արգելված են: Հայերը, որոնք այցելում են կաթոլիկներին կամ միսիոներներին՝ իրենց հոտից վտարված են: Ջուղայում կաթոլիկներն ունեն մեկ մատուռ, որը գտնվում է Շեհրիմանյանների տանը և մինչև 1682 թ. այն սպասավորում էր [երգրումցի] Բարսեղը, մի վարդապետ, որը 8-10 տարի սովորել էր Հռոմում<sup>110</sup>:

Ստեփանոս Ջուղայեցու և միսիոներներից մոտ 20 տարի առաջ Սպահան ուղարկված և Նոր Ջուղայում հաստատվելու համառ փորձեր անող կարմելիտական հայր Եղիա եպիսկոպոսի և նրա խմբի միջև պայքարը թեժացավ 1690-ական թվականների սկզբին: Հռոմի Հավատաստան Ժողովի փաստաթղթերում, «կաթոլիկների հալածիչ» (*persecutore cattolici*) կոչվող Ստեփանոս Ջուղայեցու կողմից միսիոներների դեմ մղած պայքարի մասին Հռոմ ուղարկված ականատեսի վկայություններից է Նախիջևանի հայ կաթոլիկների առաջնորդ, արքեպիսկոպոս Պողոս Մկրտչի 1694 թ. հուլիսի 24-ի Սպահանից գրած իտալերեն նամակը: Համաձայն այս նամակի, Եղիա կարմելիտական եպիսկոպոսը, Շեհրիմանյան եղբայրների օգնությամբ Ջուղայի մեջ գնել էր մի փոքրիկ տուն՝ եկեղեցի շինելու նպատակով: Լսելով այս լուրը՝ Ստեփանոս եպիսկոպոսը բազմաթիվ հոգևորականների գլուխն անցած, նաև աշխարհականների ուղեկցությամբ հարձակվում է այդ տան վրա, ուր ապրում էր Եղիան և կամենում է կործանել: Մարգար Շեհրիմանյանի միջամտությամբ այս ձեռնարկը կասեցվում է: Մի քանի օրից, երբ Պիդուն օրհնում է առաջին քարը և եկեղեցին սկսում է բարձրանալ, Ստեփանոսը միանում է թուրքերին, կործանում պատերը և ստորագրություն ավերցնում Եղիա եպիսկոպոսից, որ նա այլևս չպետք է ոտք դնի Նոր Ջուղա: Այնուհետև Ստեփանոս եպիսկոպոսը, կատաղած, Շեհրիմանյաններին մատնում է շահին՝ ասելով, թե Հայոց կրոնը թողած դարձել են լատին և ուզում էր նրանց կրակի վրա այրելու որոշում ստանալ: Շահը, ճիշտ է, այդպիսի որոշում չի կայաց-

<sup>110</sup> St' u Fr. RICHARD. Raphaël du Mans, missionnaire en Perse au XVIIe s., I. Biographie. Correspondance. Paris, 1995, p. 111.

նում, բայց Շեհրիմանների վրա տաս հազար սկուդ դրամի տուգանք է դնում: Սրանից զատ չբավարարվելով Ստեփանոսը ձգտում էր Ջուղայից վնդել դոմինիկյաններին, հիսուսյաններին, նույնիսկ ուզում էր իր նահանգը կործանել (իմա՝ Նախիջևանի հայ կաթոլիկ թեմը)<sup>111</sup>:

1696 թ. մայիսի 6-ին գրված և Պապին հասցեագրած իր հաջորդ նամակում, Նախիջևանի Պողոս Մկրտչի արքեպիսկոպոսը Սպահանից կրկին հաղորդում էր կաթոլիկների հալածանքների մասին, որ կրում էին հերետիկոսներից ու հերձվածողներից: Միաժամանակ խորհուրդ է տալիս Պապին Լեհաստանի կամ Ֆրանսիայի դեսպանի ձեռքով մի նոր նամակ ուղարկել նոր շահին և իրենց ազատել հալածանքներից<sup>112</sup>:

Ստեփանոս Ջուղայեցու և կաթոլիկ միսիոներների խիստ լարված հարաբերությունների մասին են վկայում ստորև հղվող նամակները: Ավելացնենք միայն, որ 1696 թ. վերջին Ստեփանոսը օծվում է նաև Էջմիածնի կաթողիկոս, ապա գահընկեց արվում Նահապետ կաթողիկոսի կողմից, դրվում բանտ, ուր և 1698-ին կնքում է իր մահկանացուն<sup>113</sup>:

<sup>111</sup> St' u SC Armeni, vol. 4, ff. 331r-332v. Այս հեղինակը, երբ խոսում է իր՝ այսինքն՝ Նախիջևանի կաթոլիկ համայնքը կործանելու Ստեփանոսի ցանկության մասին, իր խղճին մեղք է վերցնում, քանի որ այդ ժամանակ այն արդեն ըստ էության կործանված էր:

<sup>112</sup> St' u SC Armeni, vol. 4, ff. 403r. Վերջինս Նախիջևանից 1696 թ. հունիսի 6-ին նույն բովանդակությամբ ևս երկու նամակ է ուղարկում Հռոմ (SOCC, vol. 526, ff. 197+200, 201). Այս մասին մանրամասն տե՛ս նաև Nouvelles d'Isphahan. 1665-1695. Publiées par Anne KROELL, Paris, 1979, pp. 79-86.

<sup>113</sup> Այս մասին մանրամասն տե՛ս Վ. ՂՈՒԿԱՍԵԱՆ. Ստեփանոս կաթողիկոս Ջուղայեցի, «Հասկ» հայագիտական տարեգիրք, Անթիլիաս, 1981-1982, էջ 313-344, այստեղ էլ տե՛ս Ջուղայեցու կտակը: Ժամանակակիցների կողմից Ստեփանոս Ջուղայեցին բնութագրվում էր որպես. «ամուլն հալատոյ և սիւնն եկեղեցոյ» տէր Ստեփանոս Ջուղայեցի համաընթաց սուրբ հարցն, վարուց քաջ և վրեժ խնդրող օրինացն Աստուծոյ և հաստատիչ կարգաց եկեղեցոյ և հետևող հալատոյ ուղղափառության, այր պարկեշտ և բազում վշտաց համբերող, որ կայ յաւուրս մեր և վարե զիշ-

### Եղիա կարմելիտականը Նոր Ջուղայում

Վերադառնալով վերևում հիշատակված Չայր Եղիա կարմելիտականին (Elia di St. Albert), ասենք, որ վերջինս ծնվել է 1643 թ. հունվարի 28-ին Մոնսում (Բելգիա, ավագանի անունը Laurent Mouton): 1660 թվականից Լուվենի համալսարանում 4 տարի ուսանել է մաթեմատիկա և բժշկություն: 1675 թ. արդեն Չոմում էր, Սան Պանկրատիոսի կարմելիտական միսիայում: Մեկ տարի հետո ընդգրկվել է Պարսկական միսիայի մեջ: 1677 թ. Սպահանում է, 1693-ից՝ Սպահանի լատին եպիսկոպոս: Գիտեր պարսկերեն և թուրքերեն, բայց ոչ հայերեն: Եղել է Սպահանի լատին պրովինցիալ տեղապահը՝ 1687-1696 թթ.<sup>114</sup>:

Սրա գործունեությունը այս փուլում համընկավ Արևելքում, կարելի է ասել բոլոր ժամանակների Չոմի և Ֆրանսիայի ամենախոշոր միսիոների՝ Ռաֆայել դյու Մանի գործունեության հետ: Մոտ կես դար Պարսկաստանում անցկացրած Ռաֆայել դյու Մանի կյանքի վերջին տաս տարիները լի էին հակամարտություններով: Իրատես միսիոների համար հայ եկեղեցին աստիճանաբար շրջվում էր միության հեռանկարներից, չնայած, որ ժողովրդի փոքրաթիվ կաթոլիկ մասը հենվում էր միսիոներների

խանություն կաթողիկոսության» (տե՛ս Ա. ՉՈՎՅԱՆՆԻՍՅԱՆ. Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հտ. 2, Երևան, 1959, էջ 302):

<sup>114</sup> Եղիա եպիսկոպոսի կենսագրությունը և գործունեությունը տե՛ս A Chronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the XVIIIth and XVIIIth Centuries. Vol. II, London, 1939, p. 859-866 (այստեղ էլ հրապարակված է նրա նամակների ոչ լրիվ ցանկը), AMBROSIOUS A ST. TERESIA. Hierarchia Carmelitana, Roma (s. d.), pp. 16-26. P. L. LEMMENS O. F. M. Hierarchia Latina Orientis. 1622-1922, Roma (Orientalia Christiana, vol. II, 4, num. 10), 1924, pars II, pp. 265-274): Կարմելիտների Չոմի կենտրոնական դիվանում 320e թվի տակ պահվում է Եղիա եպիսկոպոսի վարքագրական «Vita P. F. Elia a S. Alberto...» գործը, շարադրված Ֆր. Մարիի կողմից: Այստեղ են պահվում նաև Եղիա կարմելիտականի և նրա խմբի նամակները գրված Սպահանից և Նոր Ջուղայից XVII դարի վերջին քառորդում, որոնք կարևորություն են ներկայացնում նաև հայոց պատմության շատ հարցերի լուսաբանման համար:

վրա, ցանկանալով այն կրկին վերահաստատել: Դավանաբանական վեճերը կատարելագործվել էին: Կատարվում էր այն, ինչ տասնյակ տարիներ շարունակ զգուշացնում էր հայր Ռաֆայելը, երբ խնդրում էր ձեռք բաշել հայերին կաթոլիկացնելու մտքից:

Ռաֆայել դյու Մանը և Եղիա կարմելիտականը այս օրերի ժամանակակիցներն ու գործակիցներն էին: Եղիա կրոնավորը Չոմի այն հազվագյուտ միսիոներներից էր, որին Ռաֆայել դյու Մանը դրականորեն էր վերաբերվում և իր մահից առաջ, 1693 թ. հոկտեմբերի 2-ին հետևյալ բնութագիրն էր ուղարկել Չոմ. «Իբրև ականատես պիտի ասեմ, որ այն ժամանակվանից, երբ հայր Եղիան, վերոհիշյալ օրդենի շատ հարգելի պրովինցիալը, երջանկությամբ միացավ հայկական միսիաներին, նրա հոտի բոլոր հոգևորականները նրան ենթարկվում են և աշխուժորեն աշխատում միսիայի համար, օգնում են իրենց հնարավորության սահմաններում բոլոր մյուս միսիաներին և շատ երկար կլիներ թվել այն բարեգործություններն ու ծառայությունները, որ հայր Եղիայի դարձի բերած հայերը մատուցել են ժամանակակից գործերին: Ահա թե ինչու բոլոր միսիոներները, լինեն հիսուսյան, դոմինիկյան, վեղարավոր միսիաների ֆրանսիացի քահանաներ, պետք է շատ երախտապարտ լինեն Չայր Եղիային և ողջունեն նրան շնորհաշատ անկեղծությամբ: Այս ամենը մենք վկայում ենք ականատեսի անաչառությամբ»<sup>115</sup>:

Կարծում ենք Չայր Ռաֆայելի կարծիքը, Շեհրիմանյանների երաշխավորությունների կողքին, վերջին դերը չի խաղացել Եղիա կարմելիտականին Սպահանի եպիսկոպոս օժելու գործում, ինչպես նաև ճշգրտելու Սպահանի եպիսկոպոսի իրավասության սահմանները: Չպետք է մոռանալ, որ մինչ Եղիա կրոնավորի Պարսկաստան ժամանելը, արդեն մոտ կես դար այնտեղ գտնվող Չայր Ռաֆայելն էր ճամփա հարթել՝ մյուսների շարքին նաև սրա գործունեության համար: Ռաֆայել դյու Մանն էր, որ շարաթ և կիրակի օրերին այցելելով Նոր Ջուղա, մի քանի կաթո-

<sup>115</sup> Fr. RICHARD. Op. cit., p. 311-312.

լիկ ընտանիքների համար պատարագելու հանգամանքով, ամենասերտ բարեկամական հարաբերություններ էր հաստատել Շեհրիմանյան ընտանիքի ավագի՝ Սահրատի հետ, որն ըստ վկայությունների, կաթոլիկ եկեղեցուն էր հարել արդեն 1646 թ.<sup>116</sup>: Իսկ Սահրատի որդիներից մեկը, Գասպարը արդեն 1660-ական թվականներից Խտալիայում էր՝ Լիվոռնոյում: Նա մի շոշափելի գումար (500 նումմոս) էր տրամադրել Հավատասփյուռ ժողովին, որպեսզի Հռոմից երաշխավորական նամակներ գրվեին Փարիզի պապական նվիրակին, որպեսզի սա էլ իր հերթին պաշտպան կանգներ և ֆրանսիական արքունիքի կողմից ոյուրություն ստեղծեր Գասպարի՝ դեպի Հնդկաստան ուղղված առևտրում<sup>117</sup>:

Փաստաթղթերը վկայում են, որ կարմելիտական Եղիա դը Սեն-Ալբերտը, որ վայելում էր հարուստ Շեհրիմանյան ընտանիքի հովանավորությունը և որոնք ցանկանում էին, որ նա Ջուղայի կաթոլիկ եպիսկոպոս ընտրվի, հակամարտության մեջ էր Բաբելոնի եպիսկոպոս Պիդուի հետ: Վեճի էությունը միսիոներական սահմանների անճշտությունն էր և երկկողմանի անբարյացկամությունը: Հավատասփյուռ ժողովի քննարկմանը բարձրացված հարցը Շեհրիմանյանների միջնորդության շնորհիվ լուծվում է Եղիա կարմելիտականի օգտին: 1694 թ. մարտի 16-ին Հավատասփյուռ ժողովի բարտուղարը օրվա նիստը համառոտել է. «1682 թ. նոյեմբերի 8-ին Հավատասփյուռ ժողովը որոշեց [Արևելքում] իր եպիսկոպոսական սահմանները, որ է՝

Սպահանի եպիսկոպոսի [իրավասության տակ է] պարսկական սահմանը, բացի Ասորեստանից, որ նույնպես պարսից թագավորի սահմանի մեջ է, նաև Մեծ Հայքը և ամբողջ Փոքրը, Նախիջևանը և Վրաստանը:

<sup>116</sup> Տե՛ս A Chronicle of the Carmelites in Persia, Vol. I, p. 376.

<sup>117</sup> Սահրատի որդի Գասպար Շեհրիմանյանի այս տարիների գործունեության որոշ ոլորտների մասին տե՛ս Հ. ՍԱՀԱԿ ՃԵՄՃԵՄԵԱՆ. Հայ տպագրությունը և Հռոմը (ԺԵ դար), Վենետիկ, Ս. Ղազար, 1989, էջ 98-101, 108-110, 117 և այլն:

Բաբելոնի եպիսկոպոսի իրավասության սահմանն է Ասորիքը, Միջագետքը, Բասրան, Մոսուլը և Ամիդը:

Բայց անցյալ մայիսի 4-ի ժողովում նկատի առնվեց Սպահանի բնակիչների, հատկապես Սահրատ ընտանիքի խնդրանքը: Սրանք Հայքի ամենակաթոլիկ, ազդեցիկ և սուրբ Աթոռի հանդեպ հարգանքով լցված ընտանիքն են, որ զանազան առիթներով մեծ գումարներ են ծախսել հանուն իրենց հավատքի, միսիոներների համար կառուցել են մի մեծ եկեղեցի և մեր ժողովին՝ եպիսկոպոսական այցելուների համար տվել են 8000 սկուդ արժողությամբ մի պալատ, ինչպես նաև ցանկանում են գնել մի վիլլա: Ժողովը ձերդ մեծությամբ [իմա՝ Պապին] առաջարկեց եպիսկոպոսի պաշտոնի համար Հայր Եղիա կարմելիտականին և դուք անցյալ օգոստոսին վավերացրիք նրա ընտրությունը, այժմ խնդրվում է ձեր հրամանը, որ այսուհետև Պիդուն չխառնվի նրա սահմաններում եղած գործերին, այլ մնա միայն Ասորիքի, Միջագետքի, Բասրայի, Մոսուլի և Ամիդի սահմաններում»<sup>118</sup>:

Նոր Ջուղա ժամանած, տարիքով երիտասարդ հայր Եղիա կրոնավորը շատ արագ գործի մեջ մտավ և արդեն 1681 թ. սեպտեմբերի 21-ին Սպահանից իր լատիներեն նամակում գրում էր կարդինալներին, որ Սպահանում իրենց դեմ մեծ ընդդիմություն կա, մանավանդ Ստեփան քորեպիսկոպոսից, որը [Նոր Ջուղայի առաջնորդ] Դավիթ եպիսկոպոսի փոխանորդն է: Վերջինս սաստկորեն արգիլեց ու նզովեց նրանց, ովքեր կաթոլիկ դպրոց են գնում կամ նպաստում են գնալուն: Արգիլեց խառնամուսնությունները կաթոլիկների հետ և եղածները լուծարեց:

<sup>118</sup> Տե՛ս SC Armeni, vol. 4, ff. 316rv+319r. Ընդհանրապես Սպահանի և Բաղդատի լատին եպիսկոպոսների հարաբերությունների մասին տե՛ս Տե՛ս SC Armeni, vol. 4, ff. 316rv+319r. Ընդհանրապես Սպահանի և Բաղդատի լատին եպիսկոպոսների հարաբերությունների մասին տե՛ս Josef Metzler. Nicht erfüllte Hoffnungen in Persien- In Sacrae Congregationis de Propaganda Fide. Memoria rerum. Vol. I/1, 1622-1970, Rom-Freiburg-Wien, 1971, SS. 687-696:

Այս Ստեփանը հատուկ հալածանք սկսեց նաև Հռոմում ուսանած Բարսեղ [Էրզրումցի] վարդապետի դեմ<sup>119</sup>:

### Շեհրիմանյանները և Հռոմը

Սպահանում և Ջուղայում Եղիա կարմելիտականի գործունեության կարևորագույն ոլորտներից էր համեմատաբար արևմտամետ Շեհրիմանյան գերդաստանը: Հետևելով Ե՛լ Եղիայի, Ե՛լ Շեհրիմանյանների թողած փաստաթղթային ժառանգությանը, կարելի է մոտավորապես նշանագծել պատմական այն դեպքերը, որ տեղի ունեցան Ջուղայում 17-րդ դարի վերջին քառորդում, ինչպես նաև հետևել Շեհրիմանյան ընտանիքի Եվրոպա տեղափոխվելուն, որը համընկնում է հայ առևտրական կապիտալի դեպի Եվրոպա տեղաշարժի գլխավոր փուլին: Ստորև կփորձենք լատին միսիոներների գրությունների հիման վրա նկարագրել այդ օրերի անցուդարձը Նոր Ջուղայում և Հռոմից եկող դրանց արձագանքները:

1683 թ. Եղիա կարմելիտականը դիմում է Հավատասփյուռ ժողովին, պատմելով Սարհատ գերդաստանից 5 եղբոր և իր հարաբերությունների մասին, խնդրում է թույլ տալ երկու կամ երեք աստիճանի ամուսնություններ կատարել այս ընտանիքում: Հավատասփյուռ ժողովի նիստում արձանագրված է. «1683 թ. սեպտեմբերի 28-ի նիստով քննեցինք Ջուղայի հինգ Սարրահաթ եղբայրների հարցը և հրաման տրվեց Պիկեին, որ թույլատրի երկրորդ կարգի ամուսնություններ: Պիկեի վախճանից հետո Հայր Եղիան խնդրում է ունենալ նույն իշխանությունը, որպեսզի կաթոլիկները դժվարությունների չհանդիպեն»<sup>120</sup>:

Հ. Եղիան 1686 թ. նոյեմբերի 30-ի Սպահանից Հավատասփյուռ ժողովին ուղղված լատիներեն նամակում գրում է.

<sup>119</sup> St' u SC Armeni, v. 3, ff. 476r-477v.

<sup>120</sup> St' u Acta, 1686 marzo 4, vol. 55, n. 25, ff. 55v-57v: Հ. Եղիայի 1683 թ. նամակի բնագիրը չենք գտել, սակայն թվականի ճշգրիտ նշումով այն մեջբերվում է ժողովի որոշման մեջ:

«Շուրջ երկու տարի առաջ գրեցի, բայց պատասխան չստացա, հավանաբար նամակը կորել է: Այստեղ համառոտում եմ նախորդ գրածս.

1. Խնդրել էի ձեզանից, որ հրաման տաք մեզ արձակելու ամուսնության արյան մերձավորության արգելքը. ինչ որ ստացանք և գործադրեցինք: 1684 թ. վերջին մեր շնորհակալության գիրը գրեցինք ձեզ և կցեցինք Սահրադ ընտանիքի նամակը և հավատո դավանանքը: Իրենք են, որ մեծապես օգտվեցին այդ արտոնություններից (privilegia):

2. Քանի որ հայերը միայն մեկ պատարագ (ձայնավոր) ունեն, խնդրում ենք, որ թույլատրվի թիվ պատարագը գործածել, վերածելով ձայնավորը, որպեսզի զանազան պատարագներ լինելով՝ կարողանան ներկա լինել, քանի որ հնարավոր չէ որ ամենքը նույն ժամին տունը թողնեն և եկեղեցի գան, մասավանդ, որ ավելի ուշ համաձայնած կլինեն լատին ծեսին:

3. Երբ Կնաքը եկավ և այստեղ ըստ դոմինիկյանների պատարագեց, այսինքն՝ լատին ծեսը հայ բառերով և գրով, հայերը տեսան և փափագում են նույնը անել այժմ: Այս մասին խնդրեցին ինձ: Սա կարող է նպաստել եկեղեցիների միությանը: Այս շնորհները Սահրատի դիմումի համաձայն խնդրեցի, քանզի դոմինիկյանների գործածած պատարագամատույցը մի քիչ տարբեր է լատինականից, խնդրեցի, որ լատինականը թարգմանվի հայերեն, ես էլ այդ գործին կմասնակցեմ:

4. Քանի որ այստեղ շատ տգետ են թե՛ եպիսկոպոսները և թե՛ նրանց ձեռնադրած քահանաները, որոնք իբր մկրտում են, ուստի կարելի է տարակուսել ծեսի հարազատության վրա: Առաջարկեցի, որ այստեղ մի լատին եպիսկոպոս կարողանա ձեռնադրել եպիսկոպոս կամ եպիսկոպոսներ: Դրա համար առաջարկեցի Ուրբանյան դպրոցում աշակերտած Բարսեղ վարդապետին, [իմա՝ Բարսեղ Էրզրումցին], որ տաս տարի է այստեղ է: Բայց քանի որ նա 1686 թ. սեպտեմբերի 20-ին վախճանվեց, նրա փոխարեն առաջարկում եմ այլ վարդապետ, որ գտնվում է Հռոմում կամ Լիվոռնոյում կամ էլ դա կարող է լինել խոջա Գրիգոր



Գերաբի որդի տեր Փիրատամը, (Piratami filii Cogia Gregorii Ghereki), որը սովորել է Լեհաստանում և դարձել կրոնավոր, եթե հարմար տեսնեք, նրան կարելի է ձեռնադրել եպիսկոպոս և ուղարկել այստեղ, որ գոնե իր ազգականներին ու արյունակիցներին, որոնք քիչ չեն՝ միացնի եկեղեցուն»<sup>121</sup>:

Հավատաստիյուռ ժողովի արխիվում է պահվում Շեհրիմանյան եղբայրների ստորագրությամբ մի փաստաթուղթ<sup>122</sup> հասցեագրված Հռոմի Աթոռին, որ գալիս է հաստատելու Հայր Եղիայի նամակներում Շեհրիմանյանների մասին հայտնված տեղեկությունները: Շեհրիմանյանները 1684 թ. նոյեմբերին գրում են.

#### «Պատուազունեղ հայր մեր ի Զրիստոս

Ի հոգևոր հորեն մերմե Էլիայե առաք ըզթուխթն որդեգրության, զոր արժանի արար հայրություն ձեր ուղղարկել մեզ ի ձեռն պատուականի պատրի Անելի (լատ. թարգմ. մեջ Agnellum), վասն որոյ պարտական եմք անդրայ դարցուցանել զորդիական սեր և հնազանդություն մեր հանդերձ գոհութեամբ յաղագս մեծայգունի բարերարության, զոր շնորհեցեր մեզ, յոյժ մեծ համարիմք զայս շնորհս և ըզհնազանդություն ամենեցունց բարեաց զործոց և աղօթից անթուելեաց սրբոց սրբազանից կրօնից մերոց, որք գանձք հոգևորք գերազանցագոյնք են քան թե կարիցե ի փոխարեն հատուցանել մարմնաւոր փարթամութեամբք բոլորի աշխարհի: Իսկ ըստ որում ուսուց մեզ հայր Էլիայ, թե ոչինչ կարիմք պատուականագոյն և գերազանցագոյն հատուցանել ձեր աստուածապաշտությանդ քան զդաւանություն ուղղափառ հաւատոյ մերոյ, զայն ի ձեռն նորին առաքեմք ստորայգրեցեալ անուամբ մերովք և մեծագունից որդւոց մերոց, փոխանակ քնակից ընտանեաց և ազգականաց մերոց<sup>123</sup>:

<sup>121</sup> SC Armeni, vol. 3, ff. 476r-477v.

<sup>122</sup> Տե՛ս SOCG, vol. 495a, f. 247. Հմմտ. Acta, 1686 marzo 4, vol. 55, n. 25.

<sup>123</sup> Այս փաստաթուղթը՝ «Դաւանություն ուղղափառ հաւատոյ Սա[ի]րաթ ընտանիքի», գրված 1684 թ. նոյեմբերի 16-ին Եղիա Կարմելիտականի ձեռքով տե՛ս SOCG, Vol. 495a, ff. 248-262. Փաստաթղթի վերջին էջի

Աղերսեմ առ պատուականագունեղ հայրություն ձեր, զի հաճոյացի զնոյն դաւանություն մեր ցուցանել Սրբազանի ժողովոյն տե Փոսիականտա Ֆիտե հանդերձ այսու թխտով, զոր գրեմք առ նոյն Սրբազան ժողովն ի շնորհակալություն յաղագս շնորհեցելոյ մեզ և մերայնոց հրամանի սակս ամուսնություն առնելոյ յերկրորդում և յերրորդում աստիճանումս ազգականության. սակայն որովհետև զայս հրամանս և իշխանությունս եղեալ էր ի ձեռն տեառն լուսաւորագունի եպիսկոպոսի Ֆռանկչիսկոսի Պիքթի<sup>124</sup>, որ այժմ հեռացել է տեղւորես յայսմանէ և է յոյժ ծերագոյն, գուցցե վաղճանիցի<sup>125</sup> և մեք զրկեալ իցեմք ի շնորհես յայսմանէ, վասն այսորիկ հայցիմք ի Սրբազանէ ժողովոյն, զի ըզնոյն իշխանությունդ հաստատեն և դնեն ի ձեռն պատրի Էլիայի կամ այլոց առաջնորդի վանաց ձերոյց կարմելիտականաց, որ միշտ Իսպահան և երկար լինիցի: Աղաչիմք և զձեր բարեպաշտությանդ և ըզգթածայիայրությանդ միշնորդութեամբ ձերով արժանի համարել օգնեն մեզ առ ի կատարումս ինդրուածոց մերոց, զի ի ժամանակի հարկաւորության ազգիս մերոյ, զոր ունեն ընդդէմ ուղղայփառ հաւատոյ, մի՛ լինիցին զրկեցեալք ուստերք և դստերք մերկ ի պատշաւոճաւոր ամուսնութենէ:

Դարձեալ որովհետև արժանացուցեր զմեզ ի հոգևոր որդեգրություն քո, մախթեմք ևս զհայրական գթությունդ ձեր, զի մի՛ մոռանայցե զմեզ ի մեջ փորձությանց և նեղությանց ժանտայետ

---

վրա, ուր վերջանում է ԻԸ [28] կետից բաղկացած դավանությունը, դրված են Սահրատ Շեհրիմանի 5 որդիների՝ Չաբարիայի, Մարգարայի, Միքայելի, Գասպարի, Մուրադի ստորագրությունները, այնուհետև Չաբարիայի որդի Բարդամ, Մարգարայի որդի Փիրի, ապա՝ Չաբարիայի որդիներ Սաֆար, Ֆռանկզոլ, Գասպարի որդի Ստեփան, Չաբարիա երեց:

<sup>124</sup> Նկատի ունեն հանրահայտ François Picquet-ին, որ 1682 թ. հուլիսի 12-ից Սպահանում էր:

<sup>125</sup> 1686 թ. յունվարի 14-ին Հալեպի ֆրանսիական հյուպատոս Fra Lorenzo d'Arvieux-ն նամակով տեղեկացնում էր Հռոմին, որ 1685 թ. սեպտեմբերի 26-ին վախճանվեց Ֆրանսուա Պիկեն (տե՛ս Acta, vol. 56, f. 7, n. 11; SOCG, vol. 495a, f. 30):

աշխարհիս այսորիկ, որպեսզի օգնականութեամբ աղօթից և պաղատանաց ձերոց հանդերձ բարեխօսութեամբ սրբոյիւոյ Աստուածածնին և բնաւից սրբոց կարգի լերինս Կարմելոսի հաւատուն (sic) մեր թարց գործոց մի՛ լիցի մեռեալ և ընդունայն, այլ սիրով աստուածայնով առնիցէ...[մեկ բառ մաշված] բարեաւ...[մեկ բառ մաշված] և ի վախճանի զբազումս ողջոյն մատուցանեմք:

[Լուսանցքում, սկիզբը մաշված] ...լով և խոնարհաբար համբուրելով զբրիստոսաշօշափ ձեռս յանձնեմք զմեզ յոգումբք փափաքանօք պատուական... եղի հայրության ձերում:

Ի Սպահանու Ջուղայիում Ժ2 [16] նովեմբերի յամի Փրկչին մերոյ 1684.

Խոնարհագունեղք հոգևորք որդիք ծառայք ի Քրիստոս՝

ծառայ նուաստ Չաքարիայ

ի նոյաստ ծառայ Աստուծոյ Մարգարայ

ի նուաստ ծառայ Մուքայելէս

ի նուաստ ծառայ Գասպար

ի նոյազ[տ] անպիտան ծառայ Մուրադ»<sup>126</sup>:

1688 թ. հունվարի 16ին Սպահանից Եղիա կրոնավորը հերթական նամակով պատմում է իր առաքելության մեծամեծ հաջողությունների մասին: Նշում է, որ շատացել է հակառակությունը: Հատկապես շահի կողմից նշանակված մի մահմեդականից, որը հրամայեց, որ հայերը փոխեն իրենց զգեստները և այդպիսով զանազանվեն իսլամներից: Արգելեց մուշտակ ծախել իսլամներին: Հայերից 30 հոգի ուզեցին իսլամանալ՝ շարունակելու համար իրենց վաճառականությունը: Ինքը օգնեց նրանց չմահմեդականանալու համար: Հայերը քրիստոնյա դեսպանների օգ-

<sup>126</sup> Նամակի (SOOG, vol. 495a, f. 263v) վրայի հասցեն՝ «Գերազանցայգունեղայ և պատուականագունեղայ տերանց տեառն Ալտ[ի]երի մեծաւորի և այլոց նախայդասեցելոց Սրբազանի Ժողովոյն, որ է Պրօպականդայ Ֆիւտէ, Հռոմայ: Lettere delli Signori Sarrath per la S. Cong. de Prop. Fide»:

նության հույսը չունեն, քանի որ անկարող են Պարսից թագավորի առջև: Թագավորը, որ 6 տարի առաջ հափշտակեց 27 հայ կին, նրանցից 22-ին կին է դարձրել իր ծառաներին և, որովհետև նրանք պետք է ժառանգեին իրենց ազգականների ունեցվածքը՝ հայերը ստիպված էին տեղի տալ իրենց ունեցվածքը չկորցնելու համար<sup>127</sup>: Այս կանանցից մեկը մեծահարուստ Մակար Սահրադ ընտանիքի գավակն է, որին շահը առաջարկեց իսլամ ընդունել, գրել տվեց նրան իրենց ընտանիքի անդամների թիվը և ուզում էր երկու գեղեցիկ տղա սեփականացնել: Ինքը Սահրատ ընտանիքից այս երկու տղաներին, մեծը՝ 14, իսկ փոքրը՝ 5 տարեկան, տարավ Ջուղա, դրեց Ս. Հաղորդության բազմոցի մեջ, հորդորեց մարտիրոսանալ, քան ուրանալ: Կեղտոտ զգեստներ հագցնելով երեխաներին՝ ուղարկում է շահի մոտ, որպեսզի նա չհավանի: Շահին լուր են տալիս, թե երեխաները եկել են, որոնց ի վերջո թագավորը ազատ է արձակում: Ծնողները, այս ամենի համար ծախսեցին 900 սկուդ, իբր նվեր:

Եղիա կրոնավորը տեղեկացնում է նաև, որ Սահրադներն, իրենց հարստության մի մասով հանդերձ, մտադիր են անցնել քրիստոնյա աշխարհ: Շարժական և անշարժ ունեն մեկ միլիոն սկուդ դրամ, որ ուզում են փոխադրել Հռոմ կամ այլուր՝ շահով ապրելու համար: «Իրենք ուզում էին գրել ձեզ, մենք արգելեցինք: Խնդրում են ձեր օրհնությունը»:

Հայր Եղիայի հաղորդմամբ, Սահրադ գերդաստանը ծառաներով և աղախիներով անցնում է 100 հոգուց, նրանից բացի Ջուղայում կան 20-ի չափ ընտանիքներ, բոլորն էլ կաթոլիկներ, կան նաև ֆրանկներ և եվրոպացիներ (Franchi et Europei), որոնք բոլորն էլ հաճախում են հիսուսյաններին կամ դոմինիկյաններին: Մյուս հայերն էլ կաթոլիկ են, իսկ վարդապետները՝

<sup>127</sup> Խոսքը Սեֆյան Իրանում գործող «Իմամ Ջաֆարի» անունով հայտնի օրենքի մասին է, որի համաձայն մահմեդականություն ընդունած նախկին քրիստոնյան իրավունք էր ստանում ժառանգելու իր քրիստոնյա ազգականների ունեցվածքը անկախ ազգակցականության աստիճանից (գրականությունը տե՛ս ծանոթ. 99):

հերձվածող: Սահրադներին է պատկանում մի ամբողջ գյուղ, որ կոչվում է Cuscecharat: Այն Ջուղայից 10 օր հեռավորության վրա է գտնվում և 350 բնակիչ ունի, 1 վարդապետ և 2 քահանա, որոնք պատարագի մեջ հիշում են Պապին: Եվ դեռ վարդապետները ուզում են տարածվել այլ գյուղեր: Դ. Եղիան ևս ուզում է գնալ և այնտեղ առաքելություն անել: Դ. Եղիան նշում է այն դիմադրությունը, որ կրում է հայ եպիսկոպոսներից ու վարդապետներից, որոնք ամբաստանում են միսիոներներին իբր խառնակիչներ և իրենց հայրենիքն ավերողներ: Փակել են տալիս կաթոլիկների եկեղեցիները և չեղյալ հայտարարում արարողությունները, նզովելով նրանց, որ կաթոլիկ պսակ են անում<sup>128</sup>:

1689 թ. մայիսի 20-ին Եղիա կարմելիտականը կարդինալներին տեղեկացնում էր, որ իր ջանքերի շնորհիվ հայ հոգևորականներից մեկը ևս՝ Միքայել վարդապետը, կաթոլիկ դավանություն տվեց և Զոմ էր ուղարկում վերջինիս դավանության թուղթը<sup>129</sup>: Տեղեկացնում էր նաև, որ սա վերջերս խնդիրներ ունեցավ Նոր Ջուղայի առաջնորդ Ստեփանոս վարդապետի հետ, ապա առանձնացավ, միայն ինքն էր հաճախում Միքայելին: Խնդրում է նրան ուղարկել պապի կողմից օրհնված մի եպիսկոպոսական զարդ և միսիոներների ամսական աշխատավարձի չափով մի ամսական էլ նրան շնորհել:

Խնդրում է չհավատալ Եղիազար կաթողիկոսին, քանի որ նա նախ Ստեփանոս Լեհացի վարդապետի միջոցով Սահ-

<sup>128</sup> Տե՛ս SOCG, Vol. 504, ff. 72-78 ; Acta: 1689 juni 27/Acta, vol. 59, ff. 154-159, n. 22:

<sup>129</sup> Տե՛ս «Ուղղափառ դաւանություն պատուականագուներդի տեառն Միքայելի վարդապետի և եպիսկոպոսի Ջուղայեցոյ, որ ի հայոց հերձուածողութենէ դարձաւ ի կաթոլիկէ հանդրդություն և ի հնազանդություն Առաքելական սուրբ հռոմայական եկեղեցոյ», - SOCG, vol. 508, ff. 654-656, տե՛ս նաև Եղիայի լատիներեն նամակը, SOCG, ff. 658-659, ff. 650-651-sommario; հմմտ. նաև Acta, 1690 dic. 19, vol. 60, n. 25, ff. 279-281):

րատներին հրավիրեց Նորից հերձվածող դառնալ, ապա ինքն իր կողմից անձամբ գրեց նրանց<sup>130</sup>:

Այսպիսով նա իր կողմն էր քաշում նաև այն հայ հոգևորականներին, որոնք ընդդիմության մեջ էին Ստեփանոս Ջուղայեցու հետ:

Ընդհանրապես Զավատասփյուռ ժողովին հասցեագրված Դ. Եղիայի նամակներում շատ է քննարկվում Շեհրիմանյանների դրամները Եվրոպա տեղափոխելու հարցը: Որ Շեհրիմանները որոշել էին զգուշորեն տեղափոխվել Արևմուտք, առանց դրամական կորուստների, վկայում են բազում փաստեր դեռս 1688 թ., օրինակ, Եղիա եպիսկոպոսի 1688 թ. հունվարի 16-ի նամակը: Իսկ 1691 թ. սեպտեմբերի 21-ի լատիներեն իր նամակում Եղիա եպիսկոպոսը Զավատասփյուռ ժողովի կարդինալներին հաղորդում է, որ Սահրատների դրամական խնդիրների համար Ջուղայից Եվրոպա է մեկնում Գրիգոր Ստեփանը: Անպատեհ տարիները թույլ չտվին, որ Սահրատի որդիներից մեկը գար Եվրոպա: Ընդ որում, ավելացնում է նամակագիրը, հինգ եղբայրներից միայն երեքին է այս դրամը, որից երկու մասը Մարգարին է, մեկը՝ Միքայելինը, մյուսը՝ Մուրադինը: Մյուս երկու եղբայրները դրամը չեն պատրաստել Եվրոպա տեղափոխելու. կամ ուզում են նախապես տեսնել սրա վերջը և շարժվել ըստ դրա: Սրանք լսել են, որ [դրամը] վենետիկում լավ շահ կբերի, սակայն դուք լավ գիտենալով՝ արեք ինչպես որ հարմար կգտնեք: Այս Շեհրիմաններն են, որ տուն հատկացրին քաղաքի եպիսկոպոսին<sup>131</sup>:

1692 թ. հունիսի 23ին ԴԺ-ը քննարկում է Սպահանի Եղիա եպիսկոպոսի նամակը<sup>132</sup> այն մասին, որ Սարիատ ընտանիքից մի երիտասարդ վենետիկ է բերում 200 հազար վենետիկյան

<sup>130</sup> Տե՛ս SOCG, vol. 508, ff. 658r-659v, Acta, 19 Dic., 1690.

<sup>131</sup> Տե՛ս SC Armeni, vol. 4, ff. 160rv; նաև SOCG, vol. 530, f. 65r.

<sup>132</sup> Բնագիրը արխիվում չգտանք, կան միայն հուշագրերը, տե՛ս SOCG, vol. 512, ff. 291, 362, 363, 449-451; vol. 513, f. 1:

դուկատ և խնդրում է օգնել նրան տեղավորելու այդ կապիտալը: Ժողովում արվում է երկու առաջարկ. առաջին՝ ողջ գումարը պետք է պահել Canonici Lateranesi: Համաձայն երկրորդ առաջարկի, պետք է Վենետիկի պապական նվիրակի ձեռքով այն ներդնել Վենետիկի դրամատուն, քանի որ Հռոմում եկամուտը հարյուրին 3,5 կամ 4% է: Որոշվում է ընտրել երկրորդ տարբերակը<sup>133</sup>:

1692 թ. օգոստոսի 18-ին Վենետիկից տեղի նվիրակը՝ Թեսաղոնիկեի արքեպիսկոպոսը, Հավատասփյուռ ժողովին և կարդինալ Ալթիերիին հասցեագրած իր նամակում գրում է, որ հունիսի 22-ի նամակով, որով իրեն հաղորդվել էր իր անելիքը, ինքն իր հերթին հաղորդել էր Շեհրիմանին, որն ուղարկվել էր Սահրատ ընտանիքի կողմից: Տեղեկացնում է նաև, որ 100 հազար դուկատը դրամատուն դնելու երկու ձև կա, որոնցից լավագույնը հրապարակային ներդրման (depositi) ձևն է, որը սկզբում հարյուրին 5 տոկոս շահ է բերում, իսկ հետո աստիճանաբար վերածվում է 4 առ հարյուրի: Վերջում ավելացնում է, որ ինքը ջանալու է անել լավագույնը<sup>134</sup>: Այս մասին զեկուցվում է Հավատասփյուռ ժողովի 1692 թ. օգոստոսի 26-ի նիստում և Վենետիկի նվիրակին տրվում է գործելու կարգադրություն<sup>135</sup>:

1692 թ. օգոստոսի 30-ին Վենետիկում Մուրադի որդիներ Շեհրիմանը և Նազարը իտալերեն գրում են Ծիրանավոր կարդինալներին, որոնց միջոցով շնորհակալություն են հայտնում Պապին, որ իրենց տվել է հանձնարարագիր՝ ուղղված Ֆիրենցեի նվիրակին, որը հանձնարարագիրը տեսնելուն պես՝ գործի էր անցել հօգուտ իրենց: Այնուհետև հայտնում են, որ իրենք արդեն եկել են Վենետիկ, ուր Նազարը գտնվում էր Վենետիկից քիչ հյուսիս, որ իրենք ոչինչ չեն անելու առանց կարդինալների իմա-

ցության և խնդրում են Ալթիերիից և մյուս կարդինալներից տեղյակ պահել իրենց ծրագրերի մասին<sup>136</sup>:

1693 թ. փետրվարի 7-ին Վենետիկի պապական նվիրակը՝ Թեսաղոնիկեի արքեպիսկոպոսը, կարդինալ Ալթիերիին հաղորդում է, որ Պարսկաստանից եկած Սահրադ գույգ եղբայրները գերապայծառն տվեցին 200 հազար դուկատ, որը մեծ շահով պետք է պահվի այստեղ: Ընդ որում դրամագլխին ոչ ոք իրավունք չունի ձեռք տալու: Վերջում ավելացնում է, որ Վենետիկի ծերակույտը հիշյալ եղբայրներին այս շնորհները արեց ձեր հանձնարարականի հիման վրա, քանի որ սրանք հույժ կաթոլիկ անձինք են և իրենց տան վրա ձեր պաշտպանությունն ունեն<sup>137</sup>:

1693 թ. սեպտեմբերի 30-ին Հռոմում ստացվում է Սպահանի եղիա կարմելիտականի իտալերեն նամակը կարդինալներին: Նրանում ասվում է, որ Մարգար, Միքայել և Մուրադ Շեհրիմանները հայտնում են իրենց խորին շնորհակալությունը՝ Վենետիկում գերապայծառ Archinti նվիրակի ձեռքով իրենց դրամները տեղավորելու համար:

Նամակի տակ դրված են նաև երեք եղբայրների ստորագրությունները՝

«Գիրս իմ Շեհրիմանենց Սահրատի որդի Մարգարի: Կամքս վնայ գիրվել որ ձեր հրամանուց հընազանդ որդի և ծառայ իմ:

Ես իմ կամօք գրեյլ իմ ձեր հրամանոց անպիտան ծառայ և որդի Շեհրիմանենց Սահրատի որդի՝ Մուլբել:

Եւս իմ կամաւս գրվել այ որ իմ ձեր անպիտան ծառայ և հնազանդ որդի Շարիմանենց Սահրատի որդի Մուրատ»<sup>138</sup>:

Հռոմը շնորհակալ եղավ Շեհրիմաններին: Դրա ապացույցներից են Շեհրիմանների այն շնորհակալական նամակները, ո-

<sup>133</sup> St' u Acta, 1692, giu. 23, vol. 62, f. 136rv, n. 20, ff. 150v, 173; lug. 26, ff. 168-170, n. 33:

<sup>134</sup> St' u SC Armeni, vol. 4, f. 257r:

<sup>135</sup> St' u Acta, vol. 62, f. 173, n. 1:

<sup>136</sup> St' u SC Armeni, vol. 4, ff. 259rv+260r:

<sup>137</sup> SC Armeni, vol. 4, f. 280.

<sup>138</sup> SC Armeni, vol. 4, f. 305rv.

րոնք վկայում են, թե ինչպես Յոնն Բագում հարցերում օգտակար եղավ այս ընտանիքին:

Այսպես, 1697 թ. ապրիլի 1-ին Վենետիկից Նազար և Շեռիման եղբայրները իրենց շնորհակալությունն են հայտնում Պապին՝ նրա տված երաշխավորագրերի շնորհիվ Փարիզում և Պորտուգալիայում իրենց առևտրական գործերի հաջողության համար: Հաղորդում են նաև, որ իրենց եկեղեցիները կործանող Ջուդայեցի Ստեփաննոս վարդապետի կողմից տապալված է Նահապետ կաթողիկոսը: Հույս հայտնելով, որ Նահապետը կվերականգնվի, առաջարկում են, որ այդ գործում կարող են մեծ օգտակարություն ունենալ այն նվերները, որոնք Պապը ծրագիր ուներ ուղարկել: Տեղի ժողովուրդը տեսնելով, որ Յոննի Աթոռը օգնում է նրան, ինքը ևս թև ու թիկունք կկանգնի նրան:

Միաժամանակ պատրաստակամություն են հայտնում օգնելու Չինաստան մեկնող միսիոներներին<sup>139</sup>:

Մեկ շաբաթ անց, 1697 թ. հուլիսի 27-ին, եղբայրները ժողովին տեղեկացնում են, որ Հալեպից իրենց ստացած լուրերի համաձայն, Ստեփանոս վարդապետը, որ խռովեց եկեղեցին, շատ միջոցներ ունեցավ կաթողիկոս դառնալու, ջնայած, որ կար Նահապետ կաթողիկոսը, բայց երբ Էջմիածին էր գնացել գրավելու Աթոռը, բռնվեց և դրվեց բանտ, ունենալով 30.000 դուկատի պարտք և, հավանաբար, այլևս բանտից դուրս չգա: Սրանով Նահապետը նորից նստում է իր տեղը: Փարիզի նվիրակ, գերապայծառ Դելֆինոն (Mons. Delfino) ֆրանսիացի ծովահենների կողոպտած մետաքսը հետ վերադարձնելու համար ի նպաստ իրենց ոչինչ չկարողացավ անել<sup>140</sup>:

1697 թ. օգոստոսի 10-ին, մեկ այլ նամակով երկու եղբայրները շնորհակալություն են հայտնում, որ Հավատասփյուռ ժողովը գրել է Փարիզի նվիրակին ծովահենների կողմից Հալեպից Վենետիկ իրենց մետաքս տեղափոխող նավերի թալանման

<sup>139</sup> SC Armeni, vol. 4, f. 462-463.

<sup>140</sup> SOCG, vol. 528, f. 100; Acta 1697, 27 aug. vol. 67, f. 312, n. 29.

մասին: Հալեպի իրենց գործակալ Մինաս դի Աղազարի կողմից՝ Մուրադի որդի Նազար Շեռիմանի անունով Վենետիկ ուղարկված նավը (նավի անունը՝ Սուրբ Նիկողայոս [San Nicolo], նավապետը Հովհաննես Բասիկ [Gio. Basic]) հանդիպել է մարոկազի, կամ նեապոլիտանցի (մի նամակում՝ corsaro marocchio, մյուսում՝ corsaro napolitano) ծովահենների և տարվել Մեսինա, ուր բռնագրավելով ապրանքները՝ նավը բաց է թողնվել: Բողոքել են նեապոլի փոխարքային և իմացել, որ իրենց ապրանքները գտնվում են Մեսինայի դոժի մոտ, իսկ ծովահենները բանտարկվել են: Խնդրում են, որ եթե Պապը միջնորդի Սիցիլիայի փոխարքային իրենց մետաքսի համար, իսկ Իսպանիայի դեսպանը, որ ազգական է փոխարքային, մի հանձնարարագիր ուղարկի, ապա գործը կարող է հաջողվել:

Ուրախ են, որ կաթողիկոսի և Ստեփաննոս վարդապետի մասին իրենց հայտնած լուրերը հաճելի են ժողովին, իրենց ընտանիքը միշտ պատրաստ է ծառայել նրանց<sup>141</sup>:

1697 թ. հուլիսի 20-ին եղբայրները տեղեկացնում են, որ Ջուդայից ստացած նամակի համաձայն իրենց եկեղեցին կործանած Ստեփանոս վարդապետը դարձել է կաթողիկոս և կաթողիկներին մեծ վտանգ է սպառնում...<sup>142</sup>:

1697 թ. սեպտեմբերի 14-ին եղբայրներն իրենց հերթական նամակով գեկուցում են, որ Պոլսից հասած նավի միջոցով իմացան, որ Ստեփանոս վարդապետը մի դոյակի մեջ ցկյանս բանտարկված է շահի հրամանով: Իսկ Հալեպի ճանապարհով իրենք լուր են ստացել, որ շահը արդեն հրաման է տվել վերաջինելու Ջուդայի կործանած եկեղեցին<sup>143</sup>:

Շեռիմանյան ընտանիքի անդամներն աստիճանաբար սկսում են նաև իրենց զավակներին Նոր Ջուդայից տեղափոխել և ուսման տալ Յոննում՝ հիմնականում Ուրբանյան վարժարա-

<sup>141</sup> SC Armeni, vol. 4, ff. 481-482, 485; vol. 5, ff. 530rv-531r, 788rv-789r.

<sup>142</sup> SC Armeni, vol. 4, ff. 477r-478r.

<sup>143</sup> SC Armeni, vol. 4, f. 489r.

նում: Նազար և Շեհրիման եղբայրները 1697 թ. ապրիլի 1ին դիմում են կարդինալներին՝ խնդրելով Ուրբանյան վարժարան ընդունել Հովհաննես Մկրտիչ անունով իրենց 15 տարեկան եղբորը, ասելով, որ այնտեղ արդեն կան իրենց ընտանիքից ոմանց երեխաները: Եղբայրները նույն թվականի հոկտեմբերի 12ին նորից են դիմում կարդինալներին, առ այն, որ Հավատաստությունի դպրոցի տեսուչը չի ուզում պահել Չաքարիայի որդի Բարսեղ Շեհրիմանին: Իսկ տղայի Պարսկաստան վերադարձը կարող է մեծ հարված հասցնել կաթոլիկ հավատքին և իրենց տան հեղինակությանը: Իրենք պատրաստ են վճարելու նրա բոլոր ծախսերը: Մեկ այլ անթվակիր փաստաթղթում Բարսեղ Շեհրիմանի մասին ասվում է, որ նա քիչ կարողություններ ունի ուսման և կարգապահության մեջ, երկար ժամանակ հիվանդ է: Նմանապես ամուսնանալու գաղափարը նրան հանգիստ չի տալիս: Ուստի հարմար են գտնում նրան հանել Ուրբանյան վարժարանից և նրա տեղը վերցնել Վենետիկում գտնվող իր հորեղբորդուն<sup>144</sup>:

### Նամակը

Այս առաջաբանից հետո, որում մոտավորապես փորձեցինք նկարագրել հայ-լատին փոխհարաբերությունները Ջուղայում XVII դարի երկրորդ քառորդում, ամբողջությամբ բերում ենք վերը հիշատակված փաստաթուղթը, որն արդեն գալիս է լույս սփռելու լատին միսիոներների նամակներում չշոշափված կամ լռության մատնված բազում հարցերի վրա.

Է

Սրբազան Պապին<sup>145</sup>

«Յիսուսի Զրիստոսի նուաստ ծառայք Միքայել, Դաւիթ եւ Մովսէս վարդապետք եւ շնորհօքն Աստուծոյ եպիսկոպոսք ի

<sup>144</sup> Այս ամենի մասին տե՛ս SC Armeni, vol. 4, ff. 462, 495r-496r:

<sup>145</sup> Այս երկու բառը գրված է հավանաբար Պարոն Աղայի ձեռքով, որին հասցեագրված էր փաստաթուղթը և որն էլ իր հերթին այն հասցեագրել է Պապին՝ Ինոկենտիոս XII-ին (1691-1700 թթ.):

թագաւորանիստ քաղաքիս Իսպահանու, տեղապահք Սուրբ Ուխտիս Ամենափրկչի վանացս, յորոց ժամանեցի թուղթ սիրոյ եւ օրհնության, շնորհք առաքելական եւ աստուածային յոզնապարզ և բազմաբեղուն օրհնություն և նախախնամական գթություն ի վերայ օրհնեալ եւ աստուածապահ քաղաքի Վենետիկու եւ ի վերայ սիրելի հաւատարիմ եւ հարազատիդ մերոյ Պարոն Աղայիդ եւ որոց ընդ քեզ պատրաստ եղբարց եւ պարոնաց ողջոյն ի Զրիստոս մատուցի, զորոց անուանքն ոչ գիտելով մեր որով գրեանքն լիով:

Շնորհք, սեր, խնդություն եւ խաղաղություն յԱստուծոյ բազմացի ի վերայ ձեր, ի տուէ եւ ի գիշերի, ի նստել ի տան, ի գնալ ի ճանապարհ, ի ննջել եւ ի յառնել, ի գնել յամենայն բանս եւ ի գործս ձեր. ամէն:

Եւ ընդ աստուածապարզեւ օրհնությանս եւ սիրալրական նամակաւս ծանիր, սիրելիդ մեր Պարոն Աղայ, գրէ իմաստունն, թէ զայր հաւատարիմ գործ է գտանել, այսօր Աստուծով քո յառաջադիմությունդ այդր, որ առաջի հոգեւոր եւ մարմնաւոր առաջնորդաց ունիս, զոր միշտ լսեմք տեղս եւ փառք տամք յԱստուծոյ, վասն եւ մեզ հարկաւորեցաւ ծանուցանել սիրելոյդ մերում զկիրս մեր, զոր միշտ կու կրեմք աստ ի պատրոցէն, մանաւանդ ի պատրի Էլիուցն, որ միշտ մեր ներհակ գուով եւ հակառակ կալով եւ բանս հայիոյության խօսելով, ոչ թէ առ մեզ, այլ կարգս եւ զկրօնս մեր եւ գրեթէ առ եօթն խորհուրդ սուրբ եկեղեցոյս մեր. քանզի երբեմն ասէ, թէ պատարագն ձեր ոչ է կատարեալ, նմանապէս եւ այլ վեցեքին սրբազնությունքն, որ յեկեղեցականս կատարի, ամէնն ընդունայն առնեն, վասն այսց պատճառաց զժողովուրդսն մեր գայթակղեցուցանեն այնչափ, մինչ զի յուրվք յուրացութիւնս դառնան, ժողովուրդսն արգելուն ի պահելոյ զպահս եւ անխտիր հրաման տան լուծանել զսահմանեալ պահսն, զոր ընկալեալ ունեմք ի սրբոց հարցն եւ ի լուսաւորչացն մերոց, նա եւ զով ոք մեք կու բանադրեմք, պատրի Էլիէն զմեր բանադրեալն կու ընդունէ եւ կու հաղորդէ, զոր ոչ է օրէն քահանայից այսչափ համարձակել: Մեք շնորհօքն Աստու-

ծոյ եպիսկոպոսք գոլով եւ այս եւ այն, իսկ պատրիքն քահանայք գոլով, զկատարելագործութիւնն, զոր մեք կատարելագործեմք, նոքա վերստին կատարելագործեն եւ հաղորդեն միշտ պախարակելով զմերն:

Այսօր ՂԸ[98] տարի է մեք տեղս եմք<sup>146</sup>, մինչեւ ցայսօր ինչ պատրի, որ տեղս է հանդիպեալ, նա մեզ հետ եւ մեք նորա հետ միշտ սեր եւ եղբայրություն եմք արարեալ մէկ մէկու հետ, պատրիքն մեր վանքս գալով<sup>147</sup> եւ մեք նոցա վանքն գնալով միշտ անպակաս եւ անխարդախ սիրով եմք կացեալ առ միմեանս, զոր եւ ժողովուրդքն ամեն տեսանելին զսերն մեր առ միմեանս անվրդով եւ անգայթակղային: Իսկ այժմ նարդեանս, քանի որ այս անկարգ եւ անխիղճ պատրի էլիես եկեալ է եւ ի մէջ մեր նստեալ, մեր հետ խռովությունս անչափս եւ անտանելիս, մանաւանդ անասանելիս կ'առնէ եւ ժողովուրդքն տեսանելով զանուղղայ վարս նորին, ամենեքեան յուսահատին եւ թերանան: Սոցա վանքն եւ բնակությունն քաղաքին<sup>148</sup> մեջն է, զոր մինչեւ ցայսօր ինչ պատրի, որ եկեալ է այս քաղաքս, զամեն քաղաքումս այն վանքին մեջն են կացեալ եւ ընդ մեզ սերս բազումս են ցուցեալ, իսկ սա, քանի մը իւրն նման առեալ էրեկ մեր մեջն նստաւ<sup>149</sup>, այնչափ յուսահատությունս եցոյց մեզ եւ ժողովրդոցն, որ մինչեւ արգ արար մեր կաթողիկոսն<sup>150</sup> եւ զսոսա դուրս արար<sup>151</sup>: Իսկ

<sup>146</sup> Նկատի ունեն Շահ Աբբասի կողմից հայ բնակչության բռնագաղթը Պարսկաստան և Նոր Ջուղա, սակայն այն կլորացնելով հաշվում են 1600 թվականից, փոխանակ 1604-ից:

<sup>147</sup> Իսկապէս բազում դեպքեր են հայտնի, երբ կաթողիկ միսիոներներին թուլլատրվեց քարոզելու հայկական եկեղեցիներում, ընդհուպ մինչև Էջմիածնում:

<sup>148</sup> Իմա՝ Սպահանում:

<sup>149</sup> Նոր Ջուղայում վանք հիմնելու բազում քայլեր արեց Ռաֆայել դյու Մանը, ունենալով նաև շահի բարեհաճությունը, սակայն միշտ անհաջող, քանի որ այն միշտ բախվեց հայ հոգևորականության աշխույժ դիմադրությանը (այս մասին մանրամասն տե՛ս F. RICHARD. *Rafaul du Mans*, pp. 62-68):

<sup>150</sup> Նկատի ունեն Նոր Ջուղայի առաջնորդ Ստեփանոս Ջուղայեցի արքեպիսկոպոսին, որը չնայած օծվեց կաթողիկոս, սակայն համարվելով հակաթոռ

յետ նահատակելոյն սրբազան կաթողիկոսին մերոյ տեառն Ստեփաննոսի<sup>152</sup>, զոր վասն օրինացս Քրիստոսի Աստուծոյ մերոյ նահատակեցին, այլուի եկեր է ի Ջուղա նստեալ, մեր մեջն թօփ եւ թուանկ ձգելով եւ այլ առաւել անկարգությունս առնէ, որպէս յառաջ քան զարտաքսելն առնէր: Այժմ զո՞րն ասացից, կամ զո՞րն գրեցից, քանզի ոչ լինի թէ ընդ գրով արկանել զարարք սոցին, ապա կարճառօտ այսպէս իմա՝ Պարոն Աղայ, որ այսչափ ժամանակ է չէ եղած, թէ տեղս պատրի տաճկանայ, կամ յուրացություն գնալ], այս քանի տարումս տեղս անուղղայ վարուց սոցին, որ շատ համարձակեցան ի վարս անուղղայս, զոր ոչ է արժան ընդ գրով արկանել, մինչ զի Բ[2] պատրի գնացին զՔրիստոս ուրացան եւ տաճկացան, անուն միոյն պատրի Մանուէլ<sup>153</sup> եւ երկրորդին պատրի Անդոնի<sup>154</sup>, թէ որչափ ժողովուրդքն յու-

ջի հիշատակվում հայ կաթողիկոսների կանոնական ցանկերում: Անկախ դրանից ջուղայեցիները իրենց գրած համարյա բոլոր ձեռագրերում նրան համարում են կաթողիկոս: Այդպիսին է կոչում նրան նաև իր աշակերտներից հետագա հայոց կաթողիկոս Աղեքսանդր Ջուղայեցին (Ստեփանոսի մասին տե՛ս Վ. ՂՈՒԿԱՍԵԱՆ. «Ստեփանոս կաթողիկոս» խիստ շահեկան ուսումնասիրությունը):

<sup>151</sup> Այս դեպքերի մասին տե՛ս վերևում:

<sup>152</sup> Ավնարկը Ստեփանոս Ջուղայեցու մահվան մասին է (տե՛ս Վ. ՂՈՒԿԱՍԵԱՆ, նշվ. աշխ., հմմտ. V. S. GHOUGASSIAN. *The Emergence of the Armenian Diocese of New Julfa in the Seventeenth Century*. Atlanta, Georgia: Scholars Press, 1998, pp.107-109, 111-113, 115-121, 143-145 և այլն):

<sup>153</sup> Խոսքը փաստաթղթերում Manuel կամ Emmanuel անունով պորտուգալացի ավզուստիկոսի միսիոներին մասին է, որ մահմեդականացել էր դեռևս 1691 թ.: Այս մասին Սպահանից Հավատասփյուռ ժողովին մի շարք նամակներով զեկուցել էին Բաղդատի եպիսկոպոս L. Մ. Պիդոն (1691, 1692 թ.), Նախիջևանի դոմինիկյան հայերից Հիացիստ Ղավիթ Ավանիսեցը (1692, 1693 թթ.), (տե՛ս CARLOS ALONSO. *El convento agustiniano de Ispahan durante el perèodo 1690-1702,- Archivo Agustiniano*, 1983, Vol. LXVII, Núm. 185, pp. 145-147):

<sup>154</sup> Խոսքը ազգությամբ պորտուգալացի Antonio de Jesus-ի դավանափոխության մասին է, որը կրոնափոխվելով կոչվեց Ալի Ղուլի Ջադիդ ուլ-խալամ: Այս մասին Հավատասփյուռ ժողովի քարտուղար Կառլո Ֆաբրոնիին 1697 թ. սեպտեմբերի 12-ին զեկուցող բոկոտն կարմելիտական հայրերից

սահաւոյցան վասն ուրացոյցան սոցա, քանզի թէ ոմանք ի հա-  
յոց տաճկանան՝ վասն անճարակոյցան եւ անչափ նեղութենէն  
եւ կամ պակասութենէ կու լինի, իսկ պատրիկքն յամենայն  
ազատ եւ փառաւոր գոլով, ոչ ինչ կողմանէ պակասութիւն չունե-  
լով ուրանան:

Դարձեալ զայս եւս իմա Պարոն Աղայ], որ տեղս, թէ քաղա-  
քունս եւ թէ սարունս շնորհօքն Աստուծոյ ճ[100] գեող գոյ ի  
քրիստոնէից: Սոքա ամենն օրինօք կու ինսամենան որպէս եւ քեզ  
քաջ յայտ է, թէ ազգականութեան, թէ կնքահայրութեան եւ ինս-  
մութեան եւ թէ ոմանք յանդգնին եւ չհաս տանեն, մեք զնոսա  
բանիւ կ'առնենք եւ յեկեղեցւոյ կու արտաքսենք, մինչ որ  
բազումք թողեր են զչհաս տարած կինն, ապա թէ զնոսա ար-  
ձակեր ենք: Մեք աղօթիւք Սուրբ Լուսաւորչին մերոյ տեառն  
Գրիգորի այսպիսի նեղութեան միջի գոլով ջանամք պահել գ-  
կարգ եւ զկրօնս մեր:

Իսկ պատրի Էլիէն փոխանակ մեզ օգնական լինելոյն, ի  
Ջուղայու մէջն եւ ի մերոց ժողովրդեանց, անչափ ապստամբե-  
ցոյց] եւ զըզվեցոյց ի մեզանէ, որ ռուսխաթ<sup>155</sup> ետ չհաս առնել,  
թէ յիմանաս զկերպ չհասին, այս էր, որ եղբօր թոռն ետ եղբօր  
որդւոյ, որ լինի ազգականութեան Գ[3] պորտ եւ յորժամ ընդդի-

Basilio de S. Carlos-ը նկարագրելով «հերձուածող հայերի» վրա դավանա-  
փոխութեան թողած տպավորութիւնը, չիմանալով բացականքում է. 'O  
che scandalo': (նամակը տե՛ս SC Mesopotamia, Persia, vol. 2, ff. 196-197,  
CARLOS ALONSO. Աշխ. աշխ., էջ. 171), հմմտ. [CHICK H.]. A Chronicle of  
the Carmelites in Persia and the Papal Mission of the XVIIth and XVIIIth Cen-  
turies. Vol. I, London, 1939, p. 486: Լատին փաստաթղթերի հիման վրա,  
Սպահանում կաթողիկ միսիոներների դավանափոխութեան այս փաստը,  
հատուկ քննութեան նյութ դարձրեց վերջերս Ֆրանսիացի արևելագետ  
Ֆրենսիս Ռիչարդը, տե՛ս F. RICHARD. Augustin portugais renégat apolo-  
giste de l'islam chiite au début du XVIIIe siècle, - "Moyen Orient et Océan  
Indien", I, Paris, 1984, pp. 73-85.

<sup>155</sup> Ռուսխաթ (ռուսխաթ)-թուլտուլութիւն:

մացաք, ասաց թէ ես ...<sup>156</sup> Էն այսպէս հրաման ունիս<sup>157</sup> եւ զոր  
ինչ անկարգ բան որ առնէ, յերբ մեք ներհակեմք, միշտ նորա  
պատասխանին այս է, թէ ...Էն հրաման ունիս: Յիմա տես Պա-  
րոն Աղայ], մեք զայս քեզ կարճաժամ գրեցաք եւ ինդրեմք ի բո  
բարեպաշտութենէդ, որ զգրեալս մեր լիով տեղդ եւ յամենայն  
տեղիս ծանուցանես հոգեւոր եւ մարմնաւոր առաջնորդացն, լի-  
նի թէ մինչեւ ի ... եւս հասուցանես զգրեալս եւ ի նոցանէն պա-  
տասխանին առնուս եւ շուտով ի մեզ ուղարկես, որ մեր նեղու-  
թիւնն օր աւուր տեղս շատանում է այս պատրուցս, զրա՛ թող գ-  
պատրի Էլիէն եւ զընկերսն իւր, այ որիշ պատրիք գոն աստ,  
ամենեւին նեղութիւնս ոչ ունենք ի նոցանէ, քանզի իւրեանց  
կարգին են եւ մեր ժողովրդեան հետ բան չունին: Իսկ այս պատ-  
րի Էլիէս եւ քանի մը ընկերք եւ նման իւր, այսպէս զսահմանա-  
դրութիւնս սուրբ եկեղեցւոյս մերոյ պախարակեն եւ ծիծաղելիս  
բարոզեն. երբեմն հերետիկոս եւ երբեմն հերձուածող զմեզ եւ  
զազգն մեր համբաւեն, այսքան ժամանակ է տեղս պատրի կու  
նստի, ո՞ր պատրի մէկ անհաւատ քարոզեաց եւ կամ զլոյս Աս-  
տուած գիտութեան եւժ եւ կամ մկրտեալ դրոշմեաց եւ կամ  
քրիստոնեայ անուանեաց, ոչ տեսած ենք եւ ոչ լսած, ճշմարիտ է,  
որ Հնդուստանայ պատրոցէն լսած ենք, թէ զբազումս կը  
մկրտեն, ապա տեղս ամենեւին եղած չէ, մեք եւ մերայինքս միշտ

<sup>156</sup> Այս և ստորև եղած բազմակետերը փաստաթղթի հեղինակներինն են,  
բացառությամբ [...] փակագծերի մեջ եղած մեր միջամտութիւններից:

<sup>157</sup> Եվ իսկպպես, Եղիա եպիսկոպոսը ուներ այդպիսի հրաման: Այսպէս, Հա-  
վատասփյուռ ժողովի կողմից Սպահան մեկնող Ֆրանսուա Պիկեին  
դեռևս 1683 թ. հոկտեմբերի 15-ին տրված կարգադրության մեջ ասվում  
էր, որ կարմելիտական Հայր Եղիան ներկայացրեց այն օգուտները, որ ըն-  
դունում է կաթողիկ Սահրատ ընտանիքից, որ նոր են դարձի եկել և քանի  
որ դժվարությունների մեջ են՝ Պապը հրաման է տալիս ձեզ երկու աստի-  
ճանի ամուսնություններ կատարելու իրար մեջ, զորացնելու համար  
իրենց տունն ընդդեմ կաթողիկների թշնամիների: Նույն այս իշխանու-  
թիւնը կարող ես փոխանցել նաև Բարսեղ [Էրզրումցի] վարդապետին,  
որին շատ առիթներ կներկայանան այն գործադրելու: (SOCG, vol. 495a, f.  
244; հմմտ. նաև Acta, 1686 marzo 4, vol. 56, f. 55, n. 25):



տեղոյս պատրոցս կասեմք, թէ մեզ ինչ պետք է ձեր տեղս լինելն, մեք շնորհօքն Աստուծոյ քրիստոնեայք եմք, ունիմք զկարգ քահանայութեան լիով եւ անթերի եւ ոչ եմք կարօտ ձեզ, այլ արժան է ձեզ զնալ առ այն այնոսիկ, որք ոչ կարդան զանուն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի [երկու բառ մաշված է] [...] Աստուած եւ ոչ գիտեն զէ[7] խորհուրդ սուրբ եկեղեցւոյ եւ զճմարիտ դաւանութիւնն աստուածպաշտութեան, որ ի նի[...] այն [կես տող մաշված՝ չի ընթերցվում] [...]ոյնսն որ ի կարգին:

Այսպէս ոչ զնան առ հեթանոսսն, այլ ջանան խախտել եւ աւերել մանաւանդ թէ գայթակղեցուցանել զտառապեալ ազգն մեր: Պարոն Աղայ], զայս խնդրեմք ի քէն, որ տեղոյդ մեծամեծացն հարցումն առնես, թէ մեկ հայոց եպիսկոպոս կամ վարդապետ, կամ քահանայ գայ ձեր մէջն, առանց ձեր մասլահաթին, եկեղեցի շինէ եւ զձեր ժողովուրդքն յափշտակէ ի ձէնջ եւ զձեր մկրտեալն կրկին մկրտէ եւ զձեր մեռեալն ինքն թաղէ եւ զձեր բանադրեալն արծակէ եւ չհասի հրաման տայ, ձեզ դիւրութիւն կու թուի եւ դաբուկ կ'անէք. յերբ պատասխանեն թէ այո՛, ապա թէ մեք այլ կարեմք սոցա անիրաւ արարմանցն տանել. գիտեմք, որ անկարելի է, թէ դաբուկ անեն, վասնորոյ խնդրեմք, որ մեզ այլ մէկ ճար տեսնուն եւ սոցա ֆիքրն անեն, որ մեր միջին գայթակղութիւնն բառնուի եւ սերն հաստատի:

Դարձեալ Պարոն Աղայ] եւ թէ կամիցիս գիտել թէ զի՞նչ եղել պատճառ, որ զայս գրեացաք քեզ, այս է, որ այսօր մէկ ամիս է, որ զմեր մկրտեալն եւ զդրոշմեալն պատրիքն տարան յայտնի յետ մկրտեցին եւ զմեր մկրտեալն ընդունայն համարեցին եւ մեք մահզար արարաք, թէ տամք դիւանի ձեռն, այլուի երկիւղ կրեցաք, թէ չլինի յուրացութիւն դառնան, այս մէկ ամսումս մեր Բ[2] մեռեալ մեզանից քարշել են եւ իւրեանքն թաղել, վասնորոյ եւ մեր յամենայն կողմանէ անճար մնացեալ, քեզ՝ սիրելւոյդ մերում գրեցաք եւ քեզ վերայ հարկ եւ ապաշխարանս դրաք, որ այս գրոյս քանի մը սաւանտն<sup>158</sup> վեր առնուս եւ ամեն երեւելի

<sup>158</sup> Սաւատ - պատճեն:

եպիսկոպոսաց եւ աստուածասէր իշխանաց ուղարկես. թէ ձեռն տայ պիտի ... այլ գրես եւ պատասխանին թռչնոց թելօք մեր հասուցանես, որ մեք այլ դոցա դատն եւ դատաստանն այլ յիմանամք եւ զօգուտն մեր խորհեմք:

Այլ զի՞նչ գրեսցուք Պարոն պիտի, որ այս գրոյս բեջիթ<sup>159</sup> կենաս եւ մեծամեծաց ցոյց տաս, որ մեք միշտ օրհնող լինիմք քեզ, որ եւ Քրիստոս Աստուած յոյսն բնաւից օրհնեսցէ զքեզ հոգով եւ մարմնով. Ամեն:

Գրեցաւ ի թուին ՌՃԽԵ [1698] հոգտեմբերի ԺԳ[13]:»:

<sup>159</sup> Բեջիթ - բեջ՝ կռակ, թիկունք բառից, այսինքն՝ թիկունք կանգնես, պաշտպան կանգնես (տե՛ս ՂԱԶԱՐՅԱՆ Ռ., ԱՎԵՏԻՍՅԱՆ Յ., Միջին հայերենի բառարան, Զո. Ա, Երևան, 1987, էջ 123):

## ՀԱՎԵԼՎԱԾ

ԷԹԻԵՆ ԿԱԿԱՇ ԴԸ ՉԱԼՈՆԿԵՄԵՆԻԻ 1602 Թ.  
ՁԵՌՆԱՐԿԱԾ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՈՒՂԵՒՈՐՈՒԹՅԱՆ  
ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ՇԱՐԱԴՐՎԱԾ ԳԵՈՐԳ  
ԹԵԿՏԱՆԴԵՐ ՅԱՐԵԼԻ ԿՈՂՄԻՑ<sup>160</sup>

Նոյեմբերի 18-ին Թավրիզից ... մեկնելով, Արբան իր հետ տարավ իր հարյուր բսան հազարանոց բանակը և իր բոլոր կանանց, որոնց իրականում չէի տեսել, սակայն ինչպես ինձ ասել էին՝ հինգ հարյուրն էին: Նրան ուղեկցում էին երկու որդիները՝ մեկը տասնյոթ տարեկան՝ Սոֆի Միրզա անունով, և կրտսերը՝ Սուլթան Մահոմեդը՝ ընդամենը յոթ տարեկան:...

Մեր ճանապարհին հանդիպած բոլոր քաղաքներն ու գյուղերը շտապում էին ենթարկվել պարսիկներին: Ես անձամբ մասնակցեցի Մարանդի, Մեդիայի, Նախիջևանի կամ Ջուլֆայի անձնատուր լինելուն Հայաստանում, ինչպես նաև բազմաթիվ այլ քաղաքների՝ որոնք բոլորն էլ հանձնվեցին առանց դիմադրության: Երբ արբան անցնում էր որևէ քաղաքի կամ գյուղի միջով, ողջ բնակչությունը ամեն կողմից վազելով հավաքվում ու շրջան էին կազմում: Տղամարդիկ, կանայք և երեխաներն իրենց սովորույթի համաձայն ձեռք-ձեռքի տված շուրջպար էին բռնում՝ երգելով ու ցատկոտելով: Շուրջպարի կենտրոնում թմբուկներով երկու-երեք տղամարդիկ կային, որոնք շատ յուրօրինակ ձևով էին նվագում: Այդ գործիքները շատ նման են մաղերի, նրանք մի կողմից պատված են կաշվով և զարդարված են չորս գանձուկների մորթիներով: Ժողովրդական այս հանդիսությունը արքային հաճոյանալու նպատակով էր արվում՝ նրա գալուստը ողջունելու ուրախության քրքիջներով ու երգերով: Հայաստան գա-

<sup>160</sup> Iter Persicum ou Description du voyage en Perse entrepris en 1602 par Etienne Kakasch de Zalonkemeny, envoyé comme ambassadeur par l'empereur Rodolphe II, à la cour du grand-duc de Moscovie et à celle de Châh Abbas, roi de Perse. Relation rédigée en allemand et présenté à l'empereur par GEORGES TECTANDER von der Jabel. Traduction publié et annoté par Charles Schefer; Paris, E. Leroux, 1877, pp. 50-52.

լուց հետո իրադարձությունները Նույնքան երջանիկ ընթացք ստացան: Արքան ոչ մի դիմադրության չհանդիպեց: Ջուլֆայում՝ ամուր քաղաք, որ բացառապես քրիստոնյա հայերով է բնակեցված՝ ընդունելությունը շատ ջերմ էր: Արքային պատվելու համար հրավառություններ արվեցին: Տները, որոնք այս երկրամասում կտուրներ չունեին և զարդարված էին պատշգամբներով՝ ծածկվեցին ավելի քան հիսուն հազար լամպարներով, որոնք ողջ գիշեր վառվում էին:

ՇԱՀ ԱԲԱՍԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԵՐԻ ԲՈՆԱԳԱՂԹԸ ԸՍՏ  
ԱՆՏՈՒԱՆ ԴԸ ԳՈՒՎԵԱՅԻ<sup>161</sup>

### Գիրք III

**Որտեղ պատմվում է հայերի գերության և արտագաղթի մասին և այն մասին, թե ինչպիսի աշխատանքներ են ծավալվել Ավգուստինյան ս. Հայրերի կողմից՝ նրանց հռոմեական եկեղեցուն հնազանդեցնելու համար:**

### Գլուխ I

**Որտեղ պատմվում է, թե ովքեր են հայերը և թե որքան են տուժել նրանք այդ պատերազմի ընթացքում**

Այստեղ նպատակահարմար է խոսել հայերի տանջանքների մասին, որ նրանք կրեցին Պարսկաստանի թագավորի և Մեծ Սուլթանի միջև տեղի ունեցած պատերազմի հետևանքով, ինչպես նաև նրանց բռնագաղթի մասին: Սա կարևոր է այն իմաստով, որ բոլորին պարզ դառնա, թե ինչպիսի դժբախտություններ են ընկել այս տանջված ու հալածված խեղճ ազգի գլխին: Ես սա ասում եմ այն մտքով, որ կլինեն մարդիկ, որոնք կարդալով իմ այս գրածը, երևի կխղճահարվեն ու կմտածեն օգնության ձեռք մեկնել կամ սփոփանքի միջոց գտնել այդ ժողովրդի ցավը թեթևացնելու համար, կամ էլ գոնե Աստծո ողորմածությանը դիմել, որպեսզի նա այդ ազգի մարդկանց տա ինչպես ժամանակավոր կորով, այնպես էլ Երկնայինի նկատմամբ հոգևոր հույս ու հավատ, որոնք ներկայումս բացակայում են նրանց մոտ, սակայն նրանք դրա կարիքը մեծապես զգում են: Ես նաև հուսով եմ, որ եկեղեցու բազմաթիվ բարձրաստիճան հոգևորականներ ժամանակ ու միջոցներ կգտնեն նման միջոցառում

<sup>161</sup> A. de Gouvea. Relation des guerres et victoires obtenues par le roy de perse Cha Abbas contre les empereurs de Turquie Mahomet et Ahmet son fils. Rouen, 1646, pp. 341-362.

ձեռնարկելու համար՝ համոզված եմ, քանի որ Եսայի մարգարեն 18-րդ գլխում այսպես է ասում. «զի երթիցեն հրեշտակք երագունք յազգ հպարտացեալ, յազգ օտար և ի չար. զի ոչ եւս ոք իցէ քան զնա անդր, յազգ անյոյս և ի կոխեալ» (Եսայի, ԺԸ, 2-3): Ավետարանի այն քահանաները, որոնց մասին խոսում ենք, հրեշտակներ են երկրի վրա, և մարգարեն նրանց հետ է խոսում, ուստի և դժվար չէ հասկանալ, որ նրանք Սուրբ Հոգու կողմից են ուղարկված: Եվ մենք այստեղ գործ ունենք այնպիսի մի ազգի հետ, որն ապրում է իր հնագույն հողի վրա, իր իսկ տան մեջ, ու ահա հենց այնտեղից է, որ նա բռնի ուժով ու հարկադրաբար տեղահան է արվում Պարսկաստանի թագավորի կողմից, ինչպես նաև նրանց կողմից, ովքեր նրանց շարունակաբար հալածել են այնպիսի մեծ բավականությամբ ու այնպիսի կատաղությանմբ, որ նրանք ստիպված են եղել և այսօր էլ ստիպված են հեռանալ այն վայրերից, որտեղ իրենք ծնվել ու մեծացել են, լքել այն եկեղեցիները, որտեղ իրենց նախնիներն են թաղված, տները, որոնք իրենց իսկ ձեռքերով են կառուցված, իրենց ձեռքով տնկված կանաչապատ այգիները, պապերից ստացած ժառանգությունը, մի խոսքով այն ամենն, ինչ նրանց ուրախություն է պատճառում և հաճելի հիշատակներ է արթնացնում: Եվ այս բոլորից հրաժարվելու համար, ընդհամենը երկու օր ժամանակ է տրվում: Եվ եթե մենք փնտրում ենք բզկտված ու չափից ավելի չարչարված մի ազգ, ահա նա, այդ ազգը, որը երբ դեռ թուրքերի վասալն էր, նրան վճարում էր բոլոր տեսակի հարկերը, ավելին, պատերազմի ժամանակ տալիս էր իր զավակներին (այդպես էր կարգը): Գտնվելով Պարսկաստանի թագավորի իշխանության տակ, ոչ մի տեսակի ապահովության մասին խոսք լինել չէր կարող, եթե անշուշտ Աստծո կողմից որևէ օգնություն չընտրվեր նրանց: Եթե թեկուզ հնարավոր լինի հօգուտ այս խեղճ ու թշվառ ազգի միջամտել այդ ահարկու ու դաժան ժողովուրդների մոտ, այնուամենայնիվ դրա իրագործումը դժվարությունների հետ է կապված, քանի որ այդ ազգն իր մի կողմում ունի թուրքին, իսկ մյուս կողմում՝ պարսիկին, կան նաև

թաթարներ ու արաբներ որոնց կողոպուտներն ու հափշտակումները տևական բնույթ են կրում: Իսկ նրանց (հայերի) մոտ գնալու համար հարկավոր է անցնել այդ ազգերի միջով: Ուստի պետք է իմանալ, թե նրանցից ո՞ր մեկն է առավել դաժանը (չնայած բոլորն էլ այդպիսին են): Սակայն ամենադաժանները նրանք են, ովքեր նրանց հանդեպ բարեհամբույր վերաբերմունք ցույց տալով, հետապնում են մի գլխավոր նպատակ՝ նրանց ներգրավել իրենց աղանդի մեջ: Դեռ ավելին, մարգարեն նրանց ասում է, որ դա Expectantem et conculcatam (աչքի ընկած ու ոտնահարված) ազգ է: Եթե նույնիսկ թշվառ մարդը մի փոքր հույսով է ապրում, այս խեղճ ժողովուրդը այդ փոքր հույսն էլ չունի: Նրանց համար լավատեսական հույսն այնքան հեռու է, որ դրա մասին նույնիսկ չեն էլ ուզում մտածել: Նրանք իրենց հույսը դնում են միայն որևէ քրիստոնյա թագավորի վրա, որը կգա և մահմեդականներին կպատժի: Նրանց այդպես է պատգամել Ս. Գրիգոր Լուսավորիչը, որին «հայերի հայր» են անվանել: Եվ որպեսզի ցույց տամ, թե հայը որքան է արհամարհված և ոտնահարված, պետք է նաև ավելացնեմ, որ մահմեդականները գոհանում են նրանց լոկ «հայ» անվանելով, բայց դա անում են արհամարհանքով, հաշվի չառնելով այն իրողությունը, որ դա իսկապես նրանց ազգի անվանումն է: Նրանք (մահմեդականները) ավելի շահագրգռված են հավատափոխ անել մի օտարի, քան հային, որովհետև օտարներին հավատափոխ անելը բավական դժվար է, իսկ հային մահմեդական դարձնելը իրենց համար այդքան էլ հետաքրքիր չէ: Թե գետերի հուններից դուրս գալը որքան է վնաս հասցրել այդ երկրին, դա հեշտ է պատկերացնել նրանց, ովքեր գիտեն, թե Հայաստանի համար ինչ նշանակություն ունի թուրքերի ու պարսիկների միջև գտնվելը, քանի որ այդ երկու երկրների արքաների ընդհարումների վայրը սովորաբար Մեծ Հայքն է եղել: Եվ քանզի խոշոր մարտերը տեղի են ունեցել այն երկրում և այն երկրի համար, ուստի դժվար չէ պատկերացնել, թե քանի՛ քանի անգամներ է ավերվել այն, իսկ վերջին անգամ

այդ նույն բախտին է արժանացել Պարկաստանի թագավորի կողմից:

Վերադառնալով մեր պատմությանը, պետք է ասենք, որ Հայաստանը երկու բաժանում ունի՝ Մեծ և Փոքր: Մի կողմ թողնելով Փոքրը, որի մասին տվյալ պարագայում ոչինչ չունենք ասելու, կպատմենք Մեծի մասին: Որոշ աղբյուրների համաձայն նա իր անունը վերցրել է Արմենուս բառից (Յասոնի բարեկամը): Պարսկերեն նրան ասում են Արարատ: Լորենս Անանիացին, ժան Բոտերոն, Անտուան դը Յերերան Հայաստան նահանգին տալիս են Թուրքոմանիա անունը, չնայած որք Ասիայում ոչ մի նահանգ չես գտնի, որ այդպես կոչվի, եվ չնայած այնտեղ դեռևս որոշ թվով թուրքոմաններ կան: ...

Այդ ամբողջ նահանգը նվաճվեց Մեդիայի հետ միաժամանակ: Այդ ժամանակ Պարսկաստանում թագավորում էր Մեհմեդ Խուդաբանդան (Colabanda), ներկայումս իշխող Շահ Աբբասի հայրը: Այս ժողովուրդը անընդհատ հալածանքների ու տանջանքների է ենթարկվել այդ երկրներում (Թուրքիա և Պարսկաստան) իշխող տերերի՝ մեկը մյուսին փոխարինելու ու նրանց միջև տեղի ունեցող պատերազմների պատճառով: Թուրքերն իրենց դաժանությամբ մեծապես ավելացրել էին գանձվող հարկերը, որի պատճառով էլ հայերը նախընտրում էին ավելի մեղմ իշխանություն վարող պարսիկների ազդեցության ներքո գտնվելը: Սակայն այդ խեղճերին շատ քիչ է պատահել իրենց ցանկությունն իրականացած տեսնել: Ընդհակառակը հաճախ է պատահել, որ փոխանակ լավանալու, նրանց վիճակն ավելի է վատացել, և այդ մարդիկ մշտապես նվաճված են եղել ու գերեվարված:

Հազիվ հայերը մի քիչ շունչ էին քաշում պատերազմներից ու սկսում վերականգնել թուրքերի կողմից ավերված իրենց քաղաքներն ու տները, երբ Պարսկաստանի թագավորի խելքին փչում էր վերստին ձեռք բերել իր նախնիների կորցրածը: Եվ քանի որ կորուստների հիմնական մասը գտնվում էր Հայաստանում, ուստի և Մեդիան իր մայրաքաղաք Թավրիզով (Tanaï)

գրավելուց անմիջապես հետո նա ձեռնարկեց հաջորդ արշավանքը: Եւ չնայած հանձնվող քաղաքներն ավերելու ու կողոպուտն արգիլելու մասին հրամանի առկայությանը, ինչպես պատահել է Ջուլֆայում (Yulfai), որտեղ բնակիչներն այնտեղ ապրող շատ քիչ թվով թուրքերին սպանել ու մարմինների մնացորդները ցցերի վրա խրելով գնացել էին թագավորին դիմավորելու, այստեղ, սակայն, չկարողացան նույն ձևով վարվել, ինչպես Ջուլֆայում կամ անկարողության պատճառով, կամ այնտեղ գտնվող թուրքական գումարտակի ներկայությունից վախեցած, կամ էլ պարզապես չցանկանալով նույնանման արի կամեցողությունն ցուցաբերել թագավորի հանդեպ, ինչպես դա արվել է Ջուլֆայում, ուստի և դա շարժեց նրա (թագավորի) գայրույթը և բանակի կողմից իրագործվեցին այնպիսի ավերածություններ, դաժանություններ ու կոտորածներ, որ այս նահանգի խեղճ բնակիչները զրկվեցին իրենց որչ ունեցվածքից: Աչքի ընկնող և մարդաշատ քսան քաղաքներ անմարդկայնորեն ամբողջովին կողոպտվեցին, չհաշված այն փոքր քաղաքներն ու գյուղերը, որտեղ ևս մեծ թվով բնակչություն կար: Միայն Երևանի տարածքի վրա ապրում էր հազար հինգ հարյուր մարդ, իսկ մնացածներում չորս կամ հինգ հարյուր բնակիչ: Գլխավոր քաղաքներն էին Երևանը (Eruan), Նախիջևանը (Nachivan), Շարուրը (Charur) և Ագուլիսը (Glis):

Այս քաղաքները կողոպտվեցին ու ավերվեցին, եկեղեցիները սրբապղծվեցին և վերածվեցին ախոռների, սրբապատկերները տեղերից հանվեցին ու կրակի մատնվեցին, Et sanctum carum conculcatum (հոգևոր անգնահատելի սրբությունների ոտնահարում): Սրբություններն արժանանում էին վատթարագույն վերաբերմունքի: Մահմեդականը Սուրբ Նշխարը ձեռքին ու ձին հեծած, վազում ու բարձրաձայն գոչում էր՝ ահավասիկ քրիստոնյաների Աստվածը: Այստեղից ինձ համար պարզ է դառնում, որ մեր Տերը արդար մարդկանց հետ բանտ չի մտնում, ինչպես նա արեց Հովսեփի դեպքում, այլ նաև մեծ մեղքեր գործած հայերի հետ: Ես այսպես եմ մտածում, ո-

րովհետև նկատել եմ, որ վերջիններս ավելի քիչ են ազդվում իրենց հասցված կրոնական վիրավորանքներից, քան անձնական բնույթի վիրավորանքներից:

Ուստի և մի կողմ թողնելով այն բոլոր վիրավորանքները, որոնք հասցվեցին եկեղեցիներին ու այլ սրբությունների և խոստելով յուրաքանչյուր անհատին հասցված վնասների մասին, մենք պետք է խոստովանենք, որ շատ երկար ժամանակ տևած կողոպտներն այդ խեղճերին զրկեցին նույնիսկ իրենց մարմինները ծածկող հագուստներից: Թալանջիները նրանց վրա թողնում էին միայն այն՝ ինչ անարժեք էր համարվում: Այդ խեղճերը ոչինչ չէին կարող թաքցնել, քանի որ սուրը ձեռքներին նրանք սպառնում էին դաժանորեն սպանել խեղճ կանանց, եթե վերջիններս չխոստովանեին իրենց թաքցրած արժեքների տեղերը: Նույն ձևով էին վարվում նաև գյուղերում: Հարյուրից ոչ պակաս խմբերով նրանք գնում էին գյուղերը կողոպտելու և անասելի վնասներ էին հասցնում խեղճ ու թշվառ ժողովրդին:

Ամեն ինչ կողոպտելուց հետո նրանք ստրկացնում էին ինչպես արական, այնպես էլ իգական սեռի երեխաներին՝ կամ նրանց ծառայեցնելու համար, կամ էլ վաճառելու նպատակով: Սրանից հետո հերթը հասնում էր երիտասարդ կանանց ու աղջիկներին, որոնց գերեվարում էին ու վայրենաբար իրենց զգալի արանների պահանջը ազահորեն բավարարելուց հետո կա՛մ վաճառում էին, կա՛մ տանում հանրատները, որտեղ նրանց միջոցով փող էին վաստակում: Նման ձևով ստրկացած կանանց ու աղջիկների թիվը, ըստ որոշ վկայությունների, հարյուր հազարից ավելի էր: Եւ իսկապես, եթե նկատի ունենանք, որ յուրաքանչյուր բնակավայրից առնվազն տասը հոգի են վերցնում (և սա նվազագույնն էր), այդ թիվն անպայման ապահովված կլիներ, քանի որ այս նահանգում քաղաքները, գյուղաքաղաքներն ու գյուղերը մեծ թիվ էին կազմում: Սա սրտաճմլիկ մի տեսարան է, որը կարող է հուզել ամենաքարսիրտ մարդուն անգամ, երբ նա տեսնի, թե ինչպես չորս զինվոր մտնում են տուն, ամբողջ ունեցվածքը թալանելուց հետո իրար մեջ բաժանում են երեխաներին,

